

« Խօսք » եւ « լոյս » երկու համանման բառեր են նախնական սրբազան լեզուին մէջ : Եւ առանց պատճառի չէ այդ : Լոյսը կերպով մը բնութեան խօսքն է : Եւ խօսքն ալ մտքին լոյսն է : Տիեզերքը մտիկ կ'ընէ եւ կը պատասխանէ : Յախտնախտն խօսակցումիւն մը կ'անցնի բնութեան եւ հոգիին միջեւ : Ե՞նէ հոգին չմարգամներ, չլուսաւորեր ինչ որ միւսը կ'ըսէ, այդ չհասկցուած մտին բնութիւնը չեկրծի պէս պիտի ըլլար :

Ժ. ՄԻՇԼԷ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

«Տիգրան Երկաթ»ը	ԱՐՇԱԿ ԶՊԱՆԵԱՆ
Հայգիրք — Ծաղիկներու քունը, — Հոգեգէշը	ՎԱՀՐԱՄ ՍՎԱՃԵԱՆ
Կոյրերը	ՏԵՐՎԻՇ
Գերման քաղաքականութիւնը Տաճկաստանում եւ նորա նշանակութիւնը Հայերի համար	Գ. ՄԵԼԻԻՔ-ԿԱՐԱԳԷՕԶԵԱՆ
Եաշմաքը	ԶԱՊԷԼ ԶՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ
Մահերգ	ԱՏՈՄ ԵԱՐՃԱՆԵԱՆ
Պ. Գրիգոր Զանչեան	Գ. ՄԵԼԻԻՔ-ԿԱՐԱԳԷՕԶԵԱՆ
Գէօթէ	ԱՐԱՄ ԶԱՐԸԳ
Մեր դրացիները — Եզրտին	ԱՐՄԷՆ
Էսկաբ Շահին	
Վարդ եւ Սոխակ	Զ. Մ. ԽՕՃԵՆՑ
Պ. Պենլեան ի Բարբիզ	
Պատրիարքարանը	
Հայերը թուրք թատրոնին մէջ	
Գիւղը	Թարգմ. Ա. ՄԱՏՈՒՐԵԱՆ
Հայկական խնդիրը Ֆրանսայի մէջ	
«Տիգրան Երկաթ»ի գործերը	
ՅԼԸԳ յօդուածին պատմութիւնը	Ա. ԶՊԱՆԵԱՆ
Պատգամաւորի մը Յուշատետրէն	ԱՏԵՓԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ
Մահմուտ փաշայի փախուստը	
Իմ բաժակահատոս	Ա. Զ.
Ligue des droits de l'homme եւ Հայկական խնդիրը	
Սուլթանին դատը	
«Անի» ընկերութիւնը	
Գրօչակեան դրութիւնը	Ա. Զ.
Թրանսփալ եւ Անգլիա	
Հանգանակութիւն հայ բանտարկեալներուն համար	

ԱՆԱՀԻՏԻ այս թիւը (1—2) կը բաղկանայ 48 էջէ, երրորդ թիւը, որ շուտով պիտի երեւայ, նմանապէս 48 էջէ պիտի բաղկանայ :

Գրասէր մը նուիրեց մէկ տարեկան ԱՆԱՀԻՏ ՊԵՐԼԵՆԻ Հայ Ուսանողաց Միութեան գրադարանին :

ԱՆԱԾԻՏ

ՀԱՆՊԵՍ ԱՄՍԵԱՅ

ԱԶԳԱՑԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՆՈՅՆՄԲԵՐ—ԴԵԿՏԵՄԲԵՐ 1899

ԹԻԻ 1—2

«ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹ»Ը

«Տիգրան Երկաթ»ին մանուկան լուրը, զոր այսօր, յանկարծ, Միր-Երօ բարեկամիս մէկ կակծալից երկտողէն իմացայ, անասելի տըրամութեամբ մը սիրաս ճմլեց:

Երկար ատենէ ի վեր գիտէինք որ այդ խեղճ սիրուն տղան, իր անողոք հիւանդութեան անդառնալի վճիռովը, գատապարտուած էր այս վաղաժամ անհետացումին: Բայց հիմա, մեր ամենուս վախին բիրտ ու վերջնական այս իրականացմանն առջեւ, ինձի տաժանելի կը թուի, եւ գրեթէ անհնարին, հաւատալ թէ իրօք առյաւէտ քայքայուած է նշխարն ու շնորհալի այն էակը որ «Երկաթ»ն էր:

Հայոց մէջ քիչեր ճանչցած են զինքը. մեր հասարակութեան ամենամեծ մասը իր մանուկանը յարուցանելիք աղմուկէն պիտի իմանան այդ անունը, որ հայ ցեղին ամենէն աղուոր անուններուն շարքին մէջ անցնելու սահմանուած է: Տոյցն ու ժխորը ատող, բոլոր թատերական հանդիսաւորութիւններէն խուսափող, ինքնամիտի տոհմիկ մըն էր «Երկաթ»ը: Իր ծայրայեղօրէն փափուկ խորխորութիւնը, ուր ոչինչ կար գոռող կամ անձնամուղ, զինքը մինչտ մղեց ազնուական ստուերի մը մէջ փակուած մնալու, եւ—քաղաքական պատճառներալ խառնուածքի բնական արդիւնք եղող այդ մեկուսականութիւնը շեշտելով, — այդ մեծ տաղանդը, այդ շատ ազնիւ ու շատ մաքուր նկարագիրը ամբողջ ազգային-գրական գործունէութիւն մը ունեցաւ, կարճատեւ բայց բարձրօրէն գեղեցիկ ու տեւական, եւ սակայն մինչեւ վերջին րոպէն հայ հասարակութեան համար գրեթէ անծանօթ մը մնաց, որուն անունը մտերիմներու

շատ նեղ շրջանակի մը մէջ միայն կը վայելէր յարգանքը, խանդաղատանքը եւ հիացումը որուն արժանի էր:

Պոլսոյ «Հայրենիք»ին մէջ օր մը փոքրիկ վառվռուն յօդուած մը աչքիս զարկաւ, բարակ ու ցայտուցիկ ոճով մը. յօդուածը ստորագրուած էր Միր-Կարօ ստանունով: Այդ ստանունը երկու մտքերու ճիգը կը միացնէր. քիչ յետոյ, երկու անունները զատուեցան եւ իրենց ուրոյն կեանքը ստացան. մին եղաւ Միր-Երօն, աշխոյժ ու ասպետողի վիպողը, զոր «Անահիտ»ին թերթողները կը ճանչնան, եւ միւսը՝ «Կարապետ»ը, որ յետոյ իր Ֆրանսերէն հրատարակութեանց մէջ զարձաւ «Տիգրան Երկաթ» («Երկաթ»ին իրական անունն էր Կարապետ Պիլէգիբճի): Մինչեւ այդ թուականը, Պիլէգիբճի հայկական ո եւ է շրջանակի մէջ գործունէութիւն չէր ունեցած. հայ-կաթոլիկ ծանօթ ընտանիքի մը զաւակ, Ֆրանսայի մէջ շատ կանոնաւոր ուսում ստացած եւ բարիգեան մէկ քանի թերթերու արդէն աշխատակցած, Պիլէգիբճի հայերէն հազիւ կը հասկնար եւ չէր կրնար խօսիլ. այդ ախլեթանթ աշխարհաքաղաքացին մէկէն կերպարանափոխուեցաւ երբ «Հայրենիք»ի գրական-ազգային խումբին հետ շփման մտաւ, եւ երբ մանաւանդ «Հայկական խնդիրը», Սասունի դէպքին բորբոքմամբը, յառաջ բերաւ այն հաւմաշխարհային յուզումը, որուն հանդէպ «Երկաթ»ին պէս հողի մը անտարբեր չէր կրնար մնալ: Իր առաջնորդը, իր հայրենի գասատուն եւ իր պիտաւոր գրդիչը, Միր-Երօն էր եղած, որ մնաց մինչեւ վերջին վայրկեանը անոր աշխատակիցը, եւ սրտակիցը: Պիլէգիբճի, զգալով իր հնչուն էութեանը մէջ յանկարծական զարթումը ցաւով ու պայքարով հարուստ ցեղի մը զարաւոր առհաւուրութիւններուն, մէկ հարուածով կերպարանափոխուեցաւ ու

եղաւ Հայ մը , առան անգամ աւելի Հայ քան սովորական ո եւ է Հայ , որովհետեւ «ուզեղով» ինքզինքը Հայ կը զգար ու կամքի որոշ ճիգով մը իր կեանքը կ'ուզէր Հայ դարձնել : Դաստիարակութեան վրայ յօդուածներու շարքը զոր «Հայրենիք»ին մէջ հրատարակեց «Կարապետ» ստորագրութեամբ (Ֆրանսերէն գրուած յօդուածներ էին Միր-Յրօի ձեռքով հայերէնի թարգմանուած) մեզի յայտնեցին եւրոպական միտք մը , («եւրոպական» բառին ամենէն նուազ պատուելիական , ամենէն ներքին ու բարձր առումովը) վերջին ծայր յստակ , գիտակից ու մաքուր . եւ ոճը , ժուժկալ ու վայելուչ , նորութիւն մը եղաւ (քիչերէ գնահատուած) մեր պոետա զարգամուտութեամբ խճողուած ընթացիկ գրականութեանը մէջ :

Պոլսոյ առաջին ցոյցէն քիչ առաջ , Բարիկի Revue des Revues հանդէսին մէջ , — այնպիսի շրջանի մը ուր ֆրանսական մամուլը անտարբեր կամ նոյն իսկ հակակիր էր Հայոց խընդրոյն , — երեւցաւ երկայն շարք մը հայկական հայրենասիրական բանաստեղծութիւններու , «Տիգրան Երկաթ»ի թարգմանութեամբ : Պիւլէզիքճին էր որ այդ գեղեցիկ փորձովը «Տիգրան Երկաթ»ը կը գտնար , ինչ որ պիտի շարունակէր ըլլալ այլեւս , ինչ որ պիտի մնայ մեր պատմութեան մէջ : ԳՃի ջարդերէն յետոյ , սիւնոյն Revueին մէջ «Երկաթ» կը հրատարակէր հայ գրականութեան վրայ ընդարձակ յօդուած մը , ուր ոճը՝ զերծ չըլլալով հանդերձ մանրամասնութեան թերութիւններէ՝ «գաղափարի գրականութեան» առողջ շնորհն ունէր , եւ ուր մտածումը , հասուն եւ ինքնատիպ հոգիի մը գրոշմը կը կրէր : «Երկաթ» շատ Լաւ ի վեր հանած էր Հայ ժողովրդին նկարագիրը :

«Զինուորներու եւ վաճառականներու ժողովուրդ մը , ահա ինչ որ Արարատի սարահարթը Հայերը դարձուց : . . . Ինքնիշխան եկեղեցի մը որ զիրենք անջատեց Բիւզանդիոնէն ու Պարսկաստանէն , իրենց ընտանեկան կեանքին խտտաբարոյութիւնը , իրենց հագուստները , ճարտարապետութիւնը , բաղաձայններով խճոցողուած լեզուն , իրենց երգերն ու հեքիաթները որ մարդոց հնադոյններն ու ազնուագոյններն ըլլալու հպարտութիւնը կուտային իրենց , նկարագիր մը կազմեցին անոնց , որ երբեմն խաթարուեցաւ քաղաքական անկախութեան կորուստովը , բայց երբեք չջնջուեցաւ : . . . Զինուորներ ու վաճառականներ , Հայերը իրականը կը նախընտրեն երեւակայականէն : Ամէն բանէ առաջ կ'ուզեն ապրիլ : Բարբարոսներով պաշարուած՝ Արարատին չորս կողմէն , ուր կեանքը իրենց կը գծուարանայ միշտ՝ ձիւնի մըր-

րիկներէն , գետի յորդումներէն եւ հրաբխային յանկարծական ցնցումներէն , իրենք իրենց վրայ կը ծալուին եւ իրենց բազուկներուն բոլոր ուժովը պատեր կը բարձրացնեն ու ինքզինքնին կը պաշտպանեն : Օտարութեան մէջ տարտղնած , կը ստիպուին , ապրելու համար , նկարագիրներու յաղթել , բարքերու դիմադրել , յաճախ կ'ընէր ու ստորնանալ ստրուկի պայմաններուն իջնելով : Ուր ալ գտնուին , իրենց երեւակայութիւնը կուրի մարդուն սովորական եղող զգայութիւնները իրենց կ'ընծայէ : Իրենց ճարտարապետութեանը գլխաւոր մոթիֆը սրածայր տանիքով խոշոր բոլորչի աշտարակ մըն է , խորհրդանշան դիմադրողութեան : Գրականութեան մէջ , գրեթէ տարամերժօրէն , մշակած են պատմութիւնը , որ , առանց գուրս ելլելու իրականութեան սահմանէն , կը պահպանէ եւ կ'անմահացնէ սխրագործութիւնները Քաջերուն , անոնց որ սուր ի ձեռին զէպ ի մահ կ'ընթանան : »

Եւ իր «Թեզ»ին հաւատարիմ , «Երկաթ» Հայոց արդի գրականութեան մէջ ամենէն աւելի կը պանծացնէր Վենետիկ մեծ Մխիթարեանները , որոնք Հայուն անցեալը վերակենդանացուցին եւ նալբանդեանը , Արծրունին , Բաֆֆին , Վաճառֆաթիպան , որ «Կոռուղ» Հայը վերանորոգեցին : Այս յօդուածը , ամենէն ազնիւ ու ամենէն խրոխտ էջերէն մէկը զոր Հայ մը գրած ըլլայ իր ցեղին վրայ , յղացուած ու շարադրուած էր Պոլսոյ արիւնազանգ մթնոլորտին մէջ , վտանգի ու տենդի ամենէն մոայլ օրերուն :

«Հայաստանը , կ'ըսէր «Երկաթ» իր ուսումնասիրութիւնը նկարակցեցելով — եւ այդ նկարակցութիւնը , հիմա , մեռելի մը բերնէն գալով , յուզիչ հեղինակութիւն մը կը ստանայ , —

«Հայաստանը աւերեցաւ կոտորածներով որոնց քով այլ եւս աննշան կը դառնայ Սասունի ջարդը , եւ նիւթական կորուստներով , զոր քսան տարուան շարաշար աշխատութեամբ հազիւ կարելի պիտի ըլլայ դարմանել : Զիւնը ամիսներով պիտի ծածկէ մեռածներն ու ողջերը : Այս ժամը մեր պատմութեան ամենէն անգուժ եւ ամենէն վճռական ժամերէն մէկն է : Մենք մեր վրայ ամիոփուի'նք : Զիրար ա'լ աւելի սիրելով , իրարու հետ սերտ գրկապնդուելով , մեզ կրօնքով պառակտողներէն զերծանելով , մենք մեզի մեր բոլոր սխալները խոստովանելով , Եւրոպայի բոլոր գաղափարի շարժումներուն ուշադիր մնալով եւ մեզ չըջապատող բարբարոսներուն՝ հոգին խորազննելով է որ , քանի՛ մեր շուրջը վրտանդները բազմապատկուին , ուժը պիտի ստանանք մեր մտքովն անոնց տիրապետելու եւ օր մըն ալ մեր բազուկովը պանոնք մէկգի վանելու : »

Պանքային ցոյցէն յետոյ, Պոլսէն խռոնամբ
 բոխ վտարուող Հայութեան այլքին մէջ
 «Երկաթ»ն ալ քշուեցաւ տարուեցաւ, ինկաւ Ա.
 թէնք: Իր տխեղ թոքերը, այդ տագնապի կեան-
 քին մէջ մեծապէս տկարացած, սկսած էին այն-
 տեղ արգէն զինքը տառապեցնել: Նիհար,
 ածղոյն, հազը կուրծքին խորը, «Երկաթ»
 չկասեցաւ իր գործին մէջ: Ուզեց Հելլենու-
 թեան ոստանին մէջ պանծացնել Հայ Հոգիին
 կորովը: Անոնց համար որոնք վաղը պիտի
 ուսումնասիրեն «Երկաթ»ին խառնուածքը՝ իր
 գրական հակիրճ բայց թանկագին արտադրու-
 թեանը մէջ, «Երկաթ»ը պիտի երեւայ իբրեւ
 ամենէն հեղինակ Հայը զոր ունեցած ենք: Խորեւ-
 նացիէն ու Բագրատունիէն ի վեր, ու նոյն իսկ
 աւելի Հելլեն քան անոնք. մինէ ոչ ոք իրեն
 չափ խորին ու բնական կերպով ըմբռնած է
 յունական հանդարտ ու գաշնակաւոր գեղեց-
 կութիւնը, որ ուրիշ բան չէր բայց եթէ կու-
 ըովը՝ շնորհին մէջ, Ու ոչ ոք իրմէ աւելի
 պատշաճ, իրմէ աւելի կատարեալ կերպով պիտի
 կարենար բացատրել Սոփոկլի եւ Պինդարի հայ-
 րենիքին մէջ՝ ուրոյն վեհութիւնը արարատե-
 եան բարձունքին մկանուտ ու յամառ զաւկնե-
 րուն հոգիին: Ա.թէնացիներուն առջեւ «Երկաթ»
 արտասանեց նշանաւոր ատենաբանութիւն մը,
 ուր Հելլենին ու Հայուն զուգակշիռը կը ներ-
 կայացնէր, ամենամեծ «Թաքթ»ով, թափան-
 ցողութեամբ ու ճարտարութեամբ (եւ պզտիկ
 ճարտարութիւն մը չէր որ հարկաւոր էր ան-
 հուն ու անբաղդատելի Հելլենին քով Հայուն
 եթէ ոչ հաւասար գոնէ իր տարբերութեանը
 մէջ համարժէք զիրք մը եւ նշանակութիւն մը
 տալ կարենալու համար): Իր ոճը, հանդարտ
 բարակ ժպիտով մը լուսաւորուած, անշուշտ
 հաճոյք պատճառած էր Պլատոնին մեծ ստուե-
 րին՝ ի լուր այս նոր Պրոյերեսիտին զոր ձեռնոտ
 խոփո լեռներուն ցեղը կը զրկէր մանիշակազեղ
 երգեցիկ բլուրներուն ժողովրդին:

Ա.թէնքէն Բարիզ անցաւ «Երկաթ»ը: Ու այս-
 տեղ է որ զինքը անձնապէս ճանչնալու առիթ
 ունեցայ: Օր մը, Միւր-Երօն զիս տարաւ ներ-
 կայացնել իրեն՝ Ռիւ Բամպոնի պանդոկին
 մէջ, ուր կը բնակէր: Իրեն հետ ունեցած
 այդ առաջին տեսակցութիւնս երբեք պիտի
 չմոռնամ: Քիչ էակ տեսած եմ, որ այդ «կեն-
 դանի պոնարեղէն»ի տպաւորութիւնը թողած
 ըլլայ վրաս: Նրբահասակ ու բարեձեւ երիտա-
 սարգ մըն էր «Երկաթ»ը. ազնիւ սաթի գեղ-
 նութեամբ զէմքին վրայ, որ՝ արգէն ծիւրած՝
 երիտասարդ ուրուականի մը ձեւը կուտար
 իրեն, վճիռ աշուրները շափիւղայ ժպիտ մը կը
 շողացնէին, ներուժ կեանքով մը առլցուած.
 ու բոլոր շարժումները, ճայնին հնչիւնը, բա-

յատրութիւնները, զէմքին գծերուն փափուկ
 խաղը, կը յայտնէին այն հատընտիր էակներէն
 մէկը որոնք Տղեղին անկարողութիւնն ունին,
 որոնք յաւիտեական Շնորհին նախասահմա-
 նուած են: Ու ոչինչ աւելի յուզիչ էր քան
 այդ ալազուն պատանին որ զիւցազնական
 զգայնութիւնով մը կը հեւար:

Եբք թրքօ-յունական պատերազմը պայ-
 թեցաւ, «Երկաթ» մեկնեցաւ Յունաս-
 ան, իբրեւ թղթակից Քրասնական թերթի
 մը: Աւելորդ է բռել որ reporterի մը հոգին
 չէր որ կը տանէր Լէոնիդասի կիրճերուն մէջ,
 այլ տեսակ մը Պայրընեան տարփանք փառքի
 ու վտանգի: Այս բոլորը սակայն հապճեպեցին
 իր արտին աճումը: Պատերազմին աւարտումէն
 յետոյ, «Երկաթ» որոշեց այլեւս չդառնալ
 Բարիզ, որու յեղեղուկ ու խոնաւ կլիման
 իրեն վնասակար էր. իր ոգեպառ առողջութիւնը
 տարաւ Եգիպտոսի արեւին մէջ կազուրել,
 յետոյ՝ որէն իր սիրական Ա.թէնքին ճաճան-
 չաւոր գաղջութեանը մէջ եկաւ զայն հանդ-
 չեցնել: Հոռուէն, այն բոլոր լուրերովը զոր
 կ'առնէի իրմէ Միւր-Երօնի միջոցովը, կը հետե-
 ւէի, անձկութեամբ, այդ աղուոր կեանքին
 աստիճանական նուազմանը անագորոյն սուա-
 մին: Այդ բոլոր անընդհատական մարտիրո-
 սութիւնը զինքը երբեք չարգիլեց իր գործը
 շարունակելէ. Բարիզ եղած ատենը, ինչպէս
 Եգիպտոսէն ու Ա.թէնքէն, Revue des Revuesին
 զրկեց շարք մը ուսումնասիրութիւններ, ***
 ստորագրութեամբ, «Յոյն մեկենասներուն»,
 «Կրիտէի», «Ա.թէնքի շիրիմներուն» վրայ,
 ուսումնասիրութիւններ, որոնց մէջ մտածումը
 հետզհետէ աւելի հզօր ու զեղեցիկ, ձեւը
 հետզհետէ աւելի կատարեալ ու նուրբ կը դառ-
 նար. անոնց մասին խօսելով «Ժուռնալ»ին
 մէջ հրատարակուած յօդուածով մը, Մոսիս
 Պատէս «Երկաթ»ը կ'անուանէր «նշանաւոր
 գրագէտ» մը:

Հիւանդութիւնն իր ընթացքը երազեց: Ա.
 թէնքի հիւանդանոցին մէկ անկիւնը, լքուած,
 պատն երեսին, «հատնիլ»ը կ'իմանայինք «Եր-
 կաթ»ին: Չկրնալով այդ միջառորիկ տառա-
 պանքին տոկալ, բաղձաց Պոլիս դառնալ. իր
 ընտանիքին ու բարեկամներուն գորովին մէջ
 կը յուսար գտնել կազդոյրը որուն պէտքը կը
 զգար. ազգականները յաջողեցան զինքը
 Պոլիս փոխադրել. վերջին օրերը Հալքիի նո-
 ճիներուն նուազաւոր սուգին մէջ անցուց: Ու
 Պոլսէն, որուն «Սթամպուլ» ձեւը կ'ատէրայն-
 պէս ինչպէս ոչ ատած է, իր առկայժ անող-
 ջութեանը յետին բեկորները ժողվելով, վեր-
 ջին հոյակապ ձեզով մը, արտադրեց այն հրա-
 շակերտը, «Թուրքիան կրնա՞յ ապրիլ», որ եւ

րեւցաւ Revue des Revuesին մէջ, եւ որուն թարգմանութիւնը «Անահիտ»ին մէջ հրատարակել խոստացանք (խոստում զոր պիտի կատարենք ընդհուպ), զայն որակելով «խրաթափանց պատմարանի աստճնակարգ էջ մը» եւ անհունապէս ցաւելով որ պայմանները մեզի թոյլ չէին տար հեղինակն իր անունով ներբողելու: Այդ ուսումնասիրութիւնը խացուցում էր այնչափ բնաղղական որչափ խորհրդածուած առեւտրութեանը զոր այդ Հելլեն-Հայը կը զգար, իր ջղերուն ինչպէս եւ իր մտածմանը խորէն, զէպ ի թուրքը, զէպ ի մթին ներկայացուցիչը Բիրտ Ուֆին, զէպ ի Մաքի ու Գեղեցկութեան թշնամին, զէպ ի կործանիչը բեղմնաւոր, ազատ ու աղուոր կեանքին:

Մեր ցեղին արիւնին ու մտին ամենէն ազնիւ մէկ տարրն է որ կը փճանայ «Երկաթ»ին մանովը: Անոնք որ «մարդը» մօտէն ճանչցան ու պաշտեցին, պիտի չմիտթարուին այս պատմական ու անդարմանելի կորուստէն. եւ անոնք որ պիտի ճանչնան զբողէտը (որուն գործը հայերէնի թարգմանել ու հատորի մէջ ամփոփելը մեր ամենէն սրբազան պարտքերէն մէկը պիտի ըլլայ) պիտի զգան պարագը որ հայ մտաւորականութեան մէջ կը բացուի չքացումովն այդ տաղանդին, որ դեռ ա՛յնչափ գեղեցկութիւն ունէր ստեղծելու:

Հիմա ան պիտի հանդչի, — ու ալէ՛ կ է որ այդպէս ըլլայ — Պէշիթաշլեանին ու Ադամեանին քով, որոնք իր եղբայրներն են խառնուածքով ու դաստիարակութեամբ. երեքն ա՛լ զաւակ Պոլսոյ Հայութեան, ու Պոլսական կաթոլիկ Հայութեան (այսինքն Հայութեան այն հատուածին, որ, իր ամբողջութեանը մէջ ամենատխուր թերութիւններ ցոյց տուած ըլլալով հանդերձ, իր բարձունքներուն վրայ արտագրած է ամենէն նուրբ, ամենէն օգնուական հոգիները զոր Հայերը ունեցած ըլլան): Երեքն ալ՝ մինչեւ սոկոթնէրնուն ծածը Գեղեցկին սիրովը թափանցուած, եւ իրենց ազգին համար ամենէն բարձր հիացումովն ու ամենէն վեհ անձնութիւնամբը տրոփուն. ու երեքն ալ, — որպէս թէ շատ նուրբ էութիւններուն դատակնիքն ըլլար վաղահաս փշուովը, — սպասող Ախտի մը շունչին տակ, իրենց կեանքին ու տաղանդին ծաղկին մէջ՝ յամր ու ցաւազին նուազումով մը շատ կանուխ ու շատ մեղմօրէն աննիւթականացած ու անէայած:

ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ

Բարել, 13 գեկտեմբեր 1899

Լ Ա Յ Գ Ր Բ Ը

Թ

ԾԱՂԻԿՆԵՐՈՒ ՔՈՒՆԸ

Կը քողարկէ աղօտ գիշեր մ'արծաթի Մեծ բուրաստանն ուր ծաղկըներն ըսպիտակ Արդ քուն կ'ըլլան անբիծ սիրոյ լուսնին տակ, Եւ աստղերէն անհուն անուրջ կը կաթի:

Սատափեայ լոյս հովոց, սիրոյ մեղկ պարտէզ, Հող քուն կ'ըլլան խոնջ ծաղկըներն աչօք փակ Եւ կը տեսնան անդոյ երազ մ'անուշակ, Աչու ըներէն կը թափթըփի արջունք հեզ:

Ո՛հ կը տեսնան ըզքեզ, աղջիկ ամօթխած, Որ հողաթափ մարգարտազարդ եւ մանրիկ Ոտքըզ կապած՝ կ'ելլես, կուզաս՝ կոյս պարիկ, Եւ կը կանգնիս ու կը նայիս զարմացած:

Թագաւորի գունատ աղջիկ մըն է ան, Աներեւոյթ ժըպիրն աչաց օրն ի բուն. Գաղցրահոտ տան մէջ քարշ գալով կիսայթուն Ողբաձայն երգ մ'երգեց երկար ձանձրութեան:

Բայց կայծալից լոյսեր հիմայ կը հրծծեն Ու կը թըռին, անոր բոլոր կը թըռին, Եւ պարտէզէն կ'ելլէ բուրում մը խորին. Կոյս եւ բուրում զայն հափափել կը փորձեն:

Խոնջ ծաղկըներն ահա զանի կը տեսնան, Որ ճօճելով թուշն ի վար չէկ խոպոպիք, Նըւապաւոր հանդերձներով ու բորիկ Այնտեղ կանգնած է՝ տըրտմութեամբ աննըման:

Վեր կը նայի, սիրոյ խորհուրդ մ'անձանօթ կը կախարդէ քընքուշ հոգին մանկական. Վառ տեսիլքներ հիմայ կ'ելլեն ման կուզան. Կը տրոփէ գերգ թաթին տակ սիրտ զողորջոս:

Ու կը հեծէ, կը հեծեծէ սիրտն անմեղ, Աստղերն անձայն լուսաբարբառ կը խօսին, Ծաղկըներն ալ կաքաւելով միասին, Կ'ուզեն զանի պաշարել՝ հոյլ կուսագեղ:

Բայց կը ցընդի աղօտ գիշերն արծաթի. Գու երբ հող չիս, պատի՛ր աղջիկ, երբ հող չես Եւ անձկայրեաց կը կարօտին դեռ եւս քեզ՝ Ծաղկըներու քունն ալ տըրտում կը ցընդի:

Ժ

ՀՈԳԵԳԷՇ

Ա.

Բանդադուշանք մը կը լըլկէ զիս յաճախ :
Դարձած եմ ցուրտ մեռելոտի անկենդան .
Ահա մարդիկ կը պատրաստեն սեւ դաղաղ :

Կը մըմըման զիս կը տանին գերեզման :
Ո՛հ խոր գիշեր . աչիւրըս բաց՝ ի դուր տեղ
Կը փափաքիմ ժանտ արեւու մը ծագման :

Եւ վերջնագոյն անյուսու թեան մութն անկող .
Փրփու թեան հոտ մը՝ կը տարրեն զիս բոլոր :
Ու կը հըծծէ մօտըս ճըճի մը մեղմեղ :

Ա՛խ կը սկըսի զառանցել միտքըս մոլոր :
Ստեցի՛ն . չըկայ մահու անդորըր խաղաղ .
Կը դողդոջեմ , կը ըսեհոնեմ բիր խոլոս :

Բանդադուշանք մը կը լըլկէ զիս յաճախ :

Բ.

Ա՛խ անխընայ չարչարեցին զիս մարդիկ :
Կ՛ատեմ զանոնք : Կը մոլեգնիմ զայրապին :
Ի՞նչպէս կըրնամ հիմայ նընջել հանդարտիկ :

Կեղեքեցին զիս . հիւանդի մը հոգին ,
Ախորժելով ու բախու թեամբ զաղբալից ,
Չարչարեցին եւ կոպտաբար հեգնեցին :

Որչափ կըբցան՝ սուր վիճա տըւին , սուր կըսկիւն :
Կամաց կամաց ըսողաննեցին եւ ապա
Թաղեցին զիս : Ոչ ոք եղաւ կարեկից :

Ինչո՞ւ զիս հոս զըրին՝ այս վիճը հիմայ :
Ես գուրս պիտի ելլեմ : Պիտի զարհուրիք :
Թող քուս ըլլայ աշխարհ՝ Հօգիս պիտի դայ :

Ա՛խ անխընայ չարչարեցին զիս մարդիկ :

Գ.

Դեղին կատու քըստմընեցաւ խոյս տըւաւ :
Վըտիտ շընեք կը կաղկանձեն լուսնին ատկ :
Կը խանդարեն լըսու թիւնն՝ ահ , սնբաւ ցաւ :

Ամէն գիշեր զէմքըս խաղած , կապուտակ ,
Գաղքին մէջ ժուռ կուգամ , նեխած Հոգի շէկ ,
Չարհուրեցէք մերկու թիւնէս այլանդակ :

Հացէք , կանա՛յք՝ փախէք , մարդիկ , զողացէք .
Այնպէս ամէն տեղ զիս պիտի տեսնէք դուք .
Պիտի ճըչէք : Դուք զիս ըրիք թըշուաւ , հէք :

Ես ամէն տուն պիտի մըանեմ անշրշուկ .
Պիտի մը մկիք , եւ ես՝ ճիւղ մարդադաւ՝
Պիտի տանջեմ ըզձեզ : Մեռի՛ր , փո՛ւ լճ վիժուկ :

Դեղին կատու քըստմընեցաւ խոյս տըւաւ :

Դ.


Կ՛ատեմ ըզձեզ , ա՛ն իծածներ , ա՛խ կ՛ատեմ ,
Ամէն գիշեր պիտի սոսկաք , պիտի գամ՝
Պիտի ելլեմ գերեզմանէս չար , զըմխեմ :

Չեմ երկընչիր ձեր զէնքերէն անըղգամ ,
Չեմ երկընչիր ձեր գամբոներէն կատապի .
Ես պիտի գամ՝ հոգի դաժան , ժանտ , չարկամ :

Ինձի համար ըսիք՝ Մեռաւ , կը նեխի :
Բայց ո՛չ Դեռ ողջ եմ , վատե՛ր , զիս մի՛ խոտէք .
Ի՛նչուր ինձի բանաւ տըւիք դազաղին :

Մինչեւ որ զիս յօշ յօշ չընէք , ծայրատէք ,
Կառափնատէք՝ պիտի ոռնամ ձեզի դէմ .
Ամէն գիշեր պիտի սոսկաք սըրտաբեկ :

Կ՛ատեմ ըզձեզ , անիծածներ , ա՛խ կ՛ատեմ :
ՎԱՀՐԱՄ ՍՎԱՃԵԱՆ



Կ Ո Յ Ր Ե Ր Ը

Ահաւոր , խորհրդաւոր էակներն են անոնք :
Իրամիկ մարդկութիւնը արգահատանքով կը
դիտէ անոնց զանգազկոտ անոցքը կեանքին եւ
զերքէն . եւ սակայն անոնք վեհապոյն արտա-
յայտութիւնն են մարդկային զէմքին : Այդ
խարխափողները , զոր մենք պակասաւորներ կը
համարինք , թեքեւս ամենէն մօտեցածներն են
կատարելութեան . անոնք Ուրուականին կը
հասնին , Մարգարէն կ՛երգողործեն . անոնք են
որ կը տեսնեն :

Ստուերով փաթ թուած հոգիներն են անոնք :
Իրենց կեանքը գերիվեր է հասարակ կեանքե-
րէն , ինչպէս գիշերը՝ իր քօղարկեալ ան-
հունութեամբ՝ տուընջեան պոռոտ փաղփուռէն :
Ազէտքին աշնուական պսակովը ճաճանչաւո-
րուած են . եւ անոնց փակ դիմակին ետեւ
զաղտնիքին նշոյլը կը պլպլայ : Գլուխնին
բարձր , ու պարապ աշուրնին զէպի վերին
պարապը սուեռած , կ՛անցնին՝ նուիրա-

կան դանդաղութիւններով , ձեռքերնին դէպ
առաջ կարկատուն՝ կարծես օրհնելու համար :

Վար չեն նայիր . կը թուին արհամարհել վը-
տանդը . կը սահին օգին մէջէն , դէպ ի վեր , դէպ ի
հետուն , անհրեւոյթ նպատակներու ճգտելով : Չեն
տեսներ իրերը . ազատ են կեանքին մակերեսը
տեսնելու զըռանքէն . բայց դէպ ի ներս դար-
ձած նայուածքը ունին . իրերու ներսիդին կը
տեսնեն . հորիզոնէն անդին կը նային . անոր
համար անոնց դէմքը հանդարտ է եւ աշուրնին
պաղած . մեծ բաներու ականատես ըլլալու
ձեւն ունին . իրենց մութին մէջէն հսկայական
տեսիլներ նշմարելու են . չեն խնդար :

Անոնց անցքին առջեւ եւ երկիւղած յար-
գանքով կանգ կ'անեն , որպէս թէ տարօրի-
նակ քուրմերն ըլլային եղերական պատարագի
մը որ կը կատարուի ի պապիւ կաւար-Աս-
տուծոյն :

Բանաստեղծները զանոնք իբրեւ մեծագոյն
գեղարդները նկատեցին . ոմանք զանոնք
պատկերացուցին իբրեւ արհաւիրքի գէմքեր ,
ուրիշներ՝ իբրեւ ցաւի դիմակներ : Նոր ժամա-
նակներու քնարն է մանաւանդ որ այս տեսու-
ղութիւնը ունեցաւ . անմիջական վայելքնե-
րու , կարճատես դիտողութեան , սահմանափակ
մտահոգութեանց օրերու մէջ , կոյրը երեւցաւ
իբրեւ դերագոյն զրկուածը , իբրեւ ողորմելի
ազէտը : Ի ծնէ կոյրերու վրայ շքեղ գործի մը
մէջ , Միաքեան այդ ըտլոր ողբարկու երգի-
րուն խտացումն ըրած ըլլալ կը թուի երբ կը
ցուցնէ , սարսափացող առգերով , կոյրը , որ
« թանձրամած խաւարի մէջ՝ խաւարամած
ու անձարակ երեւակայութեամբ թափառա-
կան , ամէն քայլափոխի վերահաս կորու-
տեան մը վախով գլուխը կորացած , ուսերը
կծկած եւ ձեռուրները իրմէ առաջ կարկա-
ւած ու աջ ու ձախ տատանելով , անստուգու-
թեան մէջ անձանօթ եւ փախստական՝ ապա-
ւէն մը կը փնտռէ , եւ ասանկ կասկածը , վա-
րանքը , տարակուսութիւնը , տագնապն ու
արհաւիրքը իր չար ոգիներուն պէս ամէն
տեղ իրեն հետեւելով , լքուցիկ ու անզանազան
շարժմունք մը ընելու վճատութիւնը սրտին
տիրեր , զեկն ու կողմնացոյցը կորսուած եւ
մրրիկներու մէջ անպապատ սեւ գիշերի մը
տակ ծփացած նաւու մը պէս ոչ ինքզինքն
ինտոր ուղղելիքը գիտէ եւ ոչ հասնելիք նը-
պատակը : »

Այդ արհաւիրքը եւ այդ արգահատանքը
Պոէօկըլ ծայրայեղ ներուժութեամբ ար-

տայայտած է իր զարհուրելի նկարին մէջ
ուր կը ներկայացնէ Աւետարանին կոյրերը
որոնք իրար քաշելով խորխորատը կը գլորին :
Մզձաւանջային գէմքեր են , կուրութեան այ-
լազան երեւոյթներու մանրակրկիտ նշանակու-
մով , որոնք ետեւէ ետեւ դէպ ի վիճը կը խու-
ժեն , գէմքեր՝ կարմիր խոռոչաւոր աչքերով ,
կանաչորակ ուռուցիկ բերերով , կամ մեծ դա-
տարկ ակնակապիճներով , ամենքն ալ՝ ողորմ
ու միամիտ անհոգութեամբ՝ դէպ ի անդունդը
երկնցած : Այդ նկարը կոյրերու համար ար-
գահատանքին ամէնէն հզօր մէկ արտայայ-
տութիւնն է , եւ մեծագոյն սրբապղծութիւն
ներէն մէկը կուրութեան աստուածային խոր-
հրպանջանին դէմ , որովհետեւ անրկա խեղճուկ ,
գուհիկ , ծիծաղաշարժ ու զազիր ներկայացու-
ած է հոն , եւ որովհետեւ արուեստագէտը չէ
հասկցած որ այդ երազի մագնիսացած նայու-
ածքով մարդիկը շատ աւելի գեղեցիկ են քան
նոյն պատկերին խորքը գեղջուկ զայտալայ-
րին մէջ իր խոզերը խաղաղիկ արածող ապուշ
հովիւր :

Պոտլէո , որ իրերու թաքուն երեսը տեսնե-
լու ճգտող միւսք մըն էր , կոյրերու վրայ իր
հնչեակին մէջ արգահատանքին կը խառնէ
տեսակ մը հիացում , կը նկատէ կոյրերը ահ-
ուելի բայց եւ վեհաշուք :

... ֆասմեղի՝ եւ անոնք ,
խամաճիկներու նման , գրեթէ ծիծաղաշարժ ,
Ահաւոր , եղական՝ ինչպէս գիշերաշրջիկները .
իրենց մուսլ ակնագունտերը շեւ գիտեր ուր կը սե-
լեւին :
իրենց աչքերը , որոնցմէ թռած է աստուածային կայծը ,
Յրպէս թէ հեռուն նայէին , դէպ ի երկինքը ըստ ձրանան
երբեք մտրդ տեսած չէ որ դէպ ի սալաքարերը
երազկոտ կերպով հսկին իրենց ծանրացած գլուխը : »

Բայց մարդկային միտքը ամբողջանալու ու
ներքնահայեցութեան ոլորտին դառնալու վրայ
է . խորհրդին հովը նորէն անցաւ մեր յաւակ-
նոտ քաղաքակրթութեան վրայէն . անձանօթին
հիւանդութիւնը վերսկսաւ . վաղը կոյրերը նու-
րէն պիտի կանգնին պատկառանքի պատուան-
դանին վրայ որուն արժանի են : Պիտի նորէն
հասնինք խորթափանց դիտողութեանը հի-
ներուն , որոնք շատ բաներու մէջ իրաւունք
ունէին . անոնք կոյրերը աստուածացուցին .
անոնք հասկցան որ արտաքին կուրութիւնը
նշանակն է ներքին տեսողութեան . կոյրը ,
ըսին , ան է որ աչքերը դոցած է նիւթին՝ որ-
պէսզի հոգին տեսնէ . Հոմերը կոյր երեւա-
կայեցին . եւ կոյր էին՝ պատմեցին :

չատերը սիրելիաներէն որոնք ապագան կը տեսնէին : Այդ մտածմամբ՝ անշուշտ՝ զատարկ աչքեր տուին իրենց աստուածներու արձաններուն , որպէսզի անոնց մեծութիւնը խորհրդապատկերեն այդ վեհափառ պարապով ուր անհունը կրնայ սզմիլ :

Կոյրը տեսանողն է. Կոյրը ստեղծագործն է. իր փրկարար խաւարովը գոհելի արտաքնութիւնէն անջատուած , անիկա մարդոցմէ ամենէն ատակն է ինքն իսկ իր հոգիովն իր տիեզերքը ստեղծելու : Ան արեւներ կ'երեւակայէ մեր տեսածէն աւելի գեղեցիկ , ան գարուններ կը զգայ որոնց վրայ մենք դադափար չունինք . մութին մէջէն անիկա Աստուած կ'ընդհանջմարէ : Իրտնականը որ ալկանջը կը խցէ փողոցին ազմուկներուն եւ նիւթին իսկութիւնը թափանցելու կը հետապնդի , բանաստեղծը որ սա տիղմը կը մոռնայ եւ աստղերուն կը սիրահարի , հերոսը որ դադափարի մը համար մահուան գիրկը կը նետուի , ձգտողներ են զէպ ի վսեմ Կուրութիւնը . անոնք աչուրնին գոց մարդիկն են որ հետուն կը տեսնեն :

Տեսնուածին հրապոյրը , շօշափուածին փայլը , գիտցուածին քաղցրութիւնը ոչինչ են երեւակայուածին , ստեղծուածին , խորհրդաուրին գեղեցկութեանը քով : Ո՞ր ծաղիկը պիտի հաւասարի միտտիքական Վարդին որուն համար ամբողջ մարդկութիւն մը կարօտակէզ հալեցաւ : Աստղերուն ամենէն անուշները անոնք են որ անտեսանելի տիեզերքներուն մէջ կը ժպտին : Երկրի աղջիկներուն ամենէն գեղեցկին աչուրները այնչափ գեղեցիկ չեն որչափ ներքին նայուածքը կոյր աղջկանը որ իր աչուրներուն յաւիտեական սուսին մէջէն մահու չափ քաղցր ու խորին սիրով մը կը սիրէ :

Ամենէն բարձր յուզմունքներուն աստին , աչուրներն կը գոցենք : Երաժշտութեան սարսուռին տակ , սիրոյ գերագոյն գողին մէջ , կամ երբոր մեծ ցաւով մը զինովմանք , մեր կոպերը ինքնին վար կ'իջնեն , իրերը կը սքօղուն մենէ , մենք մեր հոգիին հետ մենակ կը մնանք , վայրկեան մը Կոյր կ'ըլլանք :

Ու բոլոր տիպարներուն մէջ ուր մարդկութիւնը կ'ամփոփուի ու կը պատկերամայ , ամենէն մեծը տիպարն է Իդիպոսին , որուն ալնիւ կեանքը իր պատկն ընդունեցաւ արիւնոտ խաւարին մէջ աւարտելով . անիկա իր էութեան բարձրագոյն ընդլայնմանը հասաւ երբոր ա-

չուրները փորեց , թափառողի ցուպը ձեռք առաւ ու ճամբայ ելաւ զէպ ի անձանօթ ու մոռյլ հորիզոնները : Տիպարներուն տիպարն է ան . մեծ Կոյրը . ան որ կեանքը ամբողջ ապրեցաւ . ան որ կեանքին մէջէն արդէն մահը հասկցաւ : Կոյր մուրացկանները որոնք կ'անցնին մեր ճամբաներէն , մեր բարեկենդանին մէջէն իրենց ողբը պարտցնելով , անոր զէմքին յաւիտեական շարունակութիւնն են : Անոնք կեանքին ընդերքը կը ցուցնեն մեզի . անոնք մեզի կը յիշեցնեն ինչ որ չենք գիտեր եւ ինչ որ կ'ուզենք մոռնալ . անոնք մեզի կ'ըսեն թէ մենք ամենքս քայողներն ենք , մութին մէջ , ողբին օրորովը , զէպ ի հեռաւոր հանդուանները , մինչեւ որ հասնինք վերջնական մթութեան , մինչեւ որ մանենք մահուան խաւարին մէջ , ուր թերեւս պիտի հասկնանք ինչ որ հոս չհասկցանք :

ՏԵՐՎԻՇ



ԳԵՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՏԱՃԿԱՍՏԱՆՈՒՄ (*) ԵՒ ՆՈՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ ՀԱՅՅՐԻ ՀՍՄԱՐ

Շար . (**)

Հարց է առաջ գալիս , ի՞նչ նշանակութիւն ունի Հայերի համար Գերմանիայի ներկայ տաճկական քաղաքականութիւնը : Բայց սուրանից առաջ մի ուրիշ հարց է առջանում . ունի՞ , կամ կարո՞ղ է այդ քաղաքականութիւնը առհասարակ ունենալ որ եւ է լուրջ նշանակութիւն :

Ա priori , Գերմանիայի երեւան գալը Տաճկաստանում արժանի է ուշադրութեան՝ ամենից առաջ այն պատճառով , որ արեւելեան հարցի վիճակի մէջ խառնուում է մի նոր պետութիւն : Իսկ թէ ո՞րքան նշանաւոր տարր կը հանդիսանայ Գերմանիան թրքաց դործերի յառաջացման եւ լուծմանը մէջ , այդ ցոյց կը տայ ապագան : Այժմ կարելի է միայն մի քանի թեր ու զէմ կլշտղատութիւններ բերել :

Տաճկական դործերի մէջ ներգործական միջամտութիւնը — Գերմանիայի համար բոլոր-

(*) Նախորդ յօդուածի մէջ (տես «Անահիտ» 1899 թիւ 12) «Տաճկաստան»-ի փոխարէն հարկաւոր է կարգաւ «Տաճկաստան» . նմանապէս , նոյն էջ , սիւնակ ք . : տող 24 , «Ճանաչուած»-ի փոխարէն «չճանաչուած» :

(**) Տես «Անահիտ» 1899, թիւ 12 :

րովին նոր եւ անակնկալ քայլ է : Մինչև այժմ նորա պետական քաղաքականութիւնը եւ հասարակական գիտակցութիւնը շատ հեռու էին «Արեւելեան հարցերից», եւ իշխան Բիսմարկը մինչև անգամ սկզբունքով պնդում էր, մինչև իւր վերջի չունջը, որ այդ հեռակացութիւնը պահպանուի, վախենալով թէ չափազանց լախ քաղաքականութիւնը կը թուլացնէ Գերմանիան, խառնելով նորան նուրբ եւ վասնզաւոր հարցերի ցանցին մէջ : (*) Դորա պատճառով, ինչպէս կառավարութիւնը այնպէս եւ մամուլը ստիպուեցան ամէն կերպ ջանալ՝ Վիլհելմի 1896ին սկսած տաճկական քաղաքականութիւնը ժողովրդականացնելու համար : Քաղաքականութեան այդ չափազանց սուր փոփոխումը, կասկածներ էր զարթեցնում նորա հիմնաւորութեան մասին : Այդ կասկածանքը վերջին երկու տարուայ ընթացքում, քաղաքական մամուլի ամենասիրուած հարցերից մէկն էր կազմում : Ոմանք, պախարակելով Գերմանացիներէ յանկարծական խանդավառութիւնը՝ տաճկական գործերի նկատմամբ, այսինքն Վիլհելմի քաղաքականութիւնը Պոլսում, համարեալ թէ տղայական, ցնորական էին անուանում : Ուրիշները աշխատում էին ապացուցանել, որ այդ հերկայ թրքոցերմանական յարաբերութիւնները բոլորովին համապատասխան են ժամանակի պահանջներին : Երկու կողմից էլ բերուեցան մի շարք հետաքրքիր փաստեր եւ սրամիտ դատողութիւններ : Անհամաձայնութեան պատճառը կայանում էր ի միջի այլոց եւ նորանում, որ հակառակորդները վիճաբանութեան մէջ յաճախ ինկատի էին առնում զանազան առարկաներ : Այն ժամանակ երբ կասկածամիտները հաւատացնում են որ Գերմանիան չէ կարող դեռ եւս խաղալ Պոլսում Անգղիայի կամ Ռուսաստանի դերը, այսինքն «ամենալախ քաղաքականութիւն» գործադրել, ներկայ քաղաքականութեան համամիտները պնդում են, որ Փոքր Ասիան ներկայացնում է վերին աստիճանի յարմար ասպարէզ Գերմանիայի «եւելմտական» շահերի համար : Խօսքը բոլորովին զանազան բաների մասին է, եւ զոցա վերաբերեալ կարելի է առ աժյօ այսքան նկատել :

Գիրագործութիւնը արդեօք Գերմանիայի տաճկական ամբողջ ծրագիրը, — այդ դուցէ կախուած է աւելի թուրքիայից, քան թէ Գերմանիայից : Ծերացած մարմինը ոչ մի բժշկ չէ կարող երիտասարդացնել. ինչ վերաբերում է նորա անմիջական ձգտումներին — առեւտրական, երկաթուղիական եւ (ապագային) գաղութականական — առանձին պատճառներ չկան կասկածելու նոցա իրագործման կարելիութեան վրայ, նամանաւանդ որ ամենեւին գերմանական բնաւորութեան մէջ չէ ցնորա-

(*) Բերլինի վեհաժողովը Բիսմարկի նախագահութեամբ հաղիւ թէ կարող է ընդունուիլ ինչպէս հակասութիւն այս սկզբունքի, որովհետեւ Գերմանիան այնտեղ ներգործական դեր չէր կատարում :

միտ ծրագիրներէ ետեւից ընկնել. դրական նպատակներ, սառն կշռադատութիւններ, ամենաուժեղ եռանդ եւ ամուր կամք, — ահա պարուսիական քաղաքականութեան բնաբանը : Գննենք այդ քաղաքականութեան նշանակութիւնը Հայերի համար՝ մեր ցոյց տուած երկու տեսակէտից :

Ա. Ենթադրելով որ Գերմանիայի ազդեցութիւնը թրքաց գործերի վերայ երկարատեւ եւ ներգործական կը լինի, այն ժամանակ եւս հազիւ թէ այդ ազդեցութիւնը կարողանայ որ եւ է փոփոխութիւն անել Հայերի ընդհանուր վիճակին մէջ : Այն բարենորոգումները (*) ռազմագիտական, երկրագործական եւ ելեւմտական որոնք Գերմանիոյ կառավարութիւնը մտադիր է անել Տաճկաստանի մէջ (ռազմագիտականը արդէն մասամբ եղած է), հազիւ թէ կարողանան ապահովացնել «հեռանդ մարդուն» զեռ երկարատեւ կեանք : Արդ, Պալմերստոնը, թրքասէր լինելով, նա էլ փորձառութեամբ շատ շուտ կորցրեց իր յոյսը Տաճկաց կառավարութեան վերանորոգման մասին (**): Գերմանիայի վերանորոգման ծրագրից, ամենից շատ կը յաջողուի, հասկանալի պատճառներով, երեւի ռազմագիտական վերանորոգումը, եւ այս հանդամանքը կը նպաստէ Տաճկաց հպատակ ազգերի աւելի ծանր ճնշման եւ Նլզիկի աւելի մեծ աներեսութեան՝ մեծ պետութիւնների դիմումների առաջ : Բայց այս ուժեղանալը նոյնպէս ժամանակաւոր կը լինի, որովհետեւ ինչպէս ստում է էթիէն Լամի «յալթանակը նորան աղետարեր է այնքան որքան պարտութիւնը» (***) կամ Բընանի պատկերական խօսքերով, «իսլամը ազմուկով քանդուած է» : Թուրքիայի անհետանալը անխուսափելի է : Մի բան եւս չպէտք է մոռնալ, զա որ բոլոր պետութիւնները գործում են Պոլսում թուրքիայի լուծումը ի նկատի ունենալով, թէ՛ նորա թշնամիքը եւ թէ՛ նորա բարեկամները, վերջինները չէ՞ որ պահպանում են թուրքիան . . . իրանց համար : Որքան որ մօտենում է այդ «ժառանգութեան» բաժանման օրը, այնքան աւելի պարզ են որոշում պետութիւնների շահերը այդտեղ : Արդէն այժմ Գերմանիայի ուշադրութիւնը գրաւում է Փոքր Ասիան : Մեծ Հայաստանի վերաբերմամբ նա ոչ մի պահանջ չէ անում. ընդհակառակն, ինչպէս տեսանք յօդուած իս նախորդ բաժնում, նա աշխատում է իրան հետու պահել այդ երկրից : Այս հանգամանքը ապացուցանում է գերմանական գործող

(*) Այդ վերանորոգումների մասին տուած է հառմամբ «Բնականաբար թուրքին ամէն մի բարենորոգում ստելի է . . . ուստի հարկաւոր է ստեղծել մի ինչ որ գերմանական բարեկամական dictature, որի միտքը սա է՝ «Թուշնիկ, կեր կամ մեւեր» (Asia էջ 164) :

(**) Անգղիայի պատասխանատուութիւնը Հայաստանի առաջ, Մակ կոլ, ռուսերէն թարգմանութիւնը «Հայերի գրութիւնը» ժողովածոյին մէջ, էրես 208 :

(***) «La France du Levant», Revue des deux Mondes 1899, 15 Sept., p. 80.

քաղաքագետների համոզումները որ Մեծ Հայաստանը պատմական պայմաններով վիճակում է Ռուսներին^(*)։ Փոքր Ասիան, ընդհակառակն, ամբողջութեամբ, կամ մասամբ, կարող է համարուիլ որպէս «Գերմանացիների գործունէութեան ասպարէզ»։ Սորան նպաստում են, ինչպէս նոցա ներկայ երկաթուղիները, որոնք Արշիպեղազոսը միացնում են երկրի ներքին գաւառների հետ, այնպէս էլ այդ գլոմերի մտադրումը շարունակութիւնը։ «Փոքր Ասիան, ասում է Գերմանացի Dr. Rohrbachը Naumannի «Asia» գրքի իւր քննադատութեան մէջ, «Գարգանելի հարաւային կողմերից մինչ Տիգրիսի սկիզբները, կարող ենք մենք նկատել որպէս մեր ասպազայ կալուածք»։ Ինչպէս իրաւացի ասում է այս հեղինակը, այս երկիրների գրաւումը Ռուսաստանի համար կենսական խնդիր չէ կազմում^(**), ուստի այդ պատճառով մեծ գծաւթիւններ Գերմանիայի եւ Ռուսիոյ մէջ յատկ չեն գալու։ Ուրեմն այս երկու պետութիւնները հեշտութեամբ կարող են, փոխադարձաբար, carte blanche ալ իրանց համապատասխան ասպարէզների համար։ միայն Միջագետքի հարցը, որտեղով Գերմանացիք մըտադիր են երկաթուղին անցկացնել, փոքր ինչ բարդ է։ «Times»-ի Վիեննայի թղթակիցը նըկարագրելով ինչպիսի անհանգստութեամբ Ռուսները հետեւում են գերմանական ծրագիրներին՝ Միջագետքի վերաբերեալ, գրում էր. «Եփրատի հովիտին բանալը հակասում է Ռուսիայի առեւտրական շահերին, որովհետեւ սպառնում է խախտել նորա դիրքը աշխարհային հարցի շուկայում»^(***)։

Ուրեմն Մեծ Հայաստանը, առաջուայ պէս, գրում է Ռուսիայի տրամադրութեան ներքեւ։ Իսկ ինչ վերաբերում է հայաբնակ Կիլիկիայի, հարցը այստեղ այնքան էլ պարզ չէ։ Առայժմ իշխում են այնտեղ Ֆրանսայի եւ Անգլիայի ազդեցութիւնը։ Նոր երկաթուղիների հարաւային ծրագրով, Գերմանացիք մըտադիր են հեռացնել այս երկրից յիշեալ պետութիւնների ազդեցութիւնը։ Կը յաջողուի նոցա թէ ոչ, — դժուար է այդ մասին մի բան ասելուց ասել, յամենայն զէպս պէտք է սպասել, որ այդտեղ շուտով սկսին Անգլիայի, Ֆրանսայի եւ Գերմանիայի փոխադարձ ոտընձգութիւնները։ Ուրեմն այս երկրի Հայերի

(*) Հետաքրքրութեան արժանի է Dr. Rohrbach-ի (որ երկու անգամ արեւելքը շրջել է) կարծիքը. «Թէ Առաջաւոր Ասիայի մեծ մասը անցնելու է Ռուսներին, դա պէտք է հաստատ համարել.» «In Turan und Armenien», էջ 248.

(**) Իշխան Ուստումկին, յայտնի ռուս արեւելեան քաղաքագետը, մինչև անգամ ասում է. «Ռուսաստանին բաւական է, եթէ նա տիրակալէ նեղուցների մի կողմին»։ Տես «Fürst Uchtomskij und russisch-deutsche Politik». Preussische Jahrbucher. 1898. XV տետր 2 երես 34.

(***) Այդ յօդուածի մասին տես Ռուսաց Nowoje Wremja, 1898 թղթատու 1. N. 8414.

վիճակի վերայ Գերմանիան կը խաղայ նշանաւոր դեր։

Ռուսների կողմէն Մեծ Հայաստանի գրաւման զէմ, Գերմանիան, ինչպէս մեզ թւում է, կարող է հետեւեալ երկու զէպքում մեծ ընդդիմադրութիւն անել. ա. եթէ այդ գրաւումի փորձը, գերմանական շահերի անսակէտից, յարմար ժամանակ չէ անուելու, եւ բ. եթէ Անգլիան այնքան շահ ունենայ չթողնելու Ռուսներին հայկական բարձրաւարակի վերայ, որ պատրաստ լինի որ եւ է ծանրակշիւ փոխարինութիւնով (compensation) զնել Գերմանիայի աջակցութիւնը այդ ուղղութեամբ։

Բ. եթէ նայինք այդ քաղաքականութեան վերայ իւր մասնաւոր անմիջական նպատակներից^(*), այն ժամանակ կարելի է աւելի հաստատ ենթադրութիւններ անել. երկաթուղու կառուցումը Փոքր Ասիայի ամբողջ երկայնութեամբ եւ տաճկական առեւտրի նպարկ տալու ձգտումը, սերտ առեւտրական յարաբերութիւններ ստեղծելով Գերմանիայի եւ Թուրքիայի մէջ, անկասկած այն տարրերից կը լինին, որոնք փոքր ի շատէ կ'ապահովացնեն Հայերը անդադար աւերումից, կոտորածներից, եւ կը նպաստեն նոցա նիւթական եւ բարոյական դարդացումին։

Ինչպէս եւ ամէն մի եւրոպական ձեռնարկ կու թիւն, Բաղդադի երկաթուղու հսկայ գործը անկասկած կը մտցնէ երկրի մէջ եւ մի մասնիկ եւրոպական քաղաքականութեան ոգու, այսինքն՝ իւր ներքին էութեամբ նա կը ստիպի որ Տաճկաց տէրութիւնը աւելի մեծ ջանքեր զնէ բնակիչների կեանքի եւ սեփականութեան ապահովութիւնը երաշխաւորելու, Սուլթանի ուշադրութիւնը կը դարձնէ այն հանգամանքի վրայ որ առանց այդ ապահովութեան երկաթուղիական գործը կը վնասուի։ 95—96ի կոտորածները մասնակցորէն բոլոր հայկական գաւառները (անասական վնասները Տր. Բորսայիւր գնահատում է մի քանի միլիոն)։ Առուտուրը քայքայուած էր, տէրութեան գանձարանը գատարկ, այնքան գատարկ, որ միայն ծայրայեղ ջանքերով յաջողուեց միջոցներ գտնելու Գերմանիոյ կայսրի ընդունելութեան համար Պոլսում. բնականաբար, այժմ կառավարութիւնը իւ մանաւանդ հեռատես գաւառական պաշտօնեաները ոչինչ այնպէս չեն փափաքում, ինչպէս մտքերի հանդարտացումը եւ իրերի կանոնաւոր գրութեան վերականգնումը^(**)։

Եթէ բոլոր այս հետեւանքները ինքնըստինքեան Սուլթանի համար շարժառիթ չեն հանդիսանար խուսափել այսպիսի կոտորածներից (թէպէտ հազիւ թէ), Բաղդադի երկաթուղին կը ստիպէ նորան հետեւանքներ վերայ աւելի

(*) Տես նախորդ յօդուածը։
 (***) «Deutscheand unter den Armeniern. «Preussische Jahrbücher» april 1899, 314-315.

ուշադրութիւնս դարձնել, որովհետեւ, ապա-
հովացնելով այդ ձեռնարկութիւնը minimal
արդիւնքով, նա ստիպուած կը լինի կանխիկ
վճարել, առանց յետաձգութեան, ինչ գրու-
թեան մէջ որ եւ կը լինի իւր դանձարանը :
Մի խօսքով, որքան որ Տաճկաց կառավարու-
թիւնը շատ պարտաւորուած լինի Եւրոպացի-
ներին, այնքան շատ պիտի զործէ նա սոցա
ոգով, այսինքն՝ ոչ մարդասպանական, այլ
խաղաղական, քաղաքակրթական (*):

Նոյնը կարելի է ասել եւ առեւտուրի մասին :
Եթէ Բաղդադի երկաթուղու գծով, այսինքն
հայկական դաւառների մօտիկ, գերմանական
առեւտուրը լայն զարգանայ, այն ժամանակ
կը ստեղծուի մի ամբողջ գասակարգ գերմանա-
կան վաճառականների, որոնք սերտ կերպով
շահ կ'ունենան որ այդ դաւառների խաղաղ
գրութիւնը պահպանուի : Վաճառականը միշտ
փախչում է այն տեղից որտեղ վաւոււմ է պաւ-
տերազմ, եւ այդ առեւտրական շահերն են
որ այնքան դժուար են դարձնում արդի պա-
տերազմները. նոյնպէս եւ այդ գերման-արեւե-
լեան վաճառականը ի գործ կը դնէ ամբողջ իւր
աղբեցութիւնը գերմանական կառավարութեան
վերայ, որպէսզի սա իւր արեւելեան քաղաքա-
կանութեան մէջ նպաստէ տաճկական դաւառ-
ների խաղաղութեան (**): Այստեղ կը նկատենք
հետեւեալը :

Հայկական կողմից ունանք ասում են թէ
«Գերմանացիներն եւ հայ վաճառականների
մէջ թշնամութիւն կը ծագի. ահա ուրեմն ի
միջի այլոց այդ քաղաքականութեան վտան-
գաւոր կողմը» :

Այդպիսի մի թշնամութիւն անկարելի չէր
լինելու, երբ ենթադրէինք որ գերմանացի
«փոքր» վաճառականները կը հեղեղէին կրկնիկին
եւ Միջագետքը (***) : Նոցանից հաղիւ թէ մէկը
գայ այդ կողմերը Պարզ է որ միայն «մեծ» վա-
ճառականները կ'ուզարկեն այնտեղ իրենց բեր-
քերը, եւ գոցա ու ժողովուրդի մէջ միջնորդի
գերը, այսինքն բերքերի վաճառումը կը կա-
տարեն միայն տեղական ուժերը՝ լինին դոքա
հայ թէ յոյն վաճառականները : Նոցա եւ գեր-
ման դրամատէրների մէջ թշնամութիւն չէ
կարող լինիլ, ընդհակառակն նոքա միմեանց
շատ հարկաւոր են : Յամենայն զէպս՝ հայ վա-
ճառականները առանձին անձնաւորութիւններ
են եւ մի զանգուած (masse) չեն կազմում .
որքան եւ դոցա հետ թշնամութիւն անելը

(*) Խօսելով արդի գերմանական երկաթուղիների մասին
«Kölnische Zeitung»-ը (1899 յուլիս 23) գրում է . «այն
երկրները, որոնք մի քանի տարի սորանից առաջ
յոյանի էին իրանց աւազակային բարքով, այժմ բո-
ւրովին խաղաղ են, ցեղերի և դաւանութիւնների հա-
կառակութիւնները մեղմացել են, նկատողութեան ար-
ժանի է նոյնպէս, որ հայկական խոսովութիւնների ժա-
մանակ, երկաթուղու անցքի ոչ մի կէտում չի պատահել
յիշողութեան արժանի մի ընդհարում (ժողովրդի մէջ)» :

(**) Այս գաղափարի նշոյլները արդէն նկատելի են
գերմանական մամուլի մէջ :

(***) Պոլիսը ուրիշ բան է :

Գերմանացիներին շահաւէտ լինի, այդպիսի
մի թշնամութիւն հայկական «զանգուածի»,
ժողովրդի հետ, անկարելի է, որովհետեւ զա-
վնաս է հէնց նոյն Գերմանացիներին. եւ մեր
խօսքը այստեղ անշուշտ հայկական ընակչու-
թեան մասին է եւ ոչ թէ հայ վաճառականների
շահերի մասին է :

Անհերքելի է նոյնպէս որ ամէն մի աւելորդ
Գերմանացին Տաճկաստանում, ինչպէս էլ որ
վերաբերուի դէպ ի Հայերը, խաղաղ ժամանակ,
նորանոր կոտորածների պարագային՝ լինելով
այդ երկիրներում, կամ նոցա մօտ, անկախ
իւր յատկութիւններից եւ քաղաքական ուղ-
ղութիւնից, գտնում է այդ ժամանակ աւելի
Հայերին քան Թուրքերին համակրող : Շա-
համոյ եւ Նակարարոյական քաղաքականութիւնը
միշտ աւելի նշտ կը լինի հոռուից քան մօտից :
Այդ ապացուցին զանազան հակահայ թերթերի
թղթակիցները : Թէ ինչ նշանակութիւն
ունի Եւրոպացիների ներկայութիւնը ջարդերի
տեղերում, ամենալաւ ապացուցին Պոլսի
96ի օգոստոսի կոտորածները : Այն ազմուկը
որ 6000 Հայերի մաշը հանեց Եւրոպայում,
աւելի մեծ էր քան թէ գորանից առաջ հարիւր
հազարների ջարդը (*):

Այսքան կհանքի ապահովութեան մասին : Ինչ
վերաբերում է գերմանական ելեւմտական ծը-
րագիրների քաղաքական նշանակութեան՝ Հա-
յերի համար, այդ կէտի վերայ այստեղ առ
այժմ կանգ չենք առնելու : Պարզ է որ նոր
երկաթուղիները, առեւտրական նոր կապերը
եւ գերմանական դաղթականութիւնները, եթէ
սոքա իրագործուին, նշանաւոր զարկ կը տան
ժողովրդի անտեսական բարգաւաճման (**): Եւ
նորա մտաւոր ու բարոյական զարգացման :

Բայց ինձ թուում է որ այդ ձեռնարկները
պիտի օգտաւէտ հանդիսանան Հայերին նոյն-
պէս եւ ազգայնական տեսակէտից : Թէպէտ
ճիշդ է, որ Հայը այնտեղ է պահպանում իւր
ազգութիւնը, որտեղ չի չիւոււմ օտար, աւելի
բարձր քաղաքականութեան հետ (այս մտքով
բաղաւտել Տաճկահայերը Ռուսահայերի հետ),
այնու ամենայնիւ չիւումը Գերմանացիների
հետ, որքան եւ սա սերտ լինի, չէ կարող
հակազգային ազգեցութիւն ունենալ Հայերի
վերայ, այդ չիւումը զանդուածային չէ լինելու,
այլ անհատական ապացոյց—ամերիկական մի-
սիոնարական դպրոցները Հայաստանում, որոնք
վաթսու տարիէ ի վեր գոյութիւն ունին այն-
տեղ. նոքա ոչ միայն մեծ զարկ տուին լու-

(*) Տես Եւրոպական լրագիրները այդ դէպքից յետոյ .
Տեաաքքեր է վեց դեպքանների ընդհանուր հեռագիրը
Մուլթանին . «Յաւում ենք այստեղի դէպքերի մասին,
այս բոլորի պիտի ընդհատուին . հակառակ դէպքում
թուրքիայի և ձեր տոհմի գոյութիւնը կասկածելի է
դառնում» :

(**) Թէ ո՛րքան մեծ տնտեսական դեր են խաղացիլ
արդի երկաթուղիները փոքր Ասիայում, ցոյց է տալիս
Dr. Zander «Einwirkung des Kleinasiatischen Eisenbah-
nen auf die Hebung des Grundbesitzes. Archiv für Ei-
senbahnwesen 1894.

սաւորչական դպրոցները զարգացման, ստի-
պելով լուսաւորչական եկեղեցիներ կողմը բու-
ղոքականութեան դէմ, այլ եւ ուղղակի
տուրն եւ տալիս են զարգացած եւ գիտակցու-
բէն ազգասէր Հայեր: Եւ Տր. Բորպախը պատ-
մում էր թէ կոտորածները ժամանակ, բողո-
քական Հայերին մասնաւորապէս փնտրում էին:
Իսկ եթէ յիշենք այստեղ եւ յայտնի գերմա-
նական Hiltsbundի գործունէութիւնը, որ
պահում է եւ Ֆաճկաստանում իւր հաշուով
մօտ 2000 հայ որբեր, ծախսելով սոցա վերայ
տարեկան 400, 000 Ֆրանքից աւելի, եւ եթէ ի
նկատի ունենանք որ Hiltsbundի գործունէու-
թիւնը կարող էր ստանալ իւր ներկայ ծա-
ւալը, միայն շնորհիւ գերմանական եւ թըր-
քական կառավարութիւնների ընկերական յա-
րաբերութիւններին (*), այն ժամանակ կարող
ենք ասել, որ Գերմանիայի ներկայ թրքական
քաղաքականութեան մէջ կան եւ Հայերի
համար մի քանի օգտակար կողմեր:

ԳԵՈՐԳ ՄԵԼԻԿԿԱՐԱԿԵՕԶԵԱՆ



ԵՆՁՄԱՐԸ

ԱՐԵՒԷԼԹԻ ԿԵԱՆՔԷ

—«Այ՛», քեզի կը սիրեմ, քու երկրիդ ա-
մենէն ազւո՛ր ազջիկը. քեզի կը սիրեմ, ու
սիրտս ափ մը անուխի պէս կը մխայ. իմ տի-
րոջս ընտրա՛ծը, դուն իմ հոգւոյս սիրեցիր, ա՛լ
անդեկ նաւու մը կը նմանիմ՝ ընդարձակ
ծովու մը մէջ լքուած. անթեւ թռչունի մը
պէս եմ որ թռչիլ կ'ուզեմ ու տենչանքը կը
խեղդուի մէջս...»

«Քեզի կը սիրեմ, անոր համար գողցայ եաշ-
մաքդ :»

Ներքինին ճերմակ շղարչ մը սեղմեց կուրծ-
քին վրայ եւ յետոյ աչքերուն տարաւ, բայց
անոնք չոր մնացին՝ լալու փափաքէն ծարա-
բեռն. ընկճուած, կարմիր ֆէսը հանեց
գլխէն եւ երեսը ծածկեց հողին վրայ ու այդ-
պէս քանի մը բոպէ մնաց մաքէն երգելով իր
սրտին քերթուածը:

(*) Տես շքեղ պաշտօնական ընդունելութեան նկարա-
զրուցութիւնը որ արած է Մարաշի միւսեօսարիֆը Պ. ԼօՏ-
մանին, «Hiltsbund»ի հարաւային կոմիտէների նա-
խագահին:

— «Ինչպէս թիթեռնիկ մը ծաղկանոցը
կ'իյնայ, այնպէս դուն եկար տիրոջս տունը:
Քու երկայն խորունկ աչքերդ օր մը չժպտե-
ցան, ու այնան ծաղկի մը պէս շրթունքդ
զուարթ երգ մը չերգեցին. ինչո՞ւ թարթիչ-
ներդ միշտ խոնաւ են, ինչո՞ւ այն հեւքի նմա-
նող հառաչանքներդ որ թանկապին մարգրիտ-
ներու պէս քաղցրի ամէն քայլիս քու բնա-
կարանիդ մէջ: Բայց դուն տառապանքին մէջ
աւելի գեղեցիկ ես, ու անոր համար քեզի սիրե-
ցի: Երբ գիշերները ճայնդ մարի ու սրահնե-
րուն մէջ մինակ բուրմունքդ մնայ, երբ բազ-
մոցներուն վրայէն ծաղկի պէս մարմինդ անե-
րեւութանայ, ա՛լ մինակս չպիտի ըլլամ. քու
եաշմաքդ սրտիս վրայ՝ քեզի պիտի խորհիմ, ու
անոր վրայ քու պաշտելի գլխուդ հետքը պիտի
փնտռեմ :»

Ներքինին տաժանագին ջանքով մը գլուխը
բարձրացուց: Չամբճան իր հսկայ շուքը կը
տարածէր արեւէն խանձուած մարգագետնին
վրայ որ՝ ստուերով ողողուած՝ կապտորակ գոյ-
ներ կ'առնէր. կարմիր հողը՝ սեղ տեղ ժայռի
պէս պրկուած՝ պիտի պայթէր կարծես: Դի-
մացը, մեծ ճամբան գալարուելով կ'երկնաար
ու հետզհետէ կը կորուէր. բղէզները կարծես
մէկէն անդամալուծուած կեցած էին օդին մէջ:
Հեռաւոր անցորդները կը գեղեւէին եւ արեւէն
գինով կը թուէին:

Սեւ ամուխի պէս աչքերուն մէջ խեղդելով իր
բոլորհրայքը, ներքինին յանկարծ կանգնեցաւ
չիփ-չիտակ: Մորթը մետաղի պէս կը փայլէր,
նայուածքը կապտորակ բոցի մը նման դուրս կը
խուժէր աչքերէն. լայն մանիշակագոյն շքե-
թունքները՝ արիւնով բեռնաւորուած՝ կ'իյնային
դունչին վրայ, եւ տափակ սնգունքերը աւելի
կը տարածուէին. սեւ երկայն մատները, որ չոր
ոստերու կը նմանէին, ջղաձգօրէն մազերուն
տարաւ, յետոյ երկայն եւ նուրբ հասակը ցցե-
լով օդին մէջ՝ մեկնեցաւ ծանր ծանր քա-
լելով:

Վերջալոյսը իր ոսկեգոյն ճառագայթները
կը հեղեղէր. խիտ վանդակին մէջէն ճա-
ճանչները կ'իյնային վարդագոյն սնգուսէ
բազմոցներուն վրայ եւ կը տփուռնէին հեռ-
զհետէ: Գետինը, գորգերը, ծաղկած մարգագե-
տիններու պէս իրենց ուժով գոյները կը նը-
շուլէին, եւ անկիւնը՝ մեծ մանիշակագոյն ա-
նթներու մէջ, թանկապին բոյսեր իրենց շք-
նորհալի տերեւները կը տարածէին:

Սայիտ-Պէյ նստած էր բազմոցին անկիւնը . մետաքսեայ դեզին էնթարին ուսերէն մինչեւ գիտինը կ'իջնար՝ երկար ծալքեր շինելով , եւ լայն թեզանիքները վար կը կախուէին բազուկէն , արգէն բեռնաւորուած՝ համբիշին խոշոր սաթերէն . կոնակը կը թնցուցած ոսկեթել բանուածքով բարձերու , երբեմն զանգաղ շարժումով մը նարկիլէին սաթը կը տանէր շըրթունքին , եւ ներզաշնակ , խղզուկ կլկլուք մը եւ թեմպերիին բուրմունքը սննեակը կը լեցընէին :

Դիմացը , վագրի մորթի մը վրայ ընկողմանած էր Չեքիա հանրմը . երկայն սեւ աչքերը ողողուած էին տխրութեամբ , շրթունքը արժագոյն եւ լսիկ , գլուխը կը թնցուցած էր բարձին , ու սեւ մազերը կ'իջնային՝ ճկուն՝ ուսերուն վրայ գալարուելով . աղամանդէ աստղ մը ճակտին վրայ կը բռնէր խոպու պիքները , եւ ուսերը կը կքէին կարծես մարգարտի շարքերէն որոնք վզէն մինչեւ կուրծքը կ'իջնէին . պզտիկ ոտքերը ճերմակ հազուատին տակէն դուրս կ'ելլէին՝ հազիւ մասներուն ծայրէն բռնելով դեզին սնդուսէ փապուճները , եւ ծիրանագոյն եղունգներով ձեռքերը կողն ի վար կ'իջնային՝ մատնիներով եւ ապարանջաններով ծանրացած :

Սայիտ-Պէյ երբեմն կը խօսէր անոր .

— Աղու՛ր աղջիկ , երգէ՛ ինծի քու երգերուդ ամենէն անուշը . քու ձայնդ լսելով դրախտի թռչունները նախանձէ պիտի մեռնէին եւ աւմենէն հպարտ ծաղիկները պիտի սիրահարուէին . երգէ՛ քու երկրիդ ամենէն քաղցր եղանակը : »

Ու սննեակին ծանր մթնոլորտին մէջ կը բարձրանար նուրբ ձայնը ողբի մը պէս .

« Ծարօրինակ ցաւ մը զիս կը տանջէ . . . »

Եղանակը կ'երկննար հետզհետէ , աւելի ծանրացնելով միջոցը , ու կը մարէր ցաւագին ոտնիւնով մը յանկերգին մէջ .

« Ամէն օր ինծի վիշտ մը կ'աւելցնէ . . . »

Եւ Սայիտ-Պէյ , խոտոված , կ'ըսէր անոր .

— Օրհնեալ ըլլայ այն արեւը որ քու առաջին օրդ տեսաւ , օրհնեալ ըլլայ այն կաթը որ քու աղայութիւնդ սնուց . . . Ըսէ՛ ինծի , Չեքիա՛ , ինչո՞ւ մպտիլ չես գիտեր : Բայց ինծի համար աւելի հաճելի են քո՛ նուազկոտ շարժումներդ որ հովէն օրօրուող վարդի թփի մը տատանումներուն կը նմանին . ո՛ր է եաշմաքդ . գնա գի՛ր անիկա ճակտիդ վրայ , ծածկէ գէմքդ այն շղարշով որ Հնդկաս-

տանի պարիկները քեզի համար հըւսած են եւ որ կը վայլէ քեզի ինչպէս ճերմակ ամպ մը լուսնին . . .

Սայիտ Պէյ ըստէ մը լսեց . բայց մէկէն հեշտագին փպիտ մը կարմրցուց շրթունքը .

— Դնա՛ , պաշտելի աղջիկ , ծածկէ՛ այն եաշմաքով ճակատդ , ու իբր թէ պիտի մեկնէիր՝ թռչելու գող թիթեռնիկի մը պէս , հազի՛ր մաւնիչակազոյն Ֆէրաճէդ ու եկո՛ւր . . . ու ես քեզի արդիւնմ ինչպէս թռչուն մը որ վանդակէն փախչիլ ուղէր . . . Թեւերուս մէջ բանասարկեմ հովի պէս թեթեւ մարմինդ , բայց մանաւանդ մի՛ մոռնար եաշմաքդ :

Անշարժ , գլուխը ուսին հակած , Չեքիա պատասխանեց մեղմօրէն .

— Տէ՛ր , քու տենչանքներդ նուիրական են ինծի համար , բայց անկարելի է ուղածդ կատարել , եաշմաքս կորսնցուցի :

Սայիտ-Պէյը չէր լսեր զինքը .

— Այն եաշմաքդ որ զեփեւսի պէս թեթեւ է ճակտիդ վրայ եւ որ Հնդկաստանի պարիկներ քեզի համար հիւսեցին . . .

Ներքինին , քէօքին առաջը , մութին մէջ մեկնակը կեցած , կը խոկար : Տենդը կը տարածուէր յամբօրէն ամբողջ մարմնոյն մէջ , եւ հոգին՝ գորովանքէ այրի՛ կը հատնէր կը տարտամէր գիշերին մէջ . անբացատրելի ուժ մը ամբողջ արեւնը փոթորկած էր , եւ ամբողջ էութիւնը կարօտով մը կը տանջուէր . հեռաւոր խուսափող հորիզոնի մը կարօտը , ամբողջ խրուովքի եւ յոյզի աշխարհ մը զոր չէր ճանչցած ընաւ եւ որ սակայն զինքը կը վրդովէր յիմարաբար :

— Ո՛վ Մթութիւն , ցաւերու եւ հիւժմունքներու Դեպա՛նը , տարօրինակ տենդ մը հոգիս կը հրդեհէ . քեզի պէս արշալոյսին կը սպասեմ , բայց ան չի գար երբեք ինծի համար . իմ ճակատս միշտ սեւ պիտի մնայ , ըսէ՛ ասիկա իմ պաշտելիս : Թո՛ղ անոր քալած տեղերը խոնաւ ըլլան արցունքներէս , թող սիրտս ողջակէզի մը պէս մոխրտնայ անոր համար : »

Դիմացը , նեղուցէն անգին , լոյսերով ողորուած քաղաքը կը տարածուէր գիշերին մէջ , հեշտանքի եւ գինովութեան մթնոլորտով մը վարապուրուած : Հովը կ'անցնէր իր վրայէն , համբոյրներու արձագանգը եւ սիրող սրտերու հառաչը բերելով իրեն : Շուրջը էակներ ընդունըմարել կը կարծէր ինչպէս երազի մէջ եւ որոնք կը մերժէին մարմնանալ զառանցանքէն

յամառ աչքերուն : Ախտաւոր վրդովմունք մը զինքը կը ցնցէր, եւ անդամներուն մէջ պըրկուններ կը զգար որոնք հասակը կ'երկնցնէին գերեզմաննոցի նոճի մը պէս : սեւ մորթին գիծը կը կորսուէր իրմէ բզխող ստուերին մէջ . զգայութիւնը կ'ունենար մէկու մը զոր կեանքին եզերքը բերած եւ հոն մոռցած են : անօգուտ պաղատանքի մը մէջ որ ամբողջ հիւանդագին էութենէն կ'արձակուէր, պարապին մէջ կ'երկնցնէր ձեռքերը որոնց միշտ պիտի մերժուէր օգնութիւնը : Սակայն կեանքը կը բզխէր իր շուրջը իր բոլոր հրապոյրներով եւ յոյզերով, անիկա կը բարձրանար երբեմն մինչեւ իր շրթունքը, յինքը խեղդելով իր ջերմագին գրկումին մէջ, բայց ծարաւ հոգին անկէ կաթիլ մը չէր ընդուներ :

Խոնաւ թարթիչները կը փակուէին՝ ծանրացած, դագաղի կափարիչներու պէս, որոնց կտին հոգին կը կմախանար. եւ կը թուէր իրեն որ ինքը գոյութիւն չունի, ստուերի մը նման . ու ամբողջ էութեանը մէջ միայն արցունքի երկու պաղ կաթիլներ կը զգար որոնք գամերու պէս կը մխուէին այսերուն մէջ :

Ի՛նչօքին մէջ ամենքը քնացած էին երբ ներքինին մտաւ հոն . անգիտակից՝ գնաց մինչեւ տիրուհւոյն սենեակը եւ դրանը կտին կծկտեցաւ սեմին վրայ :

Սայիա-Պէյ բացակայ էր, եւ Ջեքիա, իր ննջասենեակը՝ զլուխը թաղած բարձրուն մէջ՝ կ'երազէր . երբեմն սարսուռ մը ամբողջ մարմինը կը ցնցէր, ու պզտիկ զլուխը բոպէ մը բարձրացնելով, շուրջը կը նայէր անհանդուրսութեամբ . դրանը կտեւէն հեծմունքի ձայներ կուզային իրեն :


Գունը խանգարուած՝ ռաքի ելաւ :
 «Ո՞վ է դրանը ստաջքը», հարցուց անձկանօք :
 — Մութն է որ կուլայ՝ զրանգ ստաջքը, մրմնջեց ներքինին . զուն՝ լոյսով լեցուն՝ կ'արհամարհես զայն, բայց մութին մէջ փոթորիկ կայ...» :

Ջեքիա խեղդուկ շշուկ մը եւ մէկու մը հեռանալը միայն լսեց :

Սայիա-Պէյ տեղեկացաւ վերջապէս ներքինին տարօրինակ գալտնիքին, ու խելացիոր, նախանձէն սեղոյն, ամենէն սարսուփելի պատիժներուն խորհեցաւ : Երբ ներքինին կուրծքին վրայէն գտան Ջեքիաի կրսնցուցած եաշմաքը, Սայիա-Պէյ՝ ալ աւելի ան-

զութ՝ հրամայեց որ անով խեղդեն յանցաւորը :
 Եւ անցորդները երեք օր տեսան սեւ մարդուն դիակը կախաղանին վրայ, աչքերը դուրս ցայտած, մորթը ճեղքատուած՝ դէմքին վրայէն : Ու երեք օր եաշմաքը, այն եաշմաքը որ այնքան ատեն անոր արցունքներն ընդունած էր եւ որուն ծալքերուն վրայ թափուած էին կարտագին եւ տենդոտ համբոյրները, վզին շուրջը մնաց, զինքը խեղդելէ ետքը, ճակատագրական կապի մը պէս :

ԶԱՊԷԼ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ



ՄԱՅԵՐԳ

ԼԵՒՈՆ ԲԱՇՍԱԼԵԱՆԻՆ

Ըսե՛ք, դեպ ի ո՞ր Մսիք դաժանօրէն եղեալսն,
 Մե՛ր հոգիները՝ հողիև փառփեև վիրաւոր՝
 Ու ցեղո՛րփ ճաւքաւներէև սժգունս՝,
 Ո՞ր հեռաւոր հորիզոններէև սզաւոր՝
 Տրսօրէև պիտի երթաւ :

Երեկոսէ ու երկարք մարմիններոյ,
 Գիշերուան քոչունները քոչորք մեկեկ,
 Անժաւօք ծովերու դարաւոր
 Մարհարէ ու կրանիքի ափերէև,
 Չե՛մ գիտէր ե՛րբ, փարայրի մը մեջ գեղատիր,
 Մուրհեև արիւնած իրեկց Յաւր մեռելալսն
 Գիշեր մը, փոքորիկներու անեկի գիշեր,
 Վայրագօրէև մաներգելու եկաւ . [միկներոյ],
 Գիշերուան քոչուններ երեկոսէ ու երկարք մար-
 Մարմնոյս վրաև, մաներգելու եկաւ :
 Օ՛ր, քոչոր այն ոսկորի ու բացուած քեւերու
 Ընդհարումները կրեսխալսն
 Որ իրեկց գիշատոյի գանակոյ մարմիններէև
 Ծանօրէև կ'արձագանգուէր,
 Քարերուն սակ անարկու,
 Ու առի՛ւնը որ կը հոսէր հրաշիկ,
 Դեպի հակադարս հոգեվարժները անհուն,
 Այուրներու անարքիկ :
 Ու իրեկց մաներգը շսպուող, այսահար,
 Ու քրեկց ճայուածները ոճիրով յեցուն,
 Ու հագերնիև արիւնոս ու անյասակ :

անձնական (subjectif) կրքոտութեան պատճառով . . . Երեւակայինք որ դա ճիշդ է , բայց Ջանշեանը — մարտնչող հրապարակախօս է , եւ միայն այդ . նա կուում է եւ ոչ թէ վիճում : նա ժամանակ չունի պատճառաբանելու՝ երբ հարկաւոր է շտապել թանկագին իտէալներին պաշտպանութեան : . . . Ջանշեանը արժանի է առանձին ողջոյնի , որովհետեւ նա աջ սակաւաթիւներէ մէկն է , որոնք պահպանել են աւանդական զգուանքը դէպ ի «օպպորդիւնիստական» համաձայնութիւնները , դէպ ի յարմարութիւնը . . . » :

Բայց Պ. Ջանշեանը երբեք չէ մոտացել իւր պարտքը հատուցանելու այն ժողովրդին որին նա պատկանում է եւ որին ցաւերը անշուշտ պիտի գրաւէին իւր ուշադրութիւնը , այսինքն հայ ժողովրդին . պիտի խոստովանել որ այն ինչ որ գործել է նա այս ասպարէզում , արժանի է արտակարգ յարգանքի : 1891ին վերագաւաւրով Պոլսից , նա տպագրեց «Բուսկայա միսլ» ամսաթերթում երեք նամակներ , «Հայոց հարցը Տաճկաստանում» : Յիշում եմ լաւ որպիսի հետաքրքրութեամբ կարդում էին այդ «նամակները» , ամսաթերթը մէկի ձեռքից անցնում էր միւսին : Արտայայտիչ ոճով նկարագրելով Հայերի անվերջ եւ անտանելի տանջանքները , պարզաբանելով նոցա քաղաքակրթական ձգտումները , եռանդը , ընդունակութիւնները , հեղինակը ամէն մի քայլափոխում պատկներ է տալիս Տաճկաց բէժիմին եւ նոցա պաշտպանողներին . այս նամակների մէջ նա տալիս է եւ մի պատմական ուրուագիծ Հայերի եւ Ռուսների յարաբերութեան , կամենալով դորանով հրաւիրել Ռուսաց ուշադրութիւնը Տաճկահայերի դրութեան վերայ :

1895ին երբ կոտորածների հեղեղը սկսեց տարածուիլ Տաճկահայաստանում , Պ. Ջանշեան հրատարակեց մի գիրք , ժողովածու (400 էրես) հետեւեալ վերնագրով . «Հայերի դրութիւնը Թուրքիայում մինչեւ պետութիւնների միջամտելը 1895ին» : Այստեղ գտնում ենք Գլադստոնի ճառը (Չեստերում) , յօդուածներ Բոլեն ժակմէնի , Մալկոլի , Գրինի , Դիլլոնի եւ Ջանշեանի յիշեալ «Հայոց հարցը Թուրքիայում» , որին աւելացրած է մի կարճ բայց ազդեցիկ «Յետ-գրութեան» : Այս ժողովածուի մէջ կան եւ պատկերներ Դիլլոնի եւ պատրիարք Մատթէոս Իզմիրլեանի : Յատաշարանը գրել է Մոսկուայի համալսարանի միջազգային իրա-

ւագիտութեան դասախօս կոմս Լ. Կամարովսկի : Այս գիրքը(*) որ երկու տպագրութիւն ունեցաւ , անշուշտ նպատակ ունէր ծանօթացնել Հայերը Ռուսաց հասարակութեան քաղաքական տեսակէտից , (Հայերի վերաբերեալ Պ. Ջանշեանի բոլոր հրատարակութիւնները ռուսերէն լեզուով են) : Բայց ամենամեծ ծառայութիւնը , որը Պ. Ջանշեանը մատուցել է իւր ազգին , դա իւր վերջին հրատարակութիւնն է , «Նղբայրական օգնութիւն Թուրքիայում չարչարուող Հայերին» : Այս ժողովածուի մասին մանրամասն տեղեկութիւններ արդէն տուած է «Անահիտ»ը իւր նախորդ համարում , ուստի նորա բովանդակութեան վերայ չենք ծանրանալ . այսքան կը նկատենք , որ այս «Նղբայրական օգնութեան»ը մասին շատ խօսեցան Ռուսաց լրագրիները . շատ եռանդուն ու անկեղծ սիրով եւ համակրութեամբ խօսեցաւ մանաւանդ հաշտաշտպան նշանաւոր սուսա թերթը «Ա. Պեռսերսքուրգսկայ Վեստմոստի» : Այստեղ մի վերին աստիճանի գեղեցիկ յօդուածում «Առաջնային» վերնագրով , Պ. Գոլմստրեմը ասում է ի միջի այլոց . «Այդ գիրքը մի համանուագ է : նա լի է բանաստեղծութիւնով , զոյներով , զազափարներով՝ բարութեան , աշխատանքի եւ մարդկային արժանաւորութեան : Ուժեղ կերպով նա թափանցում է ձեր հոգուն , հնչում է այնտեղ սքանչելի ձայնահիւսքերով եւ զարթեցնում է ոգեւորութիւն : Այս ժողովածուն՝ մեր ժամանակի լուսապայծառ երեւոյթներից մէկն է , նա բարութեան մի ինչ որ հանրագիտական , ծաղկաքաղ է : Այսպիսի գիրքը դաստիարակում է : Այն բոլորն , երբ յոգնած միտքը այլեւս չէ հակազգում արտաքին տրպաւորութիւններին , բաւական է վերցնել այդ ժողովածուն , որպէս զի շարժուին գլխին մէջ կենդանի մտքեր . . . » :

«Նղբայրական օգնութեան» արդիւնքով (53 հազար ռուպլի) պահուում են այժմ Պոլսում եւ Հայաստանում բազմաթիւ հայ որբեր : Բայց այս «նիւթական» օգնութիւնը չէ որ տալիս է գլխաւոր արժէքը Պ. Ջանշեանի այս գործին . նա կայանում է ուրիշ բանում , Հայերի «բարոյական» պաշտպանութեան մէջ . եւ այդ պարզելու համար հարկաւոր է ի նկատի ունենալ հետեւեալը : Ինչպէս մի քանի սարի սորանից առաջ ոչ ոք չէր իմանում որ աշխար-

(*) Որքան լսել եմք , այս գրքի հրատարակութեան գործում , շերէ խաղացել եւ Մոսկուայի Հայ ուսանողութիւնը :

հիւ երեսին գոյութիւն ունին ինչ որ Բօէր-
 ներ , այնպէս հայկական կոտորածներէց ա-
 ռաջ բոլոր ոուս հասարակութեան համար ,
 մինչեւ անգամ նորա ամենալուսաւոր մասին ,
 ամենեւին յայտնի չէր Հայոց գոյութիւնը :
 Հայոց կոտորածները այդ անգիտութեան վերջ
 դրին եւ ի հարկէ որքան որ այդ զարթնելը
 յանկարծակի էր , այնքան էլ սոգէտ եւ անլգոյշ
 էին ոուս մամուլի մէջ յայտնուած գաղափար-
 ները Հայերի նկատմամբ : Մամուլի մի մասը
 կամաւ , իր ուղղութեան համաձայն , տարածում
 էր . Հայերի վերայ ազաւազեալ տեղեկու-
 թիւններ . միւս մասը , անծանօթ լինելով
 առարկայի հետ , ակամայ հետեւում էր հայա-
 տեաց լրագիրներին : Ի հարկէ ամբողջ ոուս
 հասարակութիւնն էլ կազմում էր իւր կար-
 ծիքը այսպիսի աղբիւրների հիման վերայ . . .
 եւ յանկարծ այդ հասարակութեան տալիս է
 Պ . Ջանշեանը հոյակապ մի ժողովածու 900
 երեսով , գրեթէ կամենալով ասել «Ահա Հայոց
 ազգը , նորա անցեալը , եւ նորա ներկան ,
 նորա աննկարագրելի տանջանքները , նորա
 սուբբ եւ անընկճելի հաստատամտութիւնը
 իւր կքօնին , իւր ազգայնութեան : Ահա նորա
 ոգու ստեղծագործութիւնները , նորա արժա-
 նաւորութիւնները եւ պակասութիւնները» :

Տալ Ռուսաց հասարակութեան Հայերի վե-
 րաբերեալ բազմատեսակ նիւթ եւ հաւաքել
 գրեթէ ամբողջ Ռուսաց հիւթը մի նպատակի
 շուրջը — չթողնել որ հայոյանքներով սրբա-
 պըղծեն այն անթիւ նահատակները յիշատակը
 որոնք մեռան իրենց ընտանեաց , ազգի , կը-
 րօնի եւ գաղափարի համար . եւ բարոյապէս
 պաշտպանել նոյն ազգի կենդանի մնացածները
 — դա փոքր գործ չէ :

ԳԷՈՐԳ ՄԵԼՈՒԿԱՐԱԳԷՕՉԵԱՆ



ԳԷՕԹԷ

ՄԻ ՔԱՆԻ ՆՕԹԵՐ ԻՒՐ ԾՆՆԴԵԱՆ ՀԱՐԻՒՐՅԻԱ
 ՆԱՄԵՍԿԻՆ ԱՌՔԻՒ

1749-1832

Ախ, ո՞վ է այն մարդը , որ իբրևուհք ու-
 նենայ իր վերայ գանգատելու :

«Վերթեր»

Ինչ ողջ մարդկութեան բաժին է ընկել ,
 Ուզում եմ իմ իսկ հոգում վայելել :

«Ֆառութ»

Ի՞նչ եւ ի՞նչպէս զրել մի կեանքի մասին ,
 որը տիեզերքի չափ մեծ է , եւ նորա չափ էլ
 խոր : Ի՞նչպէս մի քանի երեսներին մէջ սեղ-
 մել այն միտքը , որ հրեղէն ովկիանի նման
 տիեզերքի սահմանները ողողեց ու հոտեցաւ
 տիեզերքից անդին յաւիտենական քառսի ծո-
 ցը , իր իսկ լոյսով թափանցելու այն գաղտ-
 նիքների մէջ որոնք աստուածներին անգամ
 անյայտ էին մնում : Կամ ես ինչպէ՞ս թարգ-
 մանեմ այն սիրտը , որ մահկանացուների ան-
 յայտ տիեզերքի ամենախոր , ամենագաղտնի
 եւ ամենամեծ զգացմունքներն ունեցաւ :

Գէօթէ՛ : Եթէ նախապատմական դարերում
 ծնւած լինէր նա , անշուշտ իբրեւ կիսաւ-
 տուած պիտի պաշտուէր սերունդներին . բայց
 նա ծնւեց քաղաքակրթական դարում , եւ
 համաշխարհային գրականութեան կիսաս-
 տուածը դարձաւ :

Հոգւով հսկայ , մտքով անսահման , սըր-
 տով խոր , ահա Գէօթէն , այդ մարդ-աստուածը :

Նորա սիրտը մերթ զմերթ դարձաւ , ու
 գնաց վարդերի կոկոնները փայլալու , մերթ
 ցաւերգի հնչիւնը դարձաւ ու գնաց անտառի
 թառուներում պահուելու : Նորա սիրտը մերթ
 ծաղիկներով ու շատրուաններով զարդարուն
 նութիւնը ամենից անուշ երազները տեսաւ .
 եւ մերթ այն սրբազան տաճարը դարձաւ , ուր
 տիեզերքը իր ամենախորհրդաւոր երգերը հըն-
 չեցուց :

Նորա միտքը անմահ գիտաւորի նման յաւիտե-
 նականութեան կամարներով անցաւ . մերթ
 շանթ դարձաւ ու ժայռերի կուրծքին մէջ
 մխուկեցաւ , գերեզմանի խորքերում բոցավա-
 ռուեց . մերթ արեւ դարձաւ ու խաւրի ար-
 ցունքին մէջ իր երգիներանդ ծիածանը կամարեց ,
 եւ մերթ բոց դարձաւ ու տարսարսի խորքերը
 խուզարկեց : Բայց նա մնաց մի շտ մարդ , մի շտ
 կիսաստուած , ամենից ցաւաղին վիճակը տիե-
 զերքում :

Գէօթէ ընտանիքը ծագում է Թիւրինկիայից ,
 Գերմանիայի սրտից , մասնաւորապէս Մանս-
 ֆելտի գլխութիւնից , որը ինչպէս Լութերի

հայրենիք , կրկնակի իրաւունք ունի նոր բարձր-գերմաներէն լեզուի օրօրանք անուանուելու : Գէօթէի ծննդեան ժամանակ , այդ ընտանիքը ընդամենը վաթսուներկու տարի էր որ հաստատուեր էր Ֆրանսիոյ քաղաքում (Մայնի վերայ) : Ընտանիքի նախահայրը՝ մի հասարակ պայտար , նորա որդին դերձակ , իսկ սորա միամօր որդին՝ Յոհան-Գասպարը , բանաստեղծի հայրը , միջակ կրթութեամբ մի երաւարան , առանց բանաստեղծական հակումների , նոյն իսկ սիրոյ , եւ յանկարծ ինքը Գէօթէն : 1749 օգոստոսի 28 ի միջօրէին ծնւեց Յոհան Վոլֆգանգ Գէօթէն , մի թոյլ մանկիկ , որ մեռած կարծեցին եւ որ սեմնողներն ամենաշատը 18 տարի կեանք էին գուշակում :

Մարդկութեան պատմութեան ամենահետաքրքիր եւ մեծ վայրկեաններից մին է , երբ Հերդերը անձամբ ծանօթանում է ուսանող Գէօթէի հետ Ստրազբուրգում , ուր նա ծրագրում էր իւր պապայ հրաշակերտի , Ֆուրստի , յատակագիծը : Այս կատարում է Գէօթէի բանաստեղծական գործունէութեան առաջին շրջանում , որ յայտնի է պատմութեան մէջ իբրեւ «փոթորիկի եւ պայքարի շրջան» (*) (Sturm und drangperiode) : Ժան-ժաք Ռուսօ եւ Վոլթեր , ահա այդ շրջանի օտար հսկաները , որոնք անուղղակի կերպով գերման մտաւոր վերածնութեան հողը պատրաստեցին : Ռուսօն , տասնեւիններորդ դարի այդ Հերոլարը , մարգարէի բոցեղէն լեզուով ձայն էր բարձրացրել եւ բողոքել ամէն մի աւանդութեան , ընկերական ժամանակակից կազմի եւ զարգացման ու քաղաքակրթութեան դէմ : — «L'homme est né libre» — ազադակով հրաւիրել էր մարդկութեան դէպ ի մայր բնութիւնը յետ դառնալ , որովհետեւ «բնութիւնից ամէն բան լաւ է , քաղաքակրթութիւնն է որ մարդկանց թշուառացրել է» : Ռուսօն , որի համար նապոլէոն Ա. ը իրաւամբ ասել է — «Sans lui la France n'aurait pas eu de révolution» — իւր կիկլոպեան մտքերով ժայռեր նետեց գերման մտածողութեան միապաղաղ լճին մէջ , իսկ Վոլթերը իւր փոթորիկը բարձրացրեց պղտորած ջրի կրճքին : Կարճ ժամանակում Գերմանիայում արդէն մի երիտասարդութիւն կար , որն իրեն առաջնորդ ունէր մի կողմից Լեսսինգը եւ միւս կողմից Հերդերը , առաջինը Վոլթէրի , իսկ երկրորդը Ռուսոյի աշակերտ : Այդ երիտասարդութիւնը կարծում էր դէպ ի բնութիւնը յետ դառնալով կեանքի բոլոր առեղծուածները լուծել կարողանալ , եւ յոյս է տածում յանդուգն թռիչքներով բացարձակ ճշմարտութեան տիրանալ : Այս ուղղութիւնը մինչեւ այն ծայրայեղութեան է հասցրնում որ արտագրում է մի անմաքուր Լենց , մի կիսամերկ թափառող Կլինգեր եւ մի այլանդակ մանկավարժ Բադլիդով , իրենց մերթ

ծիծաղաչարժ եւ մերթ հիւանդ մտածումներով : Սոցա ընկերներից միայն Գէօթէն է , որ այդ անկումից ազատ է մնում , եւ որի հոգու անսահմանութեան հորիզոնից ծագում է դերման նոր գրականութեան արշալոյսը : Այդ արշալոյսի նախերգանքը Գէօթէն երգում է իր «Գէօց Փօն Բերլիխսնգէն» գրամայով , որը գերման սրտերն է վրդովում , մտքերը վառում : Այդ թատերախաղը , որը գրուած է Շէքսպիրի ազգեցութեան տակ , ներկայացնում էր մի գերման «Յուլիոս-Կեսար» :

«Գէօց»ի երեւան գալը մի յեղափոխութիւն էր նշանակում թատերգութեան սահմանում , եւ ջնջումը զասական դպրոցին : Այս թատերախաղում ի գուր կը լինէր որոնել գործողութեան միութիւն . դորա փոխարէն այդտեղ կայ մի ասպետ , մի արտակարգ մարդ , ինչպէս ամբողջ գրամայի առանցքը . նորա շուրջն են գտնուած բոլոր միւս գործողները , եւ սորա ճակատագրով էլ աւարտում է գրաման : Այդպիսի պատմական անձնաւորութիւնների գրամագրիկացնելը մերժւած էր թէեւ քննադատութիւնից , բայց «Գէօց»ին վերաբերուեցին ջերմ համակրութեամբ , պատճառը «Գէօց»ի տիպարին ազգային բնոյթն ու քաղաքակրթապատմական «իսկութիւնն» էր : Այս առաջին թատերախաղն էր լորով Գերմանացիները իրանց իսկական Գերման էին զգում եւ գերմաներէն խօսում : Մի մեծ եւ ընդհանուր հայրենիքի կարօսը , որի զգացմունքը՝ սկսած երեսնամեայ պատերազմներից՝ երբեք չէր սատել , դարերի տակից Գէօթէով վերակենդանացած ասպետով (Գէօց-ով) առաջին անգամն էր ուժգին արծարծւում : Այս ժամանակ է երբ Գէօթէն Լայպցիգի իւր ուսանողական ընկերով , Երուզալէմի ինքնասպանութեան տխուր լույսն է առնում , եւ ահա այդ դէպքը Գէօթէին երգել է տալիս գերման նոր գրականութեան արշալոյսի ամենախոր սիրերգը — «Վերթերը» — իւր ցաւերով ու յափշտակութիւններով , իւր յուսահատութիւններով ու կարօտներով , իւր տանջանքով ու սուգով :

«Վերթերը» մտքի ու զգացումի անդրադարձման մի արդիւնք է , հակառակ այն բոլորական ներշնչման , որ ընթերցողին թւում է զգալ Վերթերի իւրաքանչիւր նամակից : «Վերթեր»ը օրգանական մի լիուլի կապակցութիւնն չէ . հիմքը տալիս է Երուզալէմի տխուր մահը , որի յուսահատ սէրը Գէօթէն գիտէր , իսկ ամբողջութիւնը՝ Գէօթէի տարիներ առաջ վեցլարում ապրած սեփական կեանքը : Այստեղ պէտք է նկատել , որ առհասարակ Գէօթէի բոլոր գրուածները , իւր ապրած կեանքի լայնացրած նկարագրերն են , այնպէս որ Գէօթէի կենսագրութիւնը ամենալաւ առաջնորդն է նորա գործերը , նոյնիսկ խորհրդանշանական «Փառստ»ը , հասկնալու համար :

«Վերթեր»ի տղաւորութիւնը աւելի ուժեղ էր քան «Գէօց»ինը : Եթէ «Գէօց»ը միայն գերման սրտերը յուզեց , «Վերթեր»ը յուզեց

(*) Գէօթէի բանաստեղծական գործունէութիւնը առհասարակ երեք շրջանների բաժանում են . Ա. 1768—75 . Բ. 1775—1810 , Գ. 1810—31 :

ամբողջ աշխարհը , ամէն մի անկիւն ուր սէրն է ծաղկում եւ թառամում , ուր սիրտն է բարասում եւ արիւնտում :

Դեռ 1879ին արեւելեան Հնդկաստան ճամբորդողները հետեւը բաժակներ էին բերել որոնց վերայ «Վերթեր»ից տեսարաններ կային նկարուած . իսկ «Վերթեր»ը միայն չորս տարի առաջ էր գրուած : Եւ երբ 1808 ի հոկտեմբեր 2 ին , էրֆուրում , Գէօթէն մեծն Նապոլէոնի առաջն էր կանգնած , պիտի դարմանար լսելով որ Կայսրը խօսակցութիւնը հէնց «Վերթեր»ից սկսեց : Միլանում , արքեպիսկոպոսի կարգազրուեցեալ , հրապարակաւ այրուում է զժբաղգ սիրոյ այդ մելամաղձոտ ցաւերգը : Իսկ «լուսաւորուած» Լայպցիգում՝ քաղաքապետի պատուէրով 10 թալէր (մօտ 38 ֆրանք) տուգանք է սահմանուում «Վերթերը» գնողին : Եւ ինչպէս միշտ բնական է , այս բոլոր կոպիտ եւ տգէտ խատուութիւնները «Վերթերը» աւելի , նոյնիսկ առասպելական օրինակներով , տարածեցին ժողովրդի մէջ : Այս երկու մեծ արտագրութիւններին (Գէօց եւ Վերթեր) եթէ միացնենք նաեւ «Կլաւիգո»ն , որը՝ հակառակ իր գեղարուեստական թերութիւններին՝ Գէօթէի բնական գործերից ամենաազդու է , եւ եթէ վերցնենք նորա երեք զժբաղգ սիրահարութիւնների արգիւնք եղող երիտասարդական «երգերն» ու փոքրիկ հովուերգական ու դրամատիկական գրուածները , այն ժամանակ կ'ունենանք Գէօթէի բանաստեղծական գործունէութեան Ա . շրջանը , այն շրջանը , երբ նա իրան կրչուած էր զգում գոթական ճարտարապետութիւնը նոր շուքով վերականգնելու , գերման մեծ ու մի հայրենիքը ստեղծելու : Բայց ժամանակը այլ ուզողութիւն տուեց նորա ոգեւորութիւններին : Ազգային գրողից , պարաստեց միջազգային հանճարը , ամէն մի զպրոցից անկախ ինքնուրոյն մեծ անհատը , անհայրենիք այն մեծ աշխարհաքաղաքացին , որի հայրենիքը խոր աւելեբքն էր եւ որ եղաւ մարդկութեան զգացմունքների թարգմանը :

Գէօթէի բոլոր կենսագիրներն ու քննադատները շեշտում են այն կէտի վերայ , որ գերման նոր գրականութեան համար նա միայն իր գործունէութեան Ա . շրջանում օգտակար եղաւ , կամ՝ աւելի ճիշդ՝ այդ գրականութեան հիմքերը դրեց . իսկ մինչդեռ գրէթէ Բ . շրջանից սկսած մինչեւ մահը նա օտար մնաց իր հայրենիքին եւ ազգային գրականութեան : Եւ իրօք այն օրից երբ Գէօթէն Վայմարում պալատական կեանքէ վարում եւ երկու անգամ սարիներով Իտալիայում մնում , Գերմանիա վերադառնալիս այլեւս ինքն իր մէջ է ապրում , հոգին հին Յունաստանի եւ Հռոմի երազանքներին մէջ խորասուզուած : Փրանսան հայրենիքին է սպասնում , լուռ է Գէօթէն միացած Եւրոպան յուսահատական կոխ է մղում Ռոմաններին ախտանին դէմ , լուռ է Գէօթէն . ազատութեան կուում գերման գիւղացին ու քաղաքացին լողում են իրենց արեան մէջ , դար-

ձեւալուռ է Գէօթէն . . . միակ մահկանացուն , որի համար անտարբեր չէր , դա էլ իր սիրուհին — Քրիստիանէ Վուլպիուսն էր , որի ներշնչումներն տակ , լուռ մենութեան մէջ Գէօթէի հոգին տիեզերքի հետ էր խօսակցում : Հերգերը , որ այնքան մեծ ազդեցութիւն ունեցաւ երիտասարդ Գէօթէի վերայ , որ Շէքսպիրի ոգին Գէօթէին թարգմանեց , այլևս նոյնը չէր Գէօթէի աչքում : Նոր Հերգերը նա գտաւ իրան միակ արժանի ընկեր Շիլլերի անձնաւորութեան մէջ , եւ 1788ի սեպտեմբերի 7ը յիշատակութեան արժանի այն օրն է , երբ նոքա վերջապէս անձամբ իրարու հետ ծանօթանում են : Գէօթէն միշտ խոյս էր տուել Շիլլերի հետ ծանօթանալուց : Այդ ժամանակ Շիլլերը օրուայ հերոսն էր : Գէօթէի «Իֆիգենիա»ն եւ «Ճաստ»ն չէին ոգեւորում հասարակութեան , Շիլլերն էր արապետողը : Եւ այդ օրուանից Գէօթէն մնաց բանաստեղծների մի իշխան , առանց ժողովրդի , մի տարր որին նա երբեք չսիրեց , որին դուր գալու փորձեր երբեք իրան թոյլ չտուեց . — մինչդեռ Շիլլերի անունը արդէն ժողովրդականացել էր : Ժամանակակից այս երկու հսկաների մէջ այս տարբերութիւնը շարունակուեց մինչեւ մահը , եւ գերեզմանից էլ անդին , մինչեւ այսօր : Բայց Գէօթէն ճանաչեց եւ սիրեց Շիլլերի իտական ձգտումները , նորա ազնիւ ու սաք հոգին , եւ Շիլլերի մահը ամենամեծ զժբաղգութիւնը եղաւ Գէօթէի համար :

Գէօթէի շուրջը , կազմում է գերման ողմանտիկ դպրոցը . Կանտ , Շիլլեր եւ Ֆիխտէ են ստեղծողները : Այդ դպրոցի ներկայացուցիչները՝ եղբայր Շլեգելներ , Վերներ , Հէօլտերլին , Նովալիս , Հարդենբերգ , Տիք , Վաքսերոզեր եւ Շեյլինգ , վառուած ժողովրդի սիրով , դէպ ի ազգային բանաստեղծութիւնը քայլեր են առնում : Իսկ Գէօթէն կրկին լուռ է , նա իր գերման հայրենիքի հորիզոնում մենակ աստղի պէս հեռու կապոյտի խորքուս շողում է հանգարա . կամ մրկայոյզ ծովին մէջ խոր անդունդից բարձրացած հզօր ծառն է , որ անկործան խողում է իւր յաւիտենական երազին անձնատուր :

Վայմարում մերթ կառավարական զանազան պաշտօններ , եւ երկար տարիներ նոյն քաղաքի նորահաստատ թաւրոնի վերատեսչութիւնը վարելով , թղթին է յանձնում միմեանց յետեւից «Իֆիգենիա»ն , «Էգմոնտ»ը , «Էլէգիներն ու պալլասներ»ը , «Քասսոն» , «Վիլհելմ Մայտերս Լեհրեանրէն» , «Քսենիէն» , «Հերման ունտ Դորոթէան»ն , «Դիլտունկ ունտ Վանրէհայտը» , «Վեստէօստիլիս Դիվան»ը , «Վիլհելմ մէյսադերս Վանդերեանրէն»ն , եւ բնագիտական ու ճարտարապետական շատ ու շատ հանճարեղ գրուածքներ , եւ մահուանից մի տարի առաջ իւր վերջին ու ամենամեծ գործը — «Փառուս»ը . մի գործ որ սկսել էր գեռ Սարազուրգում եւ երկու մասը միասին վերջացրեց մահուանից միայն մի տարի առաջ : Եւ 1832ին մարտի 22ի միջօրէին , վերջին անգամ իւր բարեկամ էքէրմանի

հետ կրօնական խնդիրները մասին խօսելով թիկնաթոռի վերայ ուղիղ նստած աւանդեց հոգին ու գնաց Շիլլերի կողքին հանգստանալու : Նորա վերջին հասկանալի խօսքերն էին— «Պատուհանի երկրորդ փեղկն էլ բացէք, որ աւելի լո՛յս ներս գայ» :

Գէօթէն երբ գրել սկսեց՝ հաշիւ տասը տարեկան էր, բայց մի շատ զարմանալի զուգահիւ պոեթիւն կայ նորա զգացմունքի տիեզերքում : Նորա Ֆրանկֆուրտում տպագրուած բանաստեղծական ամենաառաջին գրուածքը հետեւեալ վերնագիրն է կրում. «Բանաստեղծական խոհեր Յիսուս Բրիտտոսի գոթիք իջնելու մասին» : «զարմանալի» ենք ասում, որովհետեւ այդ բանաստեղծական առաջին թոթովանքից յետոյ, մահամերձ ձերուսի բանաստեղծի վերջին հասաչը նոյն խնդրին է ուղղուած (Ֆաուստում) :

«Փառուտ»ին, աշխարհի բոլոր ողբերգութիւնների թագուհւոյն, նիւթ է տալիս բուն գերման ժողովրդական զրոյցը : Այդ զրոյցի համեմատ Դոկտոր Փառուտը ապրում էր ժ.Ձ. դարի միջում, եւ Սատանայի հետ արած մի դաշնագրութեան շնորհիւ շատ հրաշքներ է գործում եւ վերջապէս մի օր էլ սպանուում, խեղդում է նոյն Սատանայից : Գէօթէն, դեռ մանկական հասկում ծանօթանալով Դոկտոր Փառուտի պատմութեան հետ, իւր ամբողջ կեանքում խոկաց այդ զրոյցի վերայ, ուղեց զորանից մի ողբերգութիւն հիւսել, բայց շատ անգամ յուսահատուեց ու կասկածեց իւր ուժերի վերայ : Երիտասարդութեան հասակում քանի անգամ անձնասպանութեան փորձեր արեց եւ նոյն իսկ ձերութեան հասկում, երբ «Ֆաուստ»ն էր գրում, Շիլլերին գրած նամակներում կրկին եւ կրկին է կասկածում, թէ երբեքիցէ ինքը (Գէօթէն) կարողանայ մի իսկական ողբերգութիւն գրել : Բայց նա գրեց, գրեց մի մեծ, շատ մեծ ողբերգութիւն :

Գէօթէի բոլոր գրուածքները վտակներ են միայն, որոնք իրար խանուելով գալիս թափուում են այդ անեղր ովկիանին մէջ, որը իւր ալեաց հզօր երգերով տիեզերքի ու յաւիտենականութեան հետ է խօսակցում խորհրդաւոր ու մութ լեզուով : Գէօթէի «Փառուտ»ը մի դարաշրջանի, մի որոշ ցեղի եւ կամ մի որոշ պատմական դէպքի ներկայացուցիչ չէ : Նա ներկայացնում է ամբողջ մարդկութիւնը, զարգացած եւ իմաստուն մարդկութիւնը, իւր գիտութեամբ ու հանճարով, իւր կարօտով ու ծաբաւով, իւր թոխչոնքով ու երազանքներով : Փառուտը մարդկութիւնն է, որը իւր փառքի ու հաճոյքի ճանապարհը ուրիշ արցունքներով է փափկացնում, որի ձեռքերը խոնաւ են ու կարմիր հաճոյքին խոչընդոտ եղող անմեղ զոհի արիւնով : Փառուտը Պրոմէթէոսի կայծը իւր հողուն մէջ կրող մարդկութիւնն է, որ ուզում է անհուն տիեզերքի խորքերը խուզարկել, կեանքի առեղծուածք լուծել, որը դարեր է

ուղում ապրիլ, բայց եւ որը կարօտի ու ծաբաւի մէջ ցաւի ու կակիծի ահռելի գալարումներով մութ գերեզմանն է գլորուում : «Փառուտ»ն յաւիտենական կուր այն մեծ ու նախնական ողբերգութիւնն է, որ անցնում է կեանքի ու մահուան, սահմանաւորի ու անսահմանութեան, վախճանաւորի ու անվախճանութեան մէջ : Փառուտ եւ Մեֆիստո, ահա այդ երկու նախնական հակառակ ուժերը, երկու ծայրայեղ հակասութիւններ ողբերգութեան :

Երբ Փառուտը հարցնում է Մեֆիստոյին թէ ո՞վ է նա, ահա թէ նա ինչպէս է ինքն իրան նկարագրում՝

— «Մի մաս այն ուժից,
«Որ միշտ չափն ուզում եւ բարին գործում» :
Փառուտ — Ի՞նչ պիտ' հասկանալ առեղծուածային Այս խօսքերի տակ» :
Մեֆիստո — «Ես այն ոգին եմ, որ մի՛շտ ուրանում, եւ սա իրաւամբ, զի ամենայն բան Որ բնորոշուած է, արժանի է որ նաև կործանուի :
Հէնց որքա համար շատ լաւ կը լինէր, Որ ոչինչ լինէր :
Եւ ինչ որ դուք Մեղք, կործանում կամ կարճ Զոր էք անուանում, Նն իմ էութեան սեփական տարրեր» :

Իսկ ո՞վ է Փառուտը : Երբ Աստուած հարցնում է Մեֆիստոյին թէ նա արդեօք իւր ծառայ Փառուտին ճանաչո՞ւմ է, Մեֆիստոն, որ շատ լաւ է ուսումնասիրել Փառուտին, պատասխանում է .


— «ձեռք նա տարօրէն է ձեզ ծառայում,
Աշխարհային չեն այդ խենթի կեր խում,
Յոյր մղղում է նորան դէպ հեռուն :
Եւ կէս-դիտակից իւր իսկ խենթութեան Պահանջում երկնից՝ աստղերը սիրուն,
Երկրից՝ պէն մի բարձրագոյն հաճոյք .
Բայց ո՞չ մօտական եւ ոչ էլ հեռուն Հանդարտեցնում են կուրծքը խորայոյր» :

Ահա միշտ դէպ ի կատարելութիւն, դէպ ի աստուածութիւն ձգտող, բայց եւ միշտ դժգոհ, միշտ նախասահմանեալ ճակատագրին ենթակայ թշուառ մարդկութեան նկարագիրը : Ահա միշտ նոր գիտութեան . նոր ժպտի եւ արցունքի պապակով այրուած մարդու ողբերգական վիճակը՝ անողոք կործանումի եւ մահուան ատաղ :

Գէօթէն իւր անմահ ողբերգութեան համար մարդկութիւնը նիւթ ընտրեց, տիեզերքի այդ ամենից սիրուն եւ ամենից խորհրդաւոր առեղծուածը : Եւ նորա խոհերից ու կասկածներից, երազներից ու արցունքներից հիւսեց այդ հզօր երգը, որ հնչելու է շարունակ, քանի դեռ «արեւն հորիզոն եւ կեանքը գերեզման, աստղն անկում եւ բաղձն անիւ մը ունի» որպէս ասում է մեր մեծ բանաստեղծ Դուրեանը :

Ա.ՐԱՄ ՉԱՐԸԳԻ

Իերլին



ՄԵՐ ԴՐԱՑԻՆԵՐԸ

Ե Զ Ի Տ Ի Ն

Շար . (*)

Դ . - ՅԵՂԱՑԻՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ԿՐԹՆՔԻ ԱԶԴԵՑՈՒԹԵԱՄԲ

Եզրտիրները չափազանց բծախնդիր են իրենց ազգութիան անարատ եւ անխառնուրդ մնալուն . անոնք չեն ընդունիր իրենց մէջ ո եւ է ազգի ու կրօնքի պատկանող անհատ՝ եթէ անիկա իրենց կրօնքի վարդապետութիւնը ընդունի եւ փափաքի Եզրտի գառնալու . այսպէս նաեւ եւ զիտրութենէ կ'արտաքսեն այնպիսին որու համար հաստատուի թէ «սիրային յարաբերութիւններ» ունեցեր է ոչ-եզրտի անձի մը հետ : Եւ Եզրտիները նոյնիսկ կը մերժեն իրենց այն կիները , այն աղջիկները որոնք օտարներէ առեւանդուած , բռնութեան տակ , ահամայ , այդ զեղծման մէջ գտնուած են . յաճախ լսած եմ Ռուսիա գաղթող Եզրտիներէն՝ որ հառաչելով կը պատմէին թէ իրենց Թուրքիա եղած ժամանակ Քիւրտերն եւ Թուրքերը գիտնալով զայս՝ գաղտնի կ'առեւանգէին իրենց կիներն ու աղջիկները , որոնցմէ շատերը օտարազգի իհեստ ապրելու ստորնութեանը չհանդուրժելով իրենց կեանքին վերջ են տուած , եւ այնպիսիներ որ իրենց արդար վրէժը լուծած են՝ զիրենք առեւանգողին տունը իրենց կեանքին հետ կորուստի մատնելով : Այսու հանդերձ որչափ որ Եզրտիները կը մերժեն իրենց առեւանգուած կիւն ու աղջիկները , սակայն զայրոյթով կը զինուին դանոնք առեւանգողներուն դէմ եւ կեանքերնին կը վտանգեն անոնց վրէժը լուծելու համար :

Յեղաշին պահպանման եւ օտար ազգութեանց հետ չխառնուելուն համար Եզրտիները ունենալով աւանդական անմատչելի օրէնքներ , անոնք սահմանափակուած են նոյն իսկ իրենց ցեղային հատուածներու հետ չխառնուելու , եւ ասոր համար իրենց իւրաքանչիւր ցեղային բաժանումէն միայն ամուսնացուներ ընտրելու իրաւունք ունին :

Եզրտիները իրենք ցեղային բաժանումներ ունին որ կ'անուանեն շեխ , փիւր , եւ մրուս (փառաւորեալ , իմաստուն կամ կրօնաւոր , եւ ժողովուրդ կամ հետեւողք) :

Թէ՛ շեխ , թէ՛ փիւր եւ թէ՛ մրուս ցեղերը ունին իրենց առանձին տոհմեր , որոնք կ'անուանուին աբպայ . աթպաները մասնաւոր բա-

(*) Տես «Անահիտ» , Ա. տարի , թիւ 12 :

ցառութեամբ , արտօնուած են միայն իրենց ցեղին պատկանող ուրիշ աթպայէ մը ամուսնացուներ ընտրելու :

Շեխ . — Շեխ ցեղերը միշտ կը յարգուին փիւր եւ մրուս Եզրտիներէն եւ անոնց ցեղին պատկանող մարդոց ու կիներու ձեռքերը ակնածանօք կը համբուրեն բոլոր փիւր ու մրուտները : Շեխերը պարտաւոր են շրջել փիւր ու մրուտներու մէջ եւ խրատել զանոնք , պատմել , յիշեցնել Եզրտիներու այն լաւ օրերուն անցքերը որ աւանդութեամբ մինչեւ իրենց ժամանակը կը խօսուի : Շեխերը իրենց այս պաշտօնին իբր վարձատրութիւն , ամէն տարի իրենց հետեւող փիւր ու մրուտներունոյն տարուան բերքերէն տասանորդ կը ստանան :

Կայ շեխերու տոհմ մը որ կը կոչուի Շեխէշեխան : Այս տոհմը կը բնակի Սինճար լեռան շրջակայքը , Շանգիար : Շեխէշեխաներու պատուիրակները եօթ տարին անգամ մը կը շրջին գաղթող Եզրտիներու մէջ , իրենց հետ ունենալով ոսկեձոյլ ազաւնին . ասոնք կը բաժնեն մեռնող շեխի մը կամ փիւրի մը հետնուողները անոնց ժառանգորդներուն մէջ , կը խրատեն բոլոր Եզրտիները որ սիրով ապրին իրարու հետ , հաւատարիմ մնան իրենց կրօնքին , որպէսզի իրաւունք ունեան Մէալիքի-Տաուգէն պահանջելու իրենց համար խոստացուած տեղը երկնքի մէջ :

Այս տոհմը Շանգալ գաւառէն դուրս բնակութիւն հաստատելու իրաւունք չունի , հոն կը ծնի եւ պէտք է հոն մնան , ոչ ալ իրաւունք ունի իրեն տոհմէն չեղող ուրիշ եզրտի շեխերու տոհմերէ ամուսնացուներ ընտրել : Հակառակ պարագային Եզրտիներէ կ'արտաքսուին :

Շեխէշեխան տոհմը ունի ուրիշ առաւելութիւն մը . — որպէս թէ Եզրտիները ունին իրենց գրերը , իրենց գիրքը , եւ թէ միայն այդ տոհմը իրաւունք ունի գրելու արուեստը սորվելու ու շարունակելու աշխարհի ստեղծումէն մինչեւ այսօր ամէն անցքերը պարունակող գիրքը որ կ'անուանեն «Քիթապէ մազընէ ոէ է նուրի» (Մեծ գիրք լոյսի ճամբուն) :

Շեխէշեխան տոհմին չպատկանող շեխերէն շատերը յաճախ կը ճանչցուին որպէս «կախարդներ» որոնք օձեր կը կապեն որ ա'լ անկարող ըլլան խայթելու , «կապս»ով երկու սիրող սրտեր իրարմէ կը գտան , առն եւ կ'աղջ միջեւ մերձաւորութիւնը անկարելի կը դարձնեն ու կը քանդեն ուրիշ կախարդներու «կապս»երը , սիրահարութեան , բաղդաւոր ըլլալու եւ աջողուելու «թուղթ» կ'ընեն (թէեւ ինչպէս պիտեմք , գրել չգիտեն այլ կը բաւականանան ածուխի մուրով լաթ մը կամ թուղթի մը կտոր գծել եւ եռանկիւնաձեւ ծալել) :

«Կախարդական» կոչուած այս ձեւակերպուած թիւնները, զոր մաս մը եղիտի շեխերէ զատ կը գործադրեն նաեւ պարսիկ ու թուրք շեխեր եւ Հայաստանի դիւղացի կարգ մը քահանաներ, — եւ որոնք զժբարդարար յաճախ իրենց վնասակար հետեւանքները կ'ուսնենան, — կրօնական նախապաշարութեամբով չկաշկանդուած ազատամիտ ընթերցողը ինքնին կրնայ գիտնալ անոնց պատճառները, փնտռելով կրօնքներու դարաւոր կուրացուցիչ եւ անարեւելիչ ազդեցութեանց մէջ :

Հոս կ'ուզեմ մանրամասնութեամբ ներկայացնել «Կախարդական» ձեւակերպութիւն մը զոր կը գործադրեն եղիտի կախարդ շեխեր : Ասոնք օձեր կը հաւաքեն եւ այդ օձերը արկղի մը մէջ տեղաւորելով գիւղէ գիւղ կը շրջին ու այդպէսով դրամ կը շահին : Կան այնպիսիներ որ կը պարտին, խոշոր օձ մը վզին փաթած, ուրիշ օձ մը բազուկին վրայ, երրորդ մը ոտքին, մէջքին, եւ այսպէս օձերով պաշարուած ապալիսի երեւոյթներ մեր արեւելցիներուս վրայ մեծ տպաւորութիւն կը թողուն եւ մարդկային կարողութեան վեր դասելով՝ հրաշք կամ կախարդութիւն կ'անուանենք, մինչդեռ իրականութիւնը այն է որ այդ երեւոյթները ոչ «հրաշագործութիւն» են եւ ոչ «կախարդութիւն» այլ պարզ արհեստ մը : — Ապրելու համար այս միջոցին դիմողները կը շրջին քարուտ տեղեր եւ իրենց երկփանի փայտերուն օգնութեամբ օձերը ողջ կը բռնեն, — ինչ որ դժուար չէ, — եւ խարտոցներով կամ թաղիքի կտորներով կը ջարդեն կը քանդեն անոնց բոլոր ստամուկները, այսպէս որ ստամուի հեռքերը կը կորսուին եւ օձերը խայթելու անկարող կ'ըլլան : Յետոյ այդ օձերուն ուրիշ տանջանքներ տալով զանոնք իրենց հրամաններուն կը հնազանդեցնեն : այսպէս, օրինակի համար, օձին կը հրամայեն արկղէն ելլել ու օձը կ'ելլէ, կը հրամայեն որ գլուխը այն ինչ տեղ դրած կանգնի ու օձը կը կանգնի այնպէս, եւ այսպէս ուրիշ շատ հրամաններ կուտան նոյն իսկ ուժեղ խոշոր օձերու եւ օձերը կը հնազանդին :

Ահա թէ ինչպիսի տանջանքներու սակ կը հնազանդեցնեն օձերը :

Օձերը երկար ժամանակ մը՝ մօտ երեք ամիս՝ առանց ոչինչ ուտելու կը դիմանան, եւ կախարդ շեխերը օգտուելով այս առիթէն զանոնք «կը կրթեն» սապէս . պոչի կողմէն կ'անցընեն մետաղեայ թելէ օղակ մը, իսկ բերանը կ'անցընեն ուրիշ թել մը որ վզի շուրջը դարձընելով սանձի ձեւ կուտան . յետոյ մետաղեայ երկու թելով միեւնոյն սանձը կը միացընեն պոչի օղակին՝ մարմնոյ երկարութեան համաձայնութեամբ . այսպէսով օձին անկարելի կ'ըլլայ պոչին կամ գլխին կողմէն դուրս գալ

այս որոգայթէն եւ ստիպուած է այսպէս շրջութայուած սողոսկիլ . բայց անգութ «կրթիչներ»ը ասով չբաւականալով վզի եւ պոչի երկաթեայ օղակներէն ուրիշ թելեր կ'անցընեն եւ անոնցմէ խոշոր քարեր կը կախեն օձին երկու կողմէն եւ անոր գլուխ քարի մը կամ ապակիի մը վրայ կը դնեն որ չի կրնար ուտել — ինչպէս պիտի ուտէր եթէ հող գտնար, — եւ այսպէս ան ա՛լ ոչ կրնայ շարժիլ, ոչ գալարիլ, ոչ ուտել եւ ոչ սողոսկիլ, որոնցմով պիտի հանգստանար : Այս գիրքը օձերու ամենամատանելի կացութիւնն է, բայց նոյն իսկ այս դրութեան մէջ անոնք շաբաթներով կը դիմանան, որմէ յետոյ կը հնազանդին զիրենք տանջողներու կամքին :

Եղիտի «Կախարդ» շեխերը մասնաւորներ ըլլալով, իրենց այս վարպետութիւնը գաղտնի կը պործադրեն եւ կը ձեւացնեն թէ իրենք օձերը «կապս»ող կը յաղթեն . երբ նոր օձ մը բռնեն որ չի հնազանդիր, եւ եթէ ճիշդ վիզը բռնած չըլլալով՝ անմիջապէս խայթէ, կ'ատարկեն թէ զեռ իրենց աղօթքներու «գօրութիւնը» չէ աղած . ազդելու ամենակարճ միջոցն է երեք օր օձերը իրենց քով վար դնելը . . . (*) :

Փիլ . — Փիլերը Եղիտիներու կրօնական արարողութիւնները կը կատարեն, եւ ինչպէս շեխերունը, նոյնպէս եւ ասոնց պաշտօնները, ցեղական իրաւունքն են եւ ժառանգական, կիները այրերու չափ իրաւունք ունին այդ պաշտօնները կատարելու :

Շեխեր եւ փիլերը կարելի է նկատել որպէս քուրմերը արեւապաշտութեան եւ կուսակաշտութեան ժամանակներուն, կամ որպէս ժամանակակից կրօնքներու ներկայացուցիչները . ինչպէս մահմետականներու «չեխ» եւ «մուլա»ները, մովսիսականներու «խախախ»ները, կամ քրիստոնեաներու կրօնաւորները, օրինակ՝ «քահանայ» եւ «արեղայ»ները : Եղիտի կրօնի ներկայացուցիչները «կուսակրօն» չեն ըլլար :

Հետաքրքրուեցայ գիտնալ չեխ եւ փիլերու տարբերութեանց պատճառը, օրոնք ցեղային բաժանումէն զատ աննշան տարբերութիւն մը ունին իրարմէ . ոեւէ գոհացուցիչ բացատրութիւն չկրցան տալ, միայն Շեխէշեխան տոհմին համար կ'ըսեն թէ Եղիտի թագաւորական ցեղին մնացորդն է :

Փիլերու մէկ տոհմը կը կոչուի «Փիլրէ չըլ փիլրան» (քառասուն փիլերու փիլը, փիլրապետ)

(*) Յերբ կապելու համար Հայաստան զանուոյ ձեւագիր գրքերու մէջ հայերէն եւ ուրիշ անձանօթ լեզուներով շատ մը աղօթքներ կան եւ մեր կախարդութեան հետեւող քահանաները կը ջանան օգտուիլ անոնցմէ, բայց երբեք չեն յաջողիր, թերեւ գործնական միջոցը չգիտնալուն համար :

այս տոհմը աւելի շատ կը յարդուի քան միւս տոհմերը :

Փրերըն եւ փերէ չըլ փերանները իրեց հեւ աեւող մրուտներէն տասանորդ կը ստանան :

Մրուտ . — Մրուտ ցեղերը Եզրտիներու մեծաւ մասնութիւնը կը կազմեն : Շեխ ու փրերը՝ իրենց գանձած տասանորդներով ապահովեալ՝ ապրուստնին չեն մտածեր եւ հարստանալու աչք չունին , մինչդեռ մրուտները , ունենալով կրօնական եւ կառավարական տուրքեր , ստիւ պուած են աշխատել . իրենց մէջ կը գտնուին բաւական հարուստներ :

Մրուտները երկու մասի կը բաժնուին , քուռուեւ եւ դուրաւ (ազնուական եւ ռամիկ) : Թոռուենները աւելի կը յարգուին եւ իրենցմէ կ'ընաւորուին Եզրտիներու «քաղաքային ներկայացուցիչները» , գիւղապետ , եւն : Թոռուենները միայն կը համարձակին թոռուեններու աղջիկները իրենց կնութեան առնելու համար ներկայանալ , որովհետեւ անոնց փոխարէն , նոյն իսկ տգիղի մը համար , կը պահանջուի հօտերով ոչխարներ , տասնեակներով եզներ , ընտիր նժոյգներ , զէնքեր , տնային զարդեր , մինչդեռ խուլամի աղջկան մը , նոյն իսկ ամենագեղեցիկն փոխարէն՝ քանի մը ոչխար եւ հազիւ մէկ երկու եզ կամ հասարակ ձի մը կը պահանջուի :

Ե . ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԲԱՐՔԵՐ

Եզրտիները երկրագործութեամբ եւ խաչնարածութեամբ կը պարսպին . ասոնք ձմրան եղանակին ամբողջ ընտանիքով միասին կ'ապրին , գարնան երկու մասի բաժնուելով , կանանց մեծ մասը եւ հովիւները լեռ կը բարձրանան , հոն վրաններու տակ կը հաստատուին եւ ձմրան համար անասուններու կաթէն ու բանջարեղէններէ այլ եւ այլ տեսակ ուտելիքներ կը պատրաստեն . կը շինեն զուտ կաթէ՝ եւ կամ բանջարեղէններով համեմուած՝ շատ տեսակ պանիրներ , երկար ժամանակ , մինչեւ ձմեռ դիմացող մածուեններ , չոր-թաներ , եւն . կը շինեն նաեւ տեսակ մը պանիր զոր բամբակէ թելի մը հաստութեան կը հասցնեն , եւ զոր կարելի է կծկել , քակել առանց կտրելու : Եզրտիներէ զատ այս պանիրը միայն Թուրքմէնները կրնան պատրաստել :

Երկրագործները աշխատող , փորձառու եւ հմուտ են իրենց գործին :

Եզրտի կիները կրնան պատրաստել ընտիր տեսակէ գորգեր եւ կապերաներ , բայց հոս ալ աւանդութեամբ իրենց զէմ արդելքներ կան : Գորգի վրայ աշխատելու իրաւունք ունի Եզրտուէին որչափ ասին որ ամուսնացած չէ , ամուս-

նանալէ յետոյ անէծք կայ եթէ գորգի աշխատութեան գործնականապէս մասնակցի , այլ միայն կրնայ խրատել կամ բացատրել աշխատող կոյս աղջկան :

Եզրտիները նահապետական սովորութիւններով կը կառավարուին . շեխ ու փրերը քաղաքական խնդիրներու չեն մասնակցիլ եւ կառավարութեանց առջեւ գիւղը կը ներկայացնէ գիւղացիներու կողմէ ընտրուած մէկը որ իրենց լեզուով յարապի կ'անուանեն (բաւացի թարգմանութիւնը՝ «ձերմակ-երես» , մեծ) : Թէ Թուրքիոյ եւ Թէ Ռուսիոյ մէջ Եզրտիները կառավարական տուրքերը կը վճարեն իրենց սովորութեանց համաձայն եւ ոչ թէ կառավարական օրէնքներու տրամադրած ձեւով (Ռուսիոյ մէջ քիչ մը փոխուած է) : — Իւրաքանչիւր ուսպին գիտնալով նոյն տարուան կառավարական տուրքերու քանակը , զայն կը բաժնէ գիւղացուց տուններու վրայ անոնց կարողութեան համաձայն այսպէս՝ աղքատ տունները հաշուելով ¹/₁ , տու նոր կ'անուանուի պճեղ , ապրուստը դժուարաւ հայթայթողները ¹/₂ տուն որ կ'անուանուի կուսոշ , միջակ տները ³/₄ , տուն որ կ'անուանեն խաւի եւ հարուստները 1 տուն որ կ'անուանուի համիլա : Այս բաժանումը ընելէ յետոյ յարսպին գիւղի բոլոր տները «պճեղ»ներու կը վերածէ եւ կառավարական տուրքը իր համրելով ու ուրիշ «խելօք»ներու օգնութեամբ «պճեղ»ներու կը բաժնէ , որմէ յետոյ իւրաքանչիւր եզրտի տան բաժինը գիտնալով կը գանձէ եւ կառավարական տուրքերուն կը յանձնէ :

Իւրաքանչիւր եզրտի տուն ունի նաեւ իր որսպին , որ տան վերակացուն է . ան չ'աշխատիլ , այլ միայն պատուէրներ կուտայ : Յաճախ քանի մը որդուց հայրը կամ իր մեծ որդին կ'ըլլայ տան որսպին , երբեմն ամենէն ճարպիկ եղբայրը , գործէ հասկցողը : Տան որսպինները միշտ փեսայի պէս հաղուած եւ զարդարուած ըլլալու են , հիւրերու առջեւ ազդեցիկ երեւնալու համար :

Հին սովորութեան մը համեմատ , եզրտի որսպինները , տարին անգամ մը ձիարչաւի մրցում կ'ընեն որ կը տարբերի առօրեայ ձիարչաւիներէ : Անոնք ունին մասնաւոր ցեղերու պատկանող ձիեր , եւ ինչպէս որ նախանձախնդիր են իրենց ցեղին անխառն մնալուն , այսպէս կ'արգիլեն նաեւ իրենց ցեղ ձիերուն խառնուելը եւ ասոր համար զանոնք միշտ կապուած կը պահեն . ցեղ ձիերը ֆեհեղ կ'անուանուին եւ պէտք է որ գայտ հաստատող վկայաթղթեր ունենան իւրաքանչիւր Եզրտի տունը առնուապի արու եւ էգ երկու քեհէլ ձիեր ունենալու է . էգ ձիերը քիչ կը հեծնեն , իսկ արու ձիերը որսպիններու պտոյտներուն յատկացուած

են : Բեհէլ կոչուած ձիերը փոքր գլուխով, գեղեցիկ ու արտայայտիչ դէմքով, կլոր, բաւական բարձր, թեթեւ, արագավազ, աշխոյժ եւ զուարթ են : Ասոնք եթէ կարմրագոյն ըլլան՝ պէտք է որ բաշ ու պոչը սեւ ըլլայ, եթէ ճերմակ-պայտաբիծ՝ պէտք է որ բաշ եւ պոչը կամ բոլորովին սեւ ըլլայ կամ ճերմակով խառնած, եթէ սեւ՝ պէտք է որ կամ անբիծ ըլլայ կամ վերջի երկու ոտքերուն եւ կամ երեք ոտքի ու ձուկտի վրայ ճերմակ նշաններուն հետ : Եղիտինները չեն հեծներ այն ձիերը որ ետեւի եւ առջեւի ոտքերուն վրայ հակառակ կողմէ ճերմակ նշաններ ունին, չեն հեծներ նաեւ այս համաձայնութեամբ գոյն չունեցող ձիերը : Եւ այս ընտրուած ձիերով կը կատարեն ձիաբշակի մրցումը : Մրցման կը մասնակցին 60—70 ողսպիներ, որոնց կրնան ընկերանալ նաեւ օտարազգիներ : Մրցումը կ'ըլլայ ընդարձակ դաշտի մը վրայ ուրկէ անցնելու են գետեր եւ վտակներ, որպէսզի արշաւանքէ յոգնած ձիերը քանի մը անգամ անցնելով այդ ջրերէն կարողութիւննին նուազի եւ անոնց ամենաւարողը երեւան գայ : Երթալու եւ դառնալու 16—18 ժամու ճամբան անոնք կը լրացնեն 8—10 ժամէն, յաջողողը եւ ամենէն առաջ որոշեալ կէտին վրայ վերադարձողը միւսներէն երկուական ոչխար կը ստանայ, եթէ մէկէ աւելի ըլլան միեւնոյն վայրկեանին որոշեալ կէտը հասնողները՝ մէջերնին կը բաժնեն առածնին : Այս մրցման մէջ չյաջողողներէն շատերը նախանձէն կը քոտած գնդակահար կը սպաննեն իրենց ձիերը :

Բազմակնութիւնը թէեւ Եղիտիններուն արգիւտած չէ բայց չեն սիրեր, եւ իրենցմէ քիչեր կարելի է թուել երկու կին ունեցող, եւ անոնք ալ երկրորդ կին առած են, միայն ստիպուած՝ ամուսնանալով իրենց ազգականի այրիին հետ, երբ տան մէջ գեո չամուսնացեալ ուրիշ երիտասարդ չկայ որ այրիին հետ ամուսնանայ եւ անոր ուրիշի հետ ամուսնանալը արգիւէ :

Սովորական օրէնք է որ երբ կլիտի կնոջ ամուսինը մեռնի, պէտք է ջանայ իր հօր տունը վերադառնալ փախուստով, որմէ յետոյ անոր մեռնող ամուսնոյ կողմէր կամ բարեկամը զայն իր տունէն չհանելու եւ «անպատիւ» չընելու համար եթէ կնութեան առնէ, վե, ստին տալու է այնչափ փոխարինութիւն որչափ տուած էր անոր նախկին ամուսինը : Եղիտի ազգական անպատուութիւն է որ այս պարագային չփախչի իր հօր տունը եւ իր երկրորդ գնով չնպաստէ հօրենական տան ձոխացման, բայց այժմ Եղիտուհիներն ալ սթափած կը հակառակին երբ իրենց ամուսնացուներէն շատ փոխառութիւն

ներ պահանջուի, եւ յաճախ կ'ըլլան այնպիսիներ որ այս պատճառով իրենց ամուսնութեան յետաձգուելուն համար վշտացած իրենց ընտանիքի պատիւը ոտնակոխ կ'ընեն ու սրտակցի մը յետ կ'անհետանան եւ յետոյ երեւան գալով կ'ամուսնանան : Այսպէս՝ քանդուիլ կը սկսի կրօնքի գծած պատնէշը որ այնչափ յարգի էր Եղիտինի համար. — սէրը որ ոչ կրօնքի եւ ոչ ուրիշ գորութեան ազդեցութիւնը կը կրէ, յաճախ կը բաժնուի փիւրի մը եւ շեխի մը կամ շեխի մը ու մրուտի մը սրտերուն մէջ, որոնք եզրաի կրօնի օրէնքներով իրարու հետ ամուսնանալու իրաւունք չունին : ասոնցմէ ալ կ'ըլլան իրարու հետ փախչողներ, սակայն ասոնք ա'լ չեն կրնար ետդառնալ եւ ընդունուիլ Եղիտիններէն ու կը ստիպուին դիմել այնպիսի ազգերու եւ կրօնքներու ուր կարենան գտնել ներողամտութիւն, իրենցմէ շատեր՝ մասնաւորապէս Ռուսիա՝ Հայերու մէջ կը ձուլուին :

Եղիտինները իրենց խօսքը կը յարդեն : կարելի է հաւատալ անոնց հաւատարմութեան՝ անգամ մը անոնցմէ խոստում ստանալով, որ քսիս կ'անուանեն : Ասոնք անթերի կը վճարեն իրենց փոխառութիւնները, որովհետեւ համոզուած են որ վերջին գատաստանի մեծ օրը ամէն մարդիկ իրենց իրաւունքները պիտի ստանան եւ պարտատէրերը կրկինը պիտի վճարին : ասոր հակառակ Եղիտինները չեն վախնար եւ մեղք չեն համարիր գողութիւնը (քրիստոնեաներու ներկայութեան կ'արդարանան սա փաստով թէ Եղիտի մը Գրիստոսի դամբէն մէկը գողցեր է, եւ որովհետեւ Գրիստոսի պաշտօնն է մարդոց մեղքերը գրել ու «գատաստան») օրը ներկայացնել, անի Եղիտիններու գողութիւնները գրի չ'առնել) : Այսպէս Եղիտինները թէեւ յափշտակութեան եւ աւազակութեան անկարող, բայց գողութեան մէջ վարպետ են : եւ հիւրի մը գալստեան շնորհիւ միտ ուտելու բաղդաւորութենէն զատ, միտ կ'ուտեն երբ կը գողնան ուրիշի կենդանին :

Իրենց հիւրասիրութիւնը ծայրայեղ է, կը բաւէ որ մէկը ներկայանայ որպէս հիւր, եւ նոյն իսկ իրենց թշնամին սեփէն ներս մտնէ ու «ես քու գթութեանդ, քու ազնուութեանդ կը դիմեմ, քու հիւրդ եմ, կը խնդրեմ» նախազատութիւնը արտասանէ, եթէ նոյն իսկ իրենց եղբայրը սպաննած ըլլայ, պարտաւոր են ներել : Այսպէս անձանօթ մը, օտարական մը, ճամբորդ մը՝ անկերկիւղ, առանց ամչնալու, առանց կասկածելու կրնայ մտնել Եղիտի տունը եւ յայտնել որ հիւր է : եւ եթէ հիւրը հասարակ հագուստով ու հետիոտն ըլլայ, օրուան կերակուրով, նաեւ սերով, կարագով կերակրելով ճամբու կը դընեն, եթէ զրամ տրուի՝ չեն ընդունիր, խեղճ մա-

յի դրչա (տան արգիւնաբերումը կը սպա-
 ոի) կ'ըսեն, բայց եթէ ուրիշ նուէր մը ըլլայ,
 սիրով կ'ընդունին: Երբ հիւրը հեծեալ է,
 ծանօթ կամ անծանօթ, չափազանց յարգանք-
 ներ կը շոյակեն եւ անոր ո՞վ, ի՞նչ մարդ ըլլալը
 դիտնալէ յետոյ, ինչ որ քաղաքավարութեամբ
 ու ակնածանօք կը հարցընեն, հաւ մը, դաւ
 մը, ոչխար մը կամ նոյն խկ երկնջ մը կը
 մորթեն՝ անոր արժանիքին համեմատ՝ ի պատիւ
 յարգելի հիւրին. եթէ հիւրը ծանօթ եւ հա-
 զուազէպ մէկն է, կը նուիրեն անոր լաւ ձի
 մը որուն փոխարէն հիւրը կը վերադարձնէ իր
 ստացած նուէրը կամ կը փոխարինէ իր հեծած
 նոյնգին հետ:

Եզիտիններու մէջ առած է դարձեր «Երկինք,
 հիւր մը տուր, միս մը ուտենք», թէեւ այս ա-
 ռածը Հայաստանի բոլոր բնակիչները ունին,
 իւրաքանչիւրը իր սիրած կերակուրը խնդրե-
 ւով:

Եզիտիններու հիւրասիրութենէն կը պատմուի
 հետեւեալ սրտաշարժ անցքը:

Քիւրտ թողուն մը, եզիտի հարուստ փերի մը
 թշնամացած, կը յաջողի կոռւի մը մէջ եր-
 կու անգամ վէրք տալով, զանի իր մօրը հետ
 պերի բռնել ու իր տունը տանել, եւ իր վրէժը
 լուծելու համար անոր վէրքերուն մէջ մտնի
 անցուցած կը սկսի վառել ու զուարճանալ.
 փերին մայրը անտարբեր եւ անկարեկից դիրքով
 մը հանդարտութեամբ կը դիտէ իր զաւկին չա-
 րատանջ վիճակը, իսկ փերը տանջուելու նշան
 մը ցոյց չի տար արտաքուստ. քիւրտը տես-
 նելով որ իր գործադրած չարչարանքները կ'ար-
 համարհուին եւ անկէ աւելին չկրնալով պոսնել՝
 սրտնեղած՝ խօսքը եզիտուհիին ուղղելով
 կը հարցնէ,

—Քարսի՛րտ կնիկ, ինչպէ՞ս կը դիմանաս ա-
 ռանց լալու. եւ կոծելու՞, երբ որդիդ այսպէ՞ս
 կը պատժուի:

Եզիտուհին կը պատասխանէ.

— Ես քարսիրտ չեմ, իմ սիրտս շատ փա-
 փուկ է, ու իմ աչքերս ո՛չ միայն որդւոյս տան-
 ջանքները տեսնելով կ'արտասուեն, այլ ամէն
 խեղճութիւններու ու թշուառութիւններու
 հանդէպ առուններ կը վազցնեն. բայց, եթէ ես
 Եզիտի եմ եւ ամուսինը Աւտալ փերին, քոյրը
 Ամար փերին, եւ եթէ գիտեմ իմ ցեղիս պատիւը

յարգել պէտք է որ տոկամ ու դիմանամ քու իմ
 որդւոյս տուած չարչարանք տեսնելով. եւ ամօթ
 կ'ըլլար ինծի, անպատուութիւն մեր ցեղին
 եթէ ես արտասուէի ու դայի քեզմէ խնդրել
 որ ալ չտանջես զայն, որովհետեւ դուն այն-
 քան ստոր եզար որ զայն վիրաւորել է. եր-
 կուքս գերի բռնելէ յետոյ երբ քու շէմքիդ
 տակովն անցուցիր փոխանակ Աստուծոյ հիւ-
 ըի պէս ընդունելու եւ քու վեհանձնութիւնդ
 ցոյց տալու, դուն դեռ ուժդ կը բանեցնես
 մեզի դէմ որ բոլորովին անկարող ենք:—Ձէ՛,
 ես չեմ արտասուեր եւ քեզի պէս անսիրտներէ

զթութիւն չեմ խնդրեր եթէ նոյնիսկ իմ բոլոր
 զաւկներս քու ձեռքդ ինչան ու դուն անոնց
 իւրաքանչիւրը նոր նոր տանջանքներով մեռ-
 ցընես. եւ եթէ աս իմ փղաս է, իմ ձեռքե-
 լուս ու սրբիս վրայ մեծցած ու իմ կաթովս
 սնած, անի առանց ցաւի, առանց քեզ աղաչելու
 պիտի տանի այս բոլորը եւ պիտի մեռնի ա-
 ռանց արատաւորելու իր եւ իր ցեղին պատիւը:

Քիւրտը, ամօթահար եւ ցասկոտած, իր գոհին
 կը դառնայ եւ կը հարցնէ.

— Ի՞նչպէս ես, հանգի՞ստ ես. ասկէ աւելի
 տանջանք կրնա՞յ ըլլալ, կամ եղա՞ծ է:

Եւ ան կը պատասխանէ.

— Այո՛, կրնայ ըլլալ եւ ես կրած ունիմ.—
 ասկէ երկու տարի առաջ, ձմեռ ժամանակ,
 ճամբորդ մը, լսելով մերտան հիւրասիրութիւնը,
 ճամբորդելէ յոգնած, կ'ուզէ մեր տունը գալ եւ
 չարաթ մը հանգիստ առնել. ճամբան փոթորիկի
 կը բռնուի եւ կը խեղդուի. — այդ զէպքը
 լսելով աւելի տանջուեցայ, աւելի ցաւ զգացի
 քան կրելով քու ինծի տուած չարչարանքդ,
 քան իմ վէրքերուս մէջ անցուցւած վասած
 մտքերդ որ վէրքերս կը մծրեն եւ իմ մահս կը
 փութացնեն...:

Քիւրտը, ամչցած եւ խղճահար, անմիջապէս
 մոմերը կը հանէ անոր վէրքերէն ու «բարի
 մարդը» կը մեռնի, որմէ յետոյ պատուով ետ
 կ'ուղարկէ անոր գերի մայրը:

ԱՐՄԷՆ

(Շարունակելի)



ԷՏԿԱՐ ՇԱՀԻՆ

«Անասիտ»ի 11րդ թուով հրատարակած էինք
 ֆլեման ժանեների ներքողալից յօդուածը Էտ-
 կար Շահինի բուանթ-
 սէշներուն և օֆօթ-
 ներուն մասին: Ուրախ
 ենք ծանուցանելու որ
 մեր բարեկամին յաջո-
 զութիւնը՝ գեղարուես-
 տական այդ նուրբ ու
 սիրուն ճիւղին մէջ զոր
 յանկարծակի ընդգր-
 կեց, տարօրինապէս
 արագ քայլերով կ'ըն-
 թանայ, և արդէն վար-
 պետի մը դիրքը կը
 պատրաստէ երեսասարգ
 հայ արուեստագէտին:
 Շահի ունի իր մաս-
 նաւոր նօթը, իր սե-
 փական գրոշմը, թէ՛
 իր դիտողութեան շքր-
 ջանակին, թէ՛ կեանքը
 ըմբռնելու և թարգ-
 մանելու իր եզանակին
 և թէ՛ իր աշխատու-
 թեան մեթոտին մէջ:
 Այդ ինքնուրոյն ըմ-
 բռնումը և արտայայ-
 տութեան այդ անկեղծ ու
 հզօր անձնականութիւնը



Շքմ'ինօ

որոնք իրական
 արուեստագէտի
 մը անհրաժեշտ
 յատկանիշներն
 են, սկսած են շատ
 փայլուն կերպով
 դնահատուիլ ոչ
 միայն բարիգեան
 գեղարուեստա-
 կան «ամուլին
 կողմէ, այլ և
 արուեստասէր
 հասարակութե-
 նէն, ուր Շահին
 արդէն կը հա-
 շուէ իր իւրա-
 քանչիւր բլան-
 շին սպասող բա-
 ւական բազմա-
 թիւ «ամաթէօն»-
 ներ: Վերջերս
 իրեն դիմած են
 ծանօթ Տրէյֆիւսեան հը սպարարակազիր Պ. Յ. Բոնրե-
 լիի կենդանագիրը բուանթ-սէշով գծելու համար:

La Revue d'Artը բուանթ-սէշի ար-
 դի վարպետներուն շարքին մէջ իբրև մեծ սկըս-
 նակ մը անուանած

է Շահինը, և հրա-
 տարակած է իր լա-
 տագոյն ըլանշներէն
 երկուքին, «Շաթօ-
 սուփ»ին և «Շքմի-
 նօ»ին վերաբարդը-
 բութիւնները (զոր
 այդ հանդէսէն փոխ
 առնելով, կ'արտա-
 տպենք «Անասիտ»ին
 մէջ): Այդ երկու
 «բլանշ»ները Շահի-
 նի սողանդին ամե-
 նէն հարազատ եւ ու-
 մենէն յաջող արտա-
 դրութիւններէն են. իր
 «Շքմիւնօն», Ֆրանսայի
 ու մասնաւորապէս Բա-
 րիզի փողոցներուն թա-
 փառականին դէմքն
 ու ժէսթը խաացնող
 ջղուտ համադրութիւն
 մը կը ներկայացնէ.
 «Շաթօ-սուփ»ը կը յա-
 ւերժացնէ մէկ քա-
 յանաճ, Լքուած կամ
 ինկած մարդ-
 կայնութիւն-
 ներու:

նի ցաւագին տիպարներ յորհած:



Շաթօ-սուփ

La Revue
 d'Ar tը պի-
 տի հրատա-
 րակէ իր յա-
 աջիկայ թու-
 ով մասնաւոր
 ուսումնասիրու-
 թիւն մը Շա-
 հինի փորագը-
 բութեանց մա-
 սին:

Եթէ, դիպու-
 ածով, գտնուին
 Հայեր որ փա-
 փաքին ունենալ
 էտկար Շա-
 հինի բլանշնե-
 րէն, կը խնդրուի
 որ հաճին դիմել

Տեսնելու հասցէին .
 M. Ed. Sagot, 39 bis, Rue de Chateaudun, PARIS.

ՎԱՐԴ ԵՒ ՍՈՒՍԱԿ

Շար. (*)

— 0 0 —

Ը .

Փուշը , սաստիկ բարկանալով , քունը կտրեց եկաւ Վարդին գուռը կեցաւ , վրէժխնդիր ըլլալու համար եթէ Սոխակը այն կողմերուն մտանար :

Սիրասենչ Սոխակը , ինչպէս վերեւ ըսինք , թագուհւոյն շնորհքին վստահելով , համարձակեցաւ պալատին մտնել որի յուսալով որ միջոց մը կը գտնէ Վարդին գեղատիայ ղէմքը տեսնելու : Իսկ արիւնարբու անխիղճ Փուշը յանկարծ տեղէն ցատքելով՝ նիզակն անոր լանջը մխեց եւ զայն ի մահ վերաւորելով՝ այնտեղէն փախչելու ստիպեց :

Յետոյ , թագուհւոյն մօտ գնաց ու ըսաւ . «Տիրուհի , քու մեծութիւնդ տեղեկութիւն չունի . ոլոքամերկ գձուձ սրիկայ մը , հնարքով մը եւ թոյլտուութեամբը անհաւատարիմ նոճի-Բարապետին՝ Վարդարանը մտած ըլլալով , գիշերն ի բուն գոռալով գոչելով քաղաքացիներն անհանգիստ կ'ընէ : Եւ ինչ որ աւելի անպատեհ է , քու անունովդ սիրոյ երգեր յօրինելով կ'եղանակէ միշտ եւ կը պանծայ իբր թէ քու պայծառափայլ ղէմքիդ սիրահարուած է , որով ըրոյր լսողներուն միտքը կը պղտորէ , եւ կարծողներ իսկ կան թէ քու հաւանութեամբը կը շարժի այսպէս : Արդ եթէ իմ տէր թագաւորս՝ քու հայրդ՝ իմանայ այս բանը , ի՛նչ պատասխան պիտի տամ , ես որ իր կողմէ պահապան եւ ղինակիր կարգուած եմ այսպիսիներու համար , որպէսզի արատ մը չգայ քու անբիծ անունիդ : Ուստի սուրս բարձրացնելով հալածեցի զանի . բայց չմեղցուցի՝ առանց քու հրամանիդ . հիմա՛ եթէ կ'ուզես՝ հրամայէ՛ որ երթամ սպաննեմ զինքը :»

Թագուհին չափազանց բարկացաւ եւ ըսաւ .

«Ի՛նչ անգթութիւն եւ ի՛նչ բարբարոսութիւն է որ քեզնէ կը լսեմ . ո՞ւր տեսնուած ու լսուած է որ օտարական հիւր մը՝ քաղաք մը ապաստանելու առնելով թագաւորի մը հովանաւորութեան տակ , առանց գատաստանի քննութեան զանի անիրաւաբար խոչտանդեն . ի՛նչ մեղք գործեց որ կը համարձակիք զինքը վերա-

(*) Տես «Անահիտ», 1898—99 , Ա. տարեշրջան , թիւ 1 , 2 , 4 , 5—6 , 7 , 8 :

ւորել եւ հալածել : Եթէ իմ անունովս սիրոյ երգեր ու գովեստներ յօրինելով քաղցրանուագ եղանակով կ'երգէ , ի՛նչ է ասոր մէջ անոր յանձանքը , կամ ատով ի՛նչ արատ կուգայ իմ անունիս : Չէ՞ մի որ աշխարհիս սկիզբէն մինչեւ վերջը՝ հասարակութեան բնական օրէնք է գովելին գովել , պարսաւելին պարսաւել եւ սիրելին սիրել : Միթէ մէկը արեգակին պայծառութիւնն ու գեղեցկութիւնը գովաբանելով եւ լոյսին ծագմանը սիրողաբար փափաքելով մե՞ղք գործած կ'ըլլայ , կամ ամօ՞թ մը կուգայ արեգակին , եւ կամ անոր անունին արա՞օ կը բերուի : Քեզի ըսե՛մ , շատ նախանձոտ ու անիրաւ մէկն ես դուն , որ այդ չարիքը գործեր ես . գնա՛ ուրիմն շուտով , եւ սպեղանի դնելով անոր վէրքը ապաքինէ , եւ ա՛լ արգելք մի՛ ըլլար իմ Վարդարանիս մէջ անոր ազատ պտըտելուն ու դուարձանալուն , ու ա՛լ ոչ ոք թող համարձակի զանի խոչտանս վել եւ նեղել :

Թ .

Դիտոյին այս խօսքերէն Փուշը սաստիկ զչարելով գնաց թագաւորին , ամբաստանեց եւ ըսաւ .

«Տէ՛ր արքայ , քու մեծութեանդ հրամանով ծ սող գինակիր եւ պահապան կարգուեցաւ քու թագուհի աղջկանդ պալատին գուռը , որպէսզի ստամբակ մէկը չգայ եւ ցոփութիւն մը գործելով իմ թագուհւոյս պայծառ անունին արատ մը չբերէ : Բայց ահա քանի մը օրէ ի վեր , ոլոքամերկ գձուձ ստահակ մը՝ հարստութիւն զիգելու հողը մէկզի դրած , եւ ղոնսպանին մեղկութեամբը կերպով մը Վարդարանին մէջ մուտք գործելով , մեծ թագուհւոյն անունով զանազան սիրոյ երգեր կը յօրինէ , գիշերն ի բուն բարձրադաղակ ձայնովը Վարդարանը կը զորդէ եւ կը պարծենայ թէ թագուհւոյն սիրահարած է . եւ այս խօսքերուն վրայ ամենքը երկմտած՝ բամբասանքի շշուէչներով իրարու ականջը կը լեցնեն : Այս եղելութիւնն իմանալով , բարկութեամբ լեցուած , սրիկան զացի գտայ , հալածեցի եւ վերաւորեցի՝ բայց ոչ մահացու կերպով . յետոյ թագուհւոյն ղիմեցի եւ եղածն իմացուցի , հրաման խնդրելով զանի սպաննել . բայց ան , փոխանակ ինձմէ՛ գոհ ըլլալու , զայրացած յանդիմանեց զիս եւ ներհակը հրամայեց :

«Ուստի եկայ քու մեծութեանդ եւ կ'աղա-
 չեմ ներողամբտ ըլլաւ իմ համարձակութեանս
 որ կարճատոտ խօսքով մը քեզի ըսեմ թէ քու
 թագուհի դուստրդ այլ եւս նոյն ամբողջեալ
 կոկոնը չէ՝ ինչպէս երբ զանի գահը բազմե-
 ցուցիր • այլ հիմա անոր զէմքն ու երեսը
 բացուած են , եւ ինքը կը հակի դրուատիք-
 ներու հաճոյքին , եւ կը թոյլատրէ որ վստահ
 ու համարձակ սիրոյ երգեր եղանակեն եւ
 պարծենան իբր թէ թագուհին կը սիրեն : Ես
 յայտնի ակնհերեւ կը տեսնեմ թէ անոր այս
 թոյլատուութեամբը , կամ ուղիղը ըսելով՝ ա-
 նոր հաւանութեամբը , քիչ ժամանակէն Վարդ-
 դարանը պիտի լեցուի գոհեհիկ եւ սինլքոր սի-
 րահարներով : Այս պատճառով , իմ պարտակա-
 նութիւնս կատարելու համար , ամէն բան իմա-
 ցուցի , որպէսզի քու տէրութիւնդ չբարկանայ
 ինծի թէ՝ ինչո՞ւ կանուխէն լուր չտուիր »

Սոհեմ թագաւորը այս լսելով , հասկցաւ ա-
 նոր բանասրկու քսութիւնը , եւ ուզելով
 ինքնին փորձով գործը թագուհիէն ստուգել ,
 Փուշին ըսաւ • «Ո՞ւր է հիմա այդ սինլքորը »

Փուշը պատասխանեց • «Ապահով եմ որ տա-
 կաւին Վարդարանին մէջն է , վասնզի ա՛յնչափ
 սիրահարած է թագուհւոյն եւ ա՛յնչափ անոր
 սպաւելնած , որ ոչ թէ ծեծով ու սպանալի-
 քով , այլ եւ մահառիթ ասնջանքներով ալ
 մէկը չի կրնար զինքը անոր սէրէն ու հովա-
 նաւորութիւնէն բաժնել , եւ չեմ գիտեր ինչո՞ւ »

Այն ատեն , թագաւորը հրամայեց իր որ-
 սորդներուն որ երթան վարձ լարեն եւ զանի
 ողջ ու անվնաս օրսալով իրեն բերեն :

Որսորդները գացին , վարձը լարեցին եւ
 ընդեղէնի հունտեր տանելով կը սպասէին որ
 ողորմելի Սոխակը որոգայթին մէջ իյնայ : Եւ
 այնխեղճը , որ այն մէկ քանիօրը լուռ անցու-
 ցած էր , ու վէրքերը քիչ մը բուժուած ըլլա-
 լով՝ անուզողով Վարդարանին մէջ կը շրջէր ,
 երբ ընդեղէնի հատերը տեսաւ , մօտեցաւ փորը
 կշտացնելու , բայց զգուշութիւն չընելով՝
 որսորդներուն որոգայթը ինկաւ , որոնք զանի
 բռնելով թագաւորին տարին , եւ անալ հրամայեց
 զանիկա բանտարկել երկաթէ վանդակին մէջ ,
 մինչեւ որ թագուհւոյն բերնէն եղելութիւնը
 իմանալով , դատաստան եւ հատուցում ընէ :

Նմանապէս , թագուհին ալ , վերահասու ըլ-
 լալով Փուշին քսութեանը եւ Սոխակին բան-
 տարկութեանը , շատ նեղուեցաւ , եւ պատեհ ժա-
 մու մը կը սպասէր որ իր արքայ հօրը հետ
 խօսի եւ դատաստանով յայտնէ Սոխակին
 անմեղութիւնը եւ Փուշէն վրէժը լուծէ :

Ժ .

Բայց ըստ որում աշխարհիս իրերը շրջա-
 թաւալ անխնեքու պէս անկայուն են եւ փո-
 փոխական , ու լուսնին ներքեւ գտնուած ամէն
 բան , բազմատեսակ փորձութեանց ենթակայ ,
 միշտ պատրաստ կարծես կը սպասեն յեղա-
 կարծ կայծակի մը ժամանուածին , այդ օրերը
 յանկարծակի անհնարին վիշտ ու նեղութիւն
 եկաւ իջաւ Վարդարան քաղաքին վրայ , վեր
 ի վայր տապալեց վայելչութիւնն ու անդոր-
 րութիւնը քաղաքին ու անոր բնակիչներուն :

Վասնզի շրջակայքը գտնուող ամառուան
 թաղաւորը , Յուլիս-Կայսրը , Վարդարանին
 զեղեցկութիւնն ու վայելչութիւնը իմանալով ,
 նախանձը շարժած՝ հնոցի պէս եռաց : Եւ հրա-
 մայեց իր Արփի-Լուսաւոր սպարապետին որ
 պատրաստուի եւ սպառազինուի հրասապ զէն-
 քերով եւ յարձակի Վարդարան քաղաքին
 վրայ , եւ հրոյ ճարակ տալով այրէ եւ տոչորէ
 զամենքը , եւ ջերմութեան մէջ ձգելով զանոնք
 պապակեցնէ , եւ Վարդարանը անապատ դար-
 ձնէ՝ ինչպէս հնձուած արտ մը , կամ ինչպէս
 զաշտ մը խորչակէն տօթացած :

Յուլիս-Կայսեր հրամանին համեմատ , Արփի
 մեծ սպարապետը հրահագոյն զէնքերով լու-
 սաւոր սպառազինուած , եւ իր յատուկ օթա-
 րանէն՝ այրեցեալ գօտիին կողմէն՝ եկաւ յար-
 ձակեցաւ Վարդարանին վրայ եւ սկսաւ իր
 ցնցուղներուն հրացանութեա՛քը զամենքը
 ջերմեցանելով պապակեցնել , որուն զօրեղ
 տապէն որթին ողկոյցներուն երեսները սեւ-
 ցան , եւ տանձերն ու ծիրանները զեղնագոյն
 ներկուեցան , կեռասները արիւնբերանգ եղան ,
 եւ բաւերը մղտացան , բոյսերուն կանանչու-
 թիւնը խարշտեցաւ եւ մանկահասակ նորաւ
 բողբոջ տունկերուն բազմութիւնները թառա-
 մելով մարեցան • Գարուն-թագաւորը ջանաց
 գլխադրել անոր , եւ իր զօրականներն ու զօ-
 րապետները՝ ինչպէս գետերն ու աղբիւրները՝
 ժողվեց , եւ զատ զատ տեղուանք լեցուց իր
 բազմաթիւ մատուակներն՝ ինչպէս ցօղի եւ
 անձրեւի շիթերը , եւ ստոնատեսակ ջուրերը
 սպառազինելով կը յորդորէր զանոնք որ սա-
 զարդապաճոյճ Տունկ-Ջօրականներն ու երփ-
 ներանգ ծաղկափթիթ Բոյս-Գործակալները զո-
 վացնելով Արփիին ջերմութեանը զէմ պա-
 տերազմ մղեն :

Բայց չկրցաւ գիմանալ , վասնզի ան կ'այ-
 րէր ու կը տոչորէր բոլոր իր զէմը ելլողները :

Եւ բաւական զօրապետներ , որ՝ ինչպէս զեւտերը՝ մատուռակի սառնորակ զէնքերը կը մատուցանէին , ամենքն ալ փախուստի ճամբան բռնելով գոլորչիի նման կը հալածուէին :

Եւ ոմանք ցամքած առուներու պէս կը մեռնէին , եւ ծաղկատեսակ գործակալներէն եւ կանաչասաղարդ տասնապետներէն ոմանք ալ ծարաւէն նուաղած գետինը կ'իյնային : Իսկ քաղաքին բնակիչները սաստիկ նեղութենէն քրտինքի ծովու մէջ կ'ընկղմէին : Պարուն-Թագաւորը իր Վարդ-Անթառամ աղջիկը առաւ եւ անհետացաւ խոյս տուաւ Վարդարանէն , եւ ոչ ոք կրցաւ զիտնալ թէ ուր գնաց եւ ապաստանեցաւ : Իսկ լուսաւոր Արփին , Յուլիս կայսեր սպարապետը , քանի մը օր ալ կանգ առնելով , եւ Վարդարանը բաւական խոշտանդելէ յետոյ , քաղքին բնակիչներուն մնացորդը տապի ու տագնապի մէջ ձգելով , դարձաւ իր ճամբան շարունակեց :

ԺԱ .

Աշուն-Դուքսը որ ինքնիշխան կը բնակէր Եւրոպիոյ մասին՝ Արեւմուտքի եւ Հիւսիսի տշխարհին մէջտեղը , Վարդարանին այս պատահածները իմանալով , եւ անդեկանալով թէ Դարուն-Թագաւորը փախած ու Արփի սպարապետը դարձած գացած էր , յարմար ժամանակ նկատեց տիրել անիշխան երկրին , հանեց իր Տերեւթափ սպարապետը , որ ճարտար ու հանճարեղ մարդ մըն էր , եւ անոր պատուիրեց որ հետը բազմատեսակ պարէն առնէ զանազան մրգեղէն , ուտելիք եւ ըմպելիք : Եւ ժողովելով իր բաղձաթիւ երկահնչիւն հովերը , խաբեբայ զօրականներ եւ զօրապետներ , գնաց տիրել Վարդարան քաղաքին , ուր նախ ճարտար առատաձեռնութեամբ , կեղծուպատիր սիրով ու քաղցրութեամբ գնաց բնակիչներուն սիրտը որսալ եւ յետոյ հնարաղիտութեամբ ամենքը մերկացնել ու կողոպտել եւ զգուշ ու պատրաստ կենալ որ եթէ աւելի զօրաւոր թագաւոր մը յարձակի՝ իր անձը ճողոպրել կարենայ :

Տերեւթափ սպարապետը Աշուն-Դքսէն այս պատուէրը առնելով եւ իր տիրոջը խորհրդին համեմատ իր բոլոր պատրաստութիւնները տեսնելով հանդարտութեամբ գնաց Վարդարան քաղաքը մտաւ եւ իր խափշիկ զօրապետներուն հրամայեց որ նախ քաղցրահնչիւն խօսքերով ամենքը համոզելով ամբոխը

տաքութեան պապակուսէն զովացնեն , եւ յետոյ մրգեղէն ուտելիքի եւ խմելիքի պարէններուն բեռները բանալով քաղաքացիներուն շտեմարաններն ու մատանները լեցուց եւ այս հնարքով անոնց սիրտը շահեցաւ :

Այնուհետեւ սկսաւ ձեռքը սաղարգախիտ հարուստներուն վրայ դնել եւ կամաց կամաց զանոնք մերկացուց եւ կողոպտեց :

Եւ որպէսզի քաղաքին բնակիչներուն մէջ տրտունջ չբարձրանայ , Վարդարանին փողոցներն ու յատակները ոսկիով կը զարդարէր բնակիչները զբաղեցնելու համար : Եւ երբ ամենքը մերկացուց , զօրքերուն հրաման տուաւ որ գիշերները ամբոխը սառնաշունչ երգերու եղանակներով խոշտանգեն եւ սարսափեցնեն որպէսզի ապստամբութիւն մը հանել չխորհին , բայց ցորեկը թոյլարարն եւ շողքորթիւն որպէսզի զբօսանքներու մէջ մտքերն ին զբաղի :

Եւ այս եղանակով , ամբողջ ժողովուրդը գիշերը տունը մնալով կը զբօսնէին , եւ ցորեկը գիշերային խնջոյքներուն պատրաստութեանը հետամուտ կ'ըլլային :

Արդ , այսպիսի հնարքներով Տերեւթափ Ասպետը ժողովուրդը իրեն ընտելացնելով , մերթ քաղաքավարութեամբ եւ մերթ խրատութեամբ վարուելով անոր հետ՝ Վարդարան անշքացեալ քաղաքին կը տիրէր :

ՉԱՒԱՐԻԱ ՄԱՐԿԱՐ ԽՕՁԷՆՑ ՏՐԵՒԱՆՃԻ

(Շարունակելի)



Պ . Պ Է Ն Լ Ե Ա Ն Ի Բ Ա Ր Ի Ձ

Պ . Պէնլեան , ծանօթ հայ դերասանապետը , Բարիզ կը գտնուի ամսէ մը ի վեր : Եկած է միջոցներ հայթայթելու որպէսզի յառաջիկայ տարի , Յուլիանոսի միջոցին , Չուխանի «Լէպլէպիճի Հորհոր»ը ներկայացնէ Բարիզ , հայ դերասաններու խումբով մը : Ներթը թըրքական կեանքէն , բայց զործը , թէ՛ իբրեւ լիպրէթթօ (հեղինակութիւն նարկեան դերասանին) թէ՛ իբրեւ երաժշտութիւն , արգիւնք

է հայտադրանքին . Պ . Պենլեանի ձեռնարկը այդ տեսակէտով մեզի օգտակար կրնայ ըլլալ եւ արժանի է ամէն քաջակերութեան : Ուրախ եղանք իմանալով որ Պ . Պենլեան արդէն յուսալից է իրեն հարկաւոր եղած գումարը գրտնելու :

Իր խումբը կազմելու համար Եգիպտոս դառնալէ առաջ, Պ . Պենլեան որոշած է, Բարիզի հայ երիտասարդութեան խնդրանքով , Պէշիքթալիանի «Արշակ Բ . »ը ներկայացնել , արուեստասէրներու խումբի մը օգնութեամբ, քաղաքի հայ հասարակութեան առջև : Շատ սիրուն նորութիւն մըն է ասի մեր գաղթականութեան համար (առաջին անգամ պիտի ըլլայ որ Բարիզի մէջ հայկական թատերախաղ մը ամբողջութեամբ պիտի ներկայացուի) . եւ վստահ ենք որ Պ . Պենլեանի այս ներկայացումը պիտի գտնէ Բարիզի Հայոց կողմէ այն խրախուսանքը որուն արժանի է :

«Արշակ Բ . »ի ներկայացումը տեղի պիտի ունենայ յունուար 14ի իրիկունը , Բոմբաւտուռ թատրոնը, (12 , Boulevard des Italiens) :



Պ Ա Տ Ր Ի Ա Ր Ք Ա Ր Ա Ն Ը

Պոլսէն , ամենատոյգ աղբիւրէ մը , մեզի կը հաղորդեն հետեւեալ քստմեցուցիչ տեղեկութիւնները : Նոյնութեամբ կ'ընդօրինակենք նամակագրին տողերը .

«Գիտէ՞ք ինչի վրայ կը դառնային երկարածից ժողովները որոնք տեղի ունեցան Տատեանի տունը՝ վերջերս , ուր կարգ մը եկեղեցականներ յաճախ հրաւիրուած էին : Դուռը հրահանգած էր Տատեան - Օրմանեան - Նորատունկեան երեւակին որպէսզի թաքրի մը յղեն կառավարութեան , յայտարարելով թէ Հայերը իրենց հաւատարմութիւնը ցոյց տալու համար կը յայտարարեն որ պատրաստ են ծառայելու օսմանեան բանակին իբրեւ զինուոր , ուր որ պարտքը զիրենք կոչէ , եւ թէ Պատրիարքարանը հաճոյքն ունի զայս հաստատելու եւ հաղորդելու վեհափառ Սուլթանին» :

«***ը ու ***ը , եւ իրենց հետեւողութեամբ միւս եկեղեցականներն ալ , համամտութիւն չեն յայտնած՝ հակառակ կարգ մը սպառնալիքներու . վարչութիւնը չէ համարձակած առանց եկեղեցականներու ստորագրութեան Դրան հաղորդել ազգին այդ ենթադրեալ տրամադրութիւնը : Օրմանեան Դրան մատնած է եկեղեցականներէն մէկ քանին՝ իբրեւ խափանարար իր ջանքերուն :

«Պատրիարքարանի «քարու - քեհեասի»ին օգնականը , Արթին է Ֆէնտի , Զապթիէն եւ այլ թուրք պաշտօնատուներ կ'առաջնորդէ հայ կիներ եւ աղջիկներ որոնք թախանձելիք խնդիրներ ունին Դրան կամ Պատրիարքարանին մօտ , եւ կամ բանտարկեալի մը ազատման բարեխօսութիւնը ունին հայցելիք . այդ աղջիկներն ու կիները պաշտօնատանց մէջ կը լըլկուին , կը պղծուին , եւ Արթին է Ֆէնտի իր այս հրէշային կաւատութեան վարձքը կը ստանայ թուրք պաշտօնեաներէն . խեղճերը սարսափած , խելայեղ կը մեկնին , եւ բնականաբար մտքերնուն չեն անցըներ անգամ մըն ալ կրկնել իրենց դիմումը :

« Այս Արթինը հիանալի զոյգ մը կը կ - զմէ Տիգրան Տէր-Ներսէսեան ըսուած վաշխառուին հետ , որ թէ՛ համարակալ է եւ թէ՛ համարառու , թէ՛ քաղաքական ժողովոյ անդամ է եւ թէ՛ միանգամայն՝ ի շընորհս Օրմանեանի՝ Պատրիարքարանի «քարու - քեհեասի» . սոսկալի՛ ճիւղ մը . Պատրիարքարանի անձուկ սնտուկը յաճախ ենթադրեալ ծախքերու կը ծառայեցնէ , որոնց փուռառջան կը պատրաստէ նոյն ինքն այդ վաշխառուն , եւ Օրմանեան կը վաւերացնէ այդ աւազակին փուսուլան . . . »

Ուրեմն պարզապէս որջ մը գտնած է Հայոց Պատրիարքարանը , Երլտըզ Քէօզքին մէկ մանրանկարը . . .

Խնդիր է գիտնալ թէ մինչեւ ե՞րբ հայ ժողովուրդը պիտի հանդուրժէ այս հանդիսաւոր ոճրագործութիւններուն անպատու հաս շարունակումին : Պատրիարքարանին այս ամօթալի կացութեանը հանդէպ , կուսակցութիւններու պայքարները , քաղաքական ծրագրի կամ ուղղութեան վէճերը կը դադրին եւ միակ անխառն զգացում մը երեւան կուգայ , — բացարձակ զայրոյթ — Այդ զգացումը բովանդակ հայ ժողովրդին զգացումն է :

Եւ վա՛յ անոնց որ բաղմաչարչար ժողովրդի մը զայրոյթին հետ կը խաղան :



ՀԱՅԵՐԸ ԹՈՒՐԻ ԹԱՏՐՈՆԻՆ ՄԷՉ

Պ. Աստուծոյ Թալասո, բարեղեան ծանօթ երբ-տասարդ թատրերգակը, ընդարձակ յօդուած մը հրատարակած է *Revue Encyclopedique* զեկեանմբեր 9ի թուոյն մէջ՝ «ժամանակակից թուրք թատրոնին» վրայ: Պ. Թալասո Պոլսեցի Յոյն մըն է, այժմ Ֆրանսական ազգայնութիւն ընդունած եւ Բարիզ հաստատուած: 5—6 տարի առաջ, իր *YArt* տիւղոսով թատրերգութիւնը, «Թէաթր լիպո» իմէջ, շատ սիրուն յաջողութիւն մը գտաւ: Պ. Թալասո, որ իր այս ուսումնասիրութեան մէջ ցոյց կուտայ մանրակրկիտ ծանօթութիւն իր նիւթին, պարզած է թուրք թատրոնին բովանդակ բնաշրջութիւնը՝ վաղեմի «քարակէօզ»ին երկարատեւ ու իսկականապէս թուրք շրջանէն մինչեւ նոր ժամանակներու «մէյուան օյուեու»ն, դարձեալ զուտ թրքական, ու մինչեւ վերջապէս եւրոպայէն թատրերգութիւնը եւ գուսանախաղը, զոր թուրքերը ունեցան այս դարուս երկրորդ կէսէն սկսեալ: Պ. Թալասո, որ բաւական մօտէն ճանչցած է Հայերը (իր քոյրը Հայու մը հետ ամուսնացած է, եւ ինքն իսկ մտերմական յարաբերութիւններ ունեցած է, Պոլիս գտնուած միջոցին, հայ թատերական ու լրագրական շրջանակներուն հետ), մասնաւոր համակրութեամբ մը ի վեր կը հանէ այն էական գերը զոր հայ տարրը խաղացած է եւրոպայէն թրքական թատրոնին ստեղծման ու կատարելազորման մէջ:

«Երբոր Բերայի մէջ իմացան թէ թրքերէն լեզուով թատրերգութիւններ կը ներկայացուին պալատը, ժողովուրդը մեծ ուրախութիւն մը զգաց»: Մինչեւ այն ատեն մտքերնէն չանցուցած մէկ հաճոյքին ազբիւրը նշմարեցին ասոր մէջ: Ամենէն առաջ՝ Հայերը, այն հոտառութեամբ եւ ուշիմութեամբ որ իրենց յատկանիշն են, դաղափարը յղացան ընտանեկան շրջաններուն մէջ տարածել այդ զբօսանքը որուն օրինակը այնքան բարձր տեղէ մը կը տրուէր: Այդ գործը իրենց համար շատ դիւրին եղաւ որովհետեւ ամենքն ալ, Արեւելքի մէջ, ատանց բացառութեան, թրքերէն կը խօսին եւ կը գրեն՝ թուրքերու չափ լաւ: Նախ իրենց տունը հրաւիրեցին կայսերական նուագախմբին եւ Հաստմէին աշակերտները: Երիտասարդ մահմետականները շուտով մտերմացան իրենց ամփիթղրիոններուն հետ, եւ վճռաբար գործի սկսան: Ոչ միայն ազգային թատրոն մը հիմնելու պատիւն էր որ կ'արժարժէր իրենց եռանդը, այլ եւ շատ հզօր հրապոյր մը կը գեղեցկացնէր այդ արուեստագիտական յարաբերութիւնները, այն է հայ ընտանիքներու մէջ մուտքը, ուր իրենց ներկայացուցած թատերախաղերուն իրբեւ-

(*) Սուլթան մեծիան է որ առաջին անգամ Պալատին մէջ եւրոպական խաղերու թրքերէն թարգմանութիւնը ներկայացնել տուած է՝ հայ գերասաններու ձեռքով:

խաղակից կ'ունենային, կնոջ դերերու համար, ոչ թէ՛ ինչպէս սկիզբները, անտօրուս ընկերներ որոնք Եւայի աղջիկները կը կապկէին, այլ այդ հիւրընկալ տուներուն տիկիններն ու օրիորդները, շքեղ արարածներ, անփայլ մոյնքով, սեւ ու թաւշինի մեծ աչուքներով, կիսաբաց նոսն նմանող կարմիր շրթունքներով:»

Պ. Թալասո ոչինչ ըսած է զուտ հայկական թատրոնին վրայ որ միեւնոյն ատեն, եւ նոյն իսկ թուրք թատրոնէն առաջ, հիմնուեցաւ. եւ փափաքելի է որ ամբողջ ուրոյն ուսումնասիրութիւն մը նուիրէր այդ նիւթին, որուն ոչ անտեղեակ է եւ ոչ ալ անտարբեր: Կօդուածին շարունակութեանը մէջ, կը տեսնենք որ Հայը այդ «ընտանեկան» ձեւէն թրքական թատրոնը հանրային հաստատութեան ձեւին կը տարածէ: Կետիկ-Փաշայի թատրոնին մէջ Յակոբ Վարդովեանն է որ կը կազմակերպէ թրքերէն թատերական ներկայացումները: Նախկին որմնածեփ մը, բայց նշանաւոր խաւացուցութեամբ մը օժտուած, Յակոբ Վարդով, Կետիկ-Փաշայի թատրոնին անօրէնը, խանդավառօրէն կը սիրէր թատրոնը, եւ միւսնորմայն եղաւ տնօրէն, տեսարանայարդար եւ խմբին գլխաւոր դերասանը: Հայերէ ընտրեց իր բոլոր դերասաններն ու դերասանուհիները: Այսպէս, Հայերն են որ ժամանակակից թուրք թատրոնին ծնունդին մէջ գլխաւոր դերը կատարեցին:»

Պ. Թալասոյի յօդուածին ամենէն ուշագրաւ մասը այն հատուածն է ուր կը խօսի թուրք գուսանախաղին վրայ, որուն ստեղծողը եւ գրեթէ միակ ինքնատիպ ներկայացուցիչը եղած է Տիգրան Չուխաճեանը: Կը թարգմանենք այստեղ ամբողջութեամբ այդ հատուածը, եւ զխաղ կուտանք թէ խեղճ մեծարուեստագէտին մահուանը առիթով մեր հայ մամլոյն հըրատարակած տափակ գովեստներուն մէջ ոչինչ երեւցաւ այնչափ նրբամտօրէն դնահատական որչափ այս համակիր ըմբռնողութեան էջը:

«... Ահմետ Միտհատէն շատ առաջ որ «Չէյպեքլեր», «Չենկի» եւ «Չիպա» գուսանախաղերուն նուագերգութիւնը յօրինեց, երաժշտութիւնը իր մուտքը գործած էր արդէն օսմանեան հողին վրայ, բնականաբար՝ արեւելեան երաժշտութիւնը, որ այնքան տարբեր է եւրոպականէն:

«Այստեղ, ամբողջ փառքը Հայու մը կը պատկանի, Տիգրան Չուխաճեանին:

«Կ. Պոլիս ծնած՝ 1840ին, Տիգրան Չուխաճեան իր երաժշտական առաջին ուսումնասիրութիւնները կատարեց Տաճկաստանի մէջ: Յետոյ գնաց իր ուսումը շարունակել Իտալիոյ մէջ, Միլանի Գոնսերվատիոնարը: Իր առաջին գործը եղաւ «Արչակ Բ.» օբեռա չորս արարուածով, որ նաուսի թատրոնին մէջ խաղացուեցաւ երեւելի արուեստագէտներով: Այս սկզբնաւորութեան շատ փայլուն յաջողութիւնը

զինքը քաջալերեց իր կեանքը նուիրել այդ ասպարէզին որ ա՛յնքան ապերախ է եւ քիչ չահաբեր՝ մանաւանդ Արեւելքի երկիրներու մէջ :

«Բազմաթիւ հատուածներ իր երկրորդ գործէն , «Ուրմբխայ»էն, Վիեննայի եւ Նաբոլիի մեծ նուագահանդէսներու մէջ զարնուեցան եւ հայ երգահանին անուանը շուտով տարածեցին :

«Յետոյ յաջորդաբար տուաւ «Արիֆ», «Քէօսէ-Քեհեհա», «Լեպլեպիճի Հորհոր աղա» , երեք օրեռեթիւն որոնք ամէն տեղ ներկայացուեցան, մասնաւորապէս Գահրէէ եւ Աթէնք, եւ յառաջ բերին , - մանաւանդ «Արիֆ»ը , - ընդհանուր սքանչացում մը :

«Արիֆ»ի լիպրեթիօն , զոր գրած էր Պ. Ալպորեթօ, Պուալտիէօի «Գիւզին նոր իշխանը» խաղին թրքական մէկ յարմարաւորումն է : Տաճկերէն օրերեթիւն մէջ Ֆոտոթիւնը կը կոչուի «Արիֆ», եւ Պապէն՝ «Հանճի Քիտի» :

«Արիֆ»ի երաժշտութիւնը հրաշայլերտ մըն է . իր տեսակին մէջ անզուգական : Հասարակութենէն միշտ վերահանդրուած շատ մը հատուածներուն մէջ կան մասնաւորապէս , առաջին արարուածին՝ «Թենէ թենենի» երկանուազը (թրաւ լաւ լաւ) , եւ վերջաւորական պարերգը , «Աեֆա կելտինիզ» (բարով եկաք) , երրորդ արարուածին վերջաւորական երկանուազը , «Արիֆ, արթըր ուղաթմա» (Արիֆ , ա՛լ մի երկնցներ) , որ այդ նուագերգութեան «քլուս»ն կը նկատուի, եւ միշտ կրկնել նոյն իսկ երեք կնիւ տրուած է հասարակութեան կողմէ :

«Իր վերջին դիւթախաղ-օրերան. «Զեմթիէ», որ նախ 1891ին Քոնստանտնուպոլիսի ձմեռանային թատրոնին մէջ ներկայացուեցաւ օրիորդ Պենաթիի ֆրանսական խմբին կողմէ, 1894ին վերստին խաղացուեցաւ Պ. Ֆրանճիսիի իտալական խմբին ձեռքով՝ անբոսներու եւ զգեստներու մեծ պերճութեամբ մը՝ Նուրթ-թէաթու-Ֆոնանսէին բեմին վրայ : Այդ վերերեւման առիթով Չուխաճեան բարեփոխեց իր գործը , խօսակցութիւններուն տեղ բարձր ոճով երգեցիկ արտասանումներ գրաւ : Յաջողութիւնը ահագին եղաւ :

«Օսմանեան երաժիշտներուն մէջէն՝ ինքը միայն արեւելեան երաժշտութիւնը մտցուց այնպիսի ձեւի մը մէջ որ անոր եւրոպական օրիւրաւսիտնի վերածումը կարելի կը գարձընէ . եւ , իր գաղափարներուն ինքնատրւ պութեամբը , իր ոճին թարմութեամբը , իր նուագախմբութեանը զունագիւղութեամբ՝ ուր կարնես Արեւելքի արեւուն մէկ ճաճանչումը կը փայլի , իր արուեստը հասկանալի դարձուց օտար հասարակութեան եւ արժանի հանդիսացաւ այն ուժեղ համակրութիւններուն որոնք ամէն կողմէ իրեն կ'արտայայտուէին : Դաշնագիտութեան (harmonie) եւ ֆոնոն . բոլանի մէջ ունեցած հմտութիւնը ամուր հիմ մը կուտայ իր յօրինած կտորներուն , եւ այն հըրապոյրը , որով իր ամենէն չնչին ֆրագներն իսկ տոգորուած են , առով աւելի ներուժ կը դառնայ :»

Գ Բ Բ Զ

(ՊՈՒՇԿԻՆ)

Ողջո՛յն քեզ , ո՛վ գիւղ , խաղաղ սպաստան Գործի , հանգըստի , ոգեւորութեան ,

Ուր քաղցը մոռացման եւ բախտի դրդում Օրերիս հոսանքն իմ մենակ կեանքում Անցնում , սահում է ա՛յնպէս լուռ , անտես .

Մայրենի՛ անկիւն , ողջունում եմ քեզ : Ես քո՛նն եմ : Ե՛ւ ճոխ խընջոյք , խըրախճանք

Ե՛ւ արքաների պալատները զեղի , Ե՛ւ մոլորութիւններ , խաղեր ու դրօսանք —

Ողջը մոռացայ . . . Այժմ՝ նոցա տեղ՝ Նոր կեանք եմ , ո՛վ գիւղ , քո մէջ վայելում ,

Արձակ դաշտերում , թաւ անտառներում , Անձնատուր եղած պարապ ժամերին —

Բիւր խոկոյններիս այդ ընկերներին : Քո՛նն եմ : Սիրում եմ այս այգին ստուերոտ ,

Նորա զովանին , ծաղկի անուշ հոտ , Այս մարգագետինն հոտեղ , դէզաչար ,

Ուր աղմըկում են առուակներ պայծառ Խաղուն կարկաչով թըփերի տակին :

Այստեղ իմ աչքին ,

Ուր եւ նայում եմ , հանդէս են դալիս Շարժուն պատկերներ : Տեսնում եմ ահա

Երկու կապտափայլ , հարթ լըճի վերայ Մի բան է յանկարծ սրպտակին տալիս —

Այդ դո՛ւ ես , ձըկնո՛րս , քո առագաստով : Լըճերից այն կողմ ահա եւ շարքով

Կանանչ բըլբուկներ ,

Բազմաչերտ արտեր ,

Դէս ու գէն սըփոռուած խըրճիթներ հեռում , Թափառող հօտեր խոնաւ ափերում ,

Մարագներ ծըխտո , ջաղացք թեւաւոր . . . Այո՛ , ամէն ինչ այստեղ , չորս բոլոր

Տեսնում եմ ինչպէս կըրում է վերան Հեռքեր վաստակի , լիառատութեան :

Եւ այստեղ հեռու ունայն կապանքից , Ես ուսանում եմ — գըտնել , ճաշակել

Ճըլմարտութեան մէջ կեանք երջանկալից : Եւ ուսանում եմ — պաշտել օրէնքի

Անաչառութիւնն անկապանք հոգով , Ականջ չըդընել անկիրթ ամբոխի

Բողոք-տըրտունջին , եւ կարեկցանքով Լըսել ամօթխած , երկչոտ աղերսանք ,

Աղերսին տալով միշտ ջերմ արձագանք . Ես ուսանում եմ — այստեղ աննախանձ Նայել յիմարի կամ շարագործի

Բախտին ու փառքին բազմած սխապանձ
 Մեծութեան գահին անարդարացի :
 Ո՛վ դուք դարերի պատգամախօսներ ,
 Ես ձեզ եմ այստեղ իմ կոչը ուղղում :
 Այս վեհ մենութեան վայրումն առաւել
 Բարձր է խընդարեր ձեր ձայնը հընչում :
 Ես հալածում է նիրհը ծուլութեան ,
 Գործի հուր ու խանդ իմ մէջ բորբոքում :
 Եւ ձեր խոկումներն ստեղծագործական
 Ծըլում , հասնում են իմ սըրտի խորքում :
 Բայց ա՜հեզ միտք է այստեղ իմ հոգին
 Արտում թէ դաշտում այս պալարաչատ ,

Մըռայլով պատում :
 Ո՛հ, վիշտ է միայն աչքըս տխրապին
 Եւ տգիտութեան կործանիչ արատ

Այստեղ նըկատում :
 Արցունքի առաջ իսպառ կուրացած ,
 Սառն ու խուլ վըրկայ դառն հառաչանքի ,
 Բիրտ աղայութիւնն կոյր բախտից ընտրուած ,
 Առանց ըզգացման , առանց օրէնքի ,
 Իշխում է այստեղ ձեռքին դաւաղան ,
 Բըռնի դարձնելով իրան սեփական
 Խեղճ երկրագործի ե՛ւ ինչք ե՛ւ վաստակ ,
 Տուն եւ տեղ , արդիւնք ու ժ ժամանակ :
 Ե՛ւ գործն օտարի ե՛ւ գութանն օտար ,
 Մէջքը կորացրած , լախտին հընազանդ ,
 Հերկում է այստեղ ստըրկութիւնն անձար
 Անողոք տիրոջ հողերն արգաւանդ :
 Այստեղ ամենքն էլ ծանրը լըծի տակ ,
 Մինչ մահու դուռը աանում են կըրծքում
 Երկիւղից սպանուած յոյս , հակում , փափազ :
 Այստեղ նորատի կոյսերն են ծաղկում
 Կեղծ չարագործի վաւաչ ու մոլար

Հաճոյքի համար :
 Մատաղհաս որդիք՝ օգնական գործում ,
 Սիրելի նեցուկ ծերուկ հայրերի ,
 Խըրճիթն հայրական թողած ակամայ ,
 Այստեղ տանջում են , որպէս ճորտ գերի ,
 Ազայի տան մէջ դարձած խեղճ ծառայ :
 Ա՛խ , եթէ իմ ձայնն ընդունակ լինէր
 Յընցելու մտքեր , յուզելու սըրտեր :
 Էլ ինչո՞ւ ես դու կըրծքումս շարունակ
 Վառվում , բորբոքում , անարգիւն կըրակ :
 Ինչո՞ւ չէ տըրւած եւ ինձ ահաւոր
 Պերճախօսութեան տաղանդ ու շընորհ :
 Ընկերնե՛ր , արդեօք կը տեսնե՞մ աչքով
 Ես մի օր իմ ազգն ազատ , անհալած ,
 Եւ արքայական քաջայաղթ բազկով
 Անարգ ստըրկութիւնն իսպառ առապալ ս ձ :
 Եւ հայրենիքիս , վերջապէս , մի օր

Կը շողա՞յ արդեօք պայծառ , լուսաւոր
 Ա՛յնքան փափագած , ա՛յնքան տենչայոյզ
 Սուրբ Ազատութեան սիրուն արշալոյս :
 Թարգւ. ԱԼԵՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐԵԱՆ



ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՉ

— 0 0 —

Ա. Զօպանեան հրաւիրուեցաւ Sociéte de géographie de l'Estին կողմէ՝ Նանսի , Էքսնալ Պառլը-Տիւք քաղաքներուն մէջ բանախօսութիւն մը կատարել Հայկական խնդրոյն վրայ : «Անահիտ»ի տնօրէնը , իրեն նիւթ ունենալով «Հայերն ու Ֆրանսան», բանախօսեց ղեկտեմբեր 6ին Էքսնալ, 8ին Նանսի եւ 10ին Պառլը-Տիւք : Բանախօսութիւնը կը ձգաէր բացատրելու այն դերը զոր Հայ ցեղը կատարած է իր ուրոյն պատմութեան ինչպէս եւ տիեզերական պատմութեան մէջ , եւ այն մըտաւորական , քաղաքական ու առեւտրական կապերը որոնք գոյութիւն ունին Ֆրանսայի եւ Հայութեան միջեւ :

Հակառակ ծայրայեղ անկեղծութեան շեշտի մը որով բանախօսը հայ ժողովրդին դառնութիւնը յայտնեց ջարդերու միջոցին Ֆրանսայի անտարբերութեանը եւ գշուանքը Պ. Հանթթոյի «Թուրք» քաղաքականութեանը մասին , ունկընդիր հասարակութիւնը իր համակրական ծափերովը եւ տեղական մամուլը իր խրախուսիչ գնահատումովը ապացուցին թէ համամիտ են հայ բանախօսին :

Միեւնոյն բանախօսութիւնը տեղի պիտի ունենայ յունուար 13ին Թուրքուան , 14ին Ռուպէ , 15ին Լիլ , եւ 19ին Նանթ :

ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹԻ ԳՈՐԾԵՐԸ

Ուրախութեամբ կ'իմանանք որ Պ. Մոռիս Պառէս , որ անձնապէս ճանչցած եւ գնահատած է «Տիգրան Երկաթ»ը , որոշեր է հրատարակել մը գտնել եւ հատորի մը մէջ ամփոփել «Երկաթ»ի բոլոր ֆրանսերէն սպուած եւ անտիպ գրութիւնները :

«Անահիտ»ի յառաջիկայ թուով պիտի հրատարակենք թարգմանութիւնը «Հայաստան եւ Յունաստան» տիտղոսով բանախօսութեան , զոր «Տիգրան Երկաթ» Աթէնքի մէջ արտասանած է եւ որուն բնագիրը մինչեւ հիմա անտիպ մնացած է :

6177 8090100ԻՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Պատասխանելէ առաջ այն երկարածից շատագուժականին որով Պ. Չերազ կը նկրտի ծայրէ ի ծայր անքերի ցոյց տալ Վարժապետական-Օսեան խմբակին ազգային գործունէութեան զիւանագիտական ուղղութիւնը, ստիպուած եմ սա պարզ հարցումը մէջտեղ դնել. — Արդեօք ճշմարտութեան կէտ առ կէտ համաձայն է այն եղանակը որով Պ. Չերազ իր յօդուածներուն մէջ կը ներկայացնէ 78թ հայկական պատուիրակութեան արարքները: Որպէսզի վաղը մեր ազգային ժամանակակից տարեգրութեանց այդ ամենակարեւոր շրջանին պատմութիւնը կաշեխայտ գրուի զիւանակից ու լուսարանուած ձեւով մը, անհրաժեշտ է որ վերջնականօրէն պարզուին այդ շրջանին մեր ազգային գործունէութեան բոլոր ներքին շտպանակները:

Մինչև ցարդ, միակ անձը որ այդ գործունէութեան պատմութիւնը ուրուագծեց, այդ գործունէութեան զերակատարներէն մին է, Պ. Չերազը: Եւ զիտե՞նք թէ Պ. Չերազ, — որ առեւտով իր «Բրական Փորձեր»ուն յառաջաբանին մէջ առանց վրդովելու կը յիշատակէր իր ուսանաւորներն ու արձակը «սքանչելի», «վսեմ» եւ «հոմերական» գոնոց բարեկամներու կարծիքը եւ իր Գրիչ եւ Մուրիս մէջ ինքզինքը կ'երեւակայէր «արծիւ մը» որուն բարձրաթուիչ սրացքին ներքեւ կը կոկտան իր հակառակորդները, տխուր գորտեր — գիտե՞նք թէ կ'ըսեմ, Պ. Չերազ, ինքն իրեն նկատմամբ անձայրածիր եւ անհարկի հիացումով մը սուղորուած, անշուշտ ամենէն անյարմար անձը պիտի ըլլար անաչառ ու անկողմնակալ կերպով պատմելու համար մեր անցիալին մէկ էջը որուն ինքն իսկ հեղինակներէն մին եղած է. Պ. Չերազ, ինքիմէ անխախտօրէն ու յաւատկալէս գոհ, զատապարտուած էր ամեն ինչ կատարեալ գանձելու այդ պատմութեան մէջ: Եւ այդպէս ալ ըլլած է:

Ինքնագոհութեան այս աղետաբեր ձգտումին ամբողջ վտանգն ու ամբողջ ծիծաղաշարժութիւնը մատնանիշ ընելով պիտի բաւականանայի, եւ մտքէս պիտի չանցընէի զզՂումի մօտ բուն

մը սգալ «Անահիտ»ի Գ. Թուոյն յօդուածով: «Պ. Չերազի ազգանուէր կեանքին հանդէպ յարգանք» յայտնած ըլլալէս, եթէ Պ. Չերազ շատացած ըլլար, հայրենասիրական նարկիսամուլութեամբ մը, իր գործունէութեան վրայ անասան բայց եւ անկեղծ ու համոզուած սքանչացում մը դրօշելով:

Գծբողգարար անկարելի է չնկատել որ Պ. Չերազ անկեղծ ըլլալու ձեւը չունի իր յօդուածներու այս վերջին շարքին մէջ. ես կը հակիմ կարծելու թէ համոզուած չէ իր պատմածներուն բացարձակ ճշգրտութեանը, եւ իրողութիւնները կը «բարենորոգէ» ու իր ուղած լոյսին տակ ցոյց կուտայ, զանոնք բուն թերեւտ յանդեցնելու համար իր բարձագած եզրակացութեանը: Արդէն ճշմարտութեան պաշտամունքին անդրդուելի երկրպագու մը չըլլալուն մէկ փոքրիկ ապացոյցը առած էր Պ. Չերազ՝ տարիներով ինքզինքն անուանելով, իր թերթին ճակատը, «Նախկին պատուիրակ՝ Պերլինի Վեհաժողովին», մինչդեռ պատուիրակի մը ֆարսուղարը եղած էր միայն — ինչ որ միեւնոյն բանը չէ. բայց ճշմարտութեան գէժ գործուած այդ մանրիկ մեղքը ժպտուն ներդամաութիւն մը գտած էր շատերու քով, որովհետեւ չէինք կարծել որ Պ. Չերազի ինքնապաշտութիւնը իրողութեանց ինզաթիւրումին կրնար հասնել, եւ իր մէջ «անխոնջ ու եռանդուն աշխատողը», «իր կըրքածը յարատեւօրէն ընողը» կը տեսնէինք, ախպար որ այնքան հազուագիւտ է մեր մէջ — եւ առօր համար, քանի որ զինքը անկարող կը նկատէինք ճշմարտութիւնը զիմսկաւորելու, իր ինքնարեցութեանը աչք կը գոցէինք: Կրթի բորբոքումներու մէջ իրերուն իսկական ծանօթութիւնը կորսնցնելու հակամէտ միտք մը չեմ ունեցած երբեք, եւ մինչև հիմա կը շարունակեմ մտածել թէ Պ. Չերազ իր բովանդակ կեանքին մէջ օգտակար ըլլալու համար ո եւ է ջանք չէ խնայած եւ չի խնայեր. եւ այդ տեսակէտով, որչափ ալ իր գործունէութեանը շատ մը կողմերը քննադատելի ըլլան, Պ. Չերազ իբրեւ գործօն եւ անվհատ «փոռփականախթ» մը՝ միշտ գնահատման արժանի պիտի մնայ:

Սակայն ինչ որ աննորելի կը գտնեմ — եւ ատի կը խախտէ իմ յարգանքս Պ. Չերազի նրկատմամբ, որովհետեւ իմ յարգանքս անկեղծներուն համար է, — այդ անուղղամտութիւնն է որով Պ. Չերազ չէ քաշուած իրողութիւններ փոփոխելէ կառ նպատակաւոր սքօզումներով աշխկերպելէ:

իր ընդարձակ պատասխանին մէջ Պ. Չերազ
 Ի վեր կը հանէ իմ քննադատութեանս մէջ սը-
 պրդած մէկ քանի մանրամասնութեան վրէպ-
 ներ : Ես յօժարակամ կ'ընդունիմ այդ մէկ
 քանի վրէպները գործած ըլլալս : Այսպէս՝
 յիշողութեան պակասով մը , Կորչաքոֆին
 վերագրած եմ “Anatomie ou autonomic”
 խօսքը զոր Իկնաթիեֆ արտասանած է . նմա-
 նապէս, անճիշդ տեղեկութեան մը գոհ եղած եմ
 Պոլսեցի Պ. Փորթազալեանը Վանցի նկատելով :
 Բնաւ չեմ վարանիր խոստովանելու որ սը-
 խալած եմ այդ մէկ քանի մանր կէտերուն
 մէջ : Եւ շատ գոհ պիտի ըլլայի եթէ Պ. Չերազ
 ալ միեւնոյն բանը ընէր եւ հրապարակաւ
 ընդունէր տեսակ մը սխալներ , — ինչպէս որ
 ըրած է ատենով ինծի հետ ունեցած իր անձ-
 նական խօսակցութեանցը միջոցին : Յաւա-
 լին հոն է որ իմ «մանրամասնութեան վրի-
 պակներս» ոչ մէկ նշանակութիւն չունին
 խնդրոյն չամբողջութեանը տեսակէտով , եւ
 իրերուն երեսը ո եւ է կերպով չեն փոխեր ,
 մինչդեռ Պ. Չերազին կամաւոր ու նպատակա-
 ւոր խեղաթիւրումները խնդրոյն հիմունքին
 հետ կապ ունին եւ մեր ժամանակակից պատ-
 մութեան ամենէն նշանակալից էջերէն մէկուն
 վաւերական արձանագրումին գործը կը վը-
 տանգեն : Գիտեմ որ Պ. Չերազ այդ խեղաթիւ-
 րումներն ընելու մղուած է իր միծանուն
 վարպետներուն եւ գործակիցներուն քաղա-
 քականութիւնը պաշտպանելու ձգտումէն .
 բայց երբեք ներքին չէ որ հրապարակային
 գործիչ մը Ճշմարտութիւնը գոհէ իր սիրած
 վարպետներուն յիշատակը պաշտպանելու
 համար . որովհետեւ ամէն սէրէ, ամէն հիացումէ
 գերիվեր պէտք է որ դատուի Ճշմարտութեան
 սէրը : Եւ արդէն Պ. Չերազ ո եւ է օտիպողու-
 թիւն չունէր իր սիրած վարպետներուն —
 զորոնք ես ալ կը սիրեմ իրեն չափ բայց իրմէ
 տարբեր եղանակով մը, — յիշատակը պաշտպա-
 նելու . իմ քննադատութեանս մէջ ոչինչ կայ որ
 Վարժապետեանին կամ Օտեանին յիշատակին
 համար վիրաւորիչ ըլլայ . ես ցոյց տուած եմ
 Վարժապետեանն ու իր խորհրդակիցները՝
 իբրեւ ստեղծողները հայկական խնդրոյն, եւ 77-
 78ի տառէին «առաջին արարուածին» մէջ գնա-
 հատած եւ ներքոյն կամ անոնց ընթացքը, —
 Սան-Սթէֆանօի դաշնադրին 16րդ յօդուածին
 ստացումը , մինչեւ Պերլինի վեհաժողովին հայ
 պատգամաւորութիւն մը զրկելու եւ միւս
 կողմէ՝ միեւնոյն ատեն՝ Ռուսիոյ կայսեր մաս-

նաւոր պատուիրակ մը զրկելու որոշումը .
 այդ բոլորը արամաբանական եւ ճիշդ գտած
 եմ . բայց Պերլինի վեհաժողովին բացումէն
 յետոյ , Պոլսոյ հայ վարիչներուն եւ իբրեւ
 Պերլինի պատուիրակներուն գործունէութիւնը
 ինծի թուած է անճիշդ , եւ նոյն իսկ վնասա-
 կար : Նախկին ուղղութեան այդ փոփոխման
 մէջ կալածած եմ սեանել օտար — այսինքն
 անգլո-թուրք — ազդեցութեան դերը : Պ. Չե-
 րազ ուրեմն իբաւունք չունի զիս Վարժա-
 պետեանի «ամբողջ քաջաքականութեանը»
 դատափետող մը ներկայացնելու . այդ իսկ խե-
 ղաթիւրում մըն է , եւ ամենէն կարեւորներէն
 մին իր ուսումնասիրութեանը : Վարժապետ-
 եան-Օտեան խմբակին գիւնասպիտական սխալը
 նշանակած ատենս , շատ յստակ կերպով յայտ-
 նած եմ որ այդ սխալը մտքէս երբեք չեմ ան-
 ցընէր վերագրել ո եւ է անաշխու ձգտում-
 ներու (զոր այդ վեհադի ազգասէրները անկա-
 բող էին ունենալու) . այդ սխալը որոշապէս
 վերագրած եմ անճիշդ հաշուի մը : Եւ փոխա-
 նակ արատաւորուած մեծ յիշատակ մը պաշտ-
 պանելու ձեւն աննելու , ինչ որ ընելու ոչ
 իրաւունք եւ ոչ պատճառ ունէր , Պ. Չերազ
 ուրիշ պարտք չունէր կատարելիք , բայց ի՞նչ
 բացարձակ անկեղծութեամբ ու ճշդութեամբ
 պարզել իրողութիւնները , եւ քացասել այն
 պատճառները որոնք մղած են Վարժապետեան-
 Օտեան խմբակը՝ այդպէս գործելու :

Արդ , իր վարպետները պաշտպանելու այդ
 քիչ յանձնարարելի եղանակը , ինքնին , փաստ
 մը աւելի է հաստատելու համար թէ Վարժա-
 պետեան-Օտեան ծրագրին վերջին մասին դէմ
 ուղղած քննադատութիւններս անհիմ չէին :
 Մարդ պէտք է՝ զգար իրողութիւնները շարեւ-
 լու երբ դադափարի մը բացարձակ ճշդու-
 թեանը համոզուած է : Ռուսիոյ պարտաւոր եմ
 Պ. Չերազի ուսումնասիրութեան եզրակացու-
 թեանցը մասին կարծիքս յայտնելէ տուալ ,
 զրազիլ Պ. Չերազի պատմած իրողութիւննե-
 րուն Ճշմարտութեան հետ առաւել կամ նուազ
 համապատասխան ըլլալուն խնդրովը : Այս իրն-
 դիւր լուսարանելու համար , պիտի դիմեմ
 թանկագին ազբիւրի մը , Ստեփան Փափազ-
 եանի Յուշատետրին : Այդ կարեւոր տղքիւ-
 մանին մէջ , որ մինչեւ հիմա անտիպ մնացած
 է , Ստեփան Փափազեան , որ 77—78ի դրուադին
 առաջնակարգ դերակատարներէն մին է
 եղած , արձանագրած է , ինք իրեն համար ,
 ակներեւ անկեղծութեամբ մը , Պերլինի հայ

պատուիրակութեան արարքները՝ օրը օրին : Փափագեանի Յուշատետրը, — զոր «Պատասխանատուութիւնները» տիրադատով յօդուածիս հրատարակումէն քիչ յետոյ հանդուցեալ հանրամատիւ երեսփոխանին ազգականներէն մին ինծի զրկեց, հաստատելով անոր բացարձակ վաւերականութիւնը եւ արտօնելով անոր հրատարակումը, — ինքնին արդէն շատ սուր շահեկանութիւն մը ունի «մտածող» հայ ընթերցողին համար, որովհետեւ մեր ժողովրդին անկարգապահ, անորոշ, նստմուռ (բառին գէշ իմաստով) անիշխանական բարքերուն վրայ զուեշտականօրէն սարսոնցեցի լոյս մը կը սփռէ : Բայց բաց ի այս ընդհանուր շահեկանութիւնէն, այդ տոքիւմանը ինծի համար ստամանուր շահեկանութիւնը ունի, որ միեւնոյն առամին մէկ ուրիշ դերասանին կողմէ պատմուած այս տեղեկագրութիւնը բարձրովին արբեր է Պ. Չերազին վիպումէն, — եւ տարբեր՝ ճիշդ ամենէն կարեւոր կէտերուն վրայ, այսինքն Ռուսիոյ հանդէպ Հայոց վարձուներին, Նուպարի հետ Հայոց պատրիարքարանին բռնած ընթացքին նկատմամբ, եւն : եւ Ստեփան Փափագեան, որ արդէն իր պատմուածքով կ'երեւայ միամտօրէն բարի եւ անկեղծօրէն ազգասէր անձ մը, հետու է Պ. Չերազին համակրող մը չըլլալէ : Ընդհակառակն, անոր վրայ կը խօսի ամենամեծ համակրութեամբ եւ նոյն իսկ հիացումով, ու իր շանթերը կը թափէ նորէն Նարպէյին զլխուն (որուն անձնամուտութիւնը, իշխանամուտութիւնը անմխտելի են, բայց որ Պերլինի պատուիրակութեան անվիճելի կերպով միակ իրապէս «ղիւանագէտ» միտքն էր, ինչպէս կ'երեւայ՝ ըստ իս՝ նոյն իսկ Փափագեանի յիշած կարգ մը մանրամասնութիւններէն) :

Արդ, կը հրաւիրեմ Պ. Չերազը, որ լոկ «քարտուղար» մըն էր Պերլինի հայ պատուիրակութեան մէջ, որպէս զի մտիկ ընէ իրական «պատուիրակ»ի մը պատմուածքին, պիտի տեսնուի որ Փափագեանի պատմած իրողութիւնները իմ մեկնութիւնս կը հաստատեն, հակառակ որ Փափագեանի քաղաքական բնութեամբ, անանձնական արձագանգ Օտտան-Վարժապետեան խմբակին ուղղութեան, իմ բնութեամբս չի համապատասխաներ. եւ ինչ որ կարեւորութիւն ունի այս տոքիւմանին մէջ, գրողին քաղաքական ուղղութիւնը չէ անշուշտ, այլ իրողութեանց անխարդախ պատկերացումը՝ անկողմնակալ վկայի մը կողմէն :

Երկու պատմիչներուն տարբերութիւնները նշանակելէ յետոյ, իմ եզրակացութիւնս պիտի ներկայացնեմ Պ. Չերազին եզրակացութեան իրրու պատասխան, — եթէ արդէն այդ մէկ ջանի հիմնական տարբերութիւնները որպիտի նշմարուին երկու պատմուածքներուն միջեւ, ինքնին չբաւեն պատասխաններուն լաւագոյնը համարուելու :

Ա . ՉՊԱՆԵԱՆ

Յ. Կ. L'Arménieի վերջին թուոյն մէջ Պ. Չերազ՝ Կոնիէի յօդուածին պատասխանելու համար՝ հրատարակած է յաւելուածական յօդուած մը, ուր սա խեղկատակ տողերը կը նշմարեմ .

«Պ. Չոպանեան կ'ապաստանի այս անգամ Պ. Կոնիէի վկայութեան ետեւ, որ Ման-Սթէֆանօի 16րդ յօդուածը կը նախընտրէ Պերլինի 61րդ յօդուածէն : Պ. Չոպանեան նախազուշտութիւնը ձեռք կ'առնէ մեզ վստահացնելու թէ այդ յօդուածին հրատարակումէն առաջ՝ չէր ճանչնար «Օտոն»ի փայլուն աշխատակիցը : Պ. Կոնիէն չէր ճանչնար, բայց կը ճանչնար Պ. Քիշեառը որ կը ճանչնայ Պ. Կոնիէն : Արդէն, Պ. Պետտի նախկին հրատարակումէն ի վեր (որ առանց հայերէն գիտնալու, «Մնահրտ»ի տեսութիւններուն ինքզինքը համախոհ հոչակեց), զիտենք թէ Պ. Չոպանեան բարեկամներ կը հաշուէ Բարիզեան մամլոյն մէջ եւ, հարկ եղած ասին, անոնց աջակցութեանը կը դիմէ : »

Այս չնչին մանրամասնութիւններով պիտի չզլաղէի եթէ անոնք չչեշտէին Պ. Չերազի ուղղատեսութեան մասին ունեցած կասկածներս : Պ. Չերազ որ կը կարծէ թէ Վիքթոր Պետտի նամակին «Մնահրտ»ի մէջ հրատարակումէն ի վեր միայն սկսած եմ բարեկամներ ունենալ Բարիզեան մամլոյն մէջ, զիտե որ այդ նամակէն շատ առաջ, աշխատակցած եմ Revue des Revuesին, Revue Blancheին, Mercure de Franceին, Société Nouvelleին, եւն, ու չորս գիրք հրատարակած եմ որոնց յաւաստանք գրած են Բլեմանսօ, Քիշեառ, Պետտա եւ Մնաթոյ Ֆրանս, այնպիսի շրջանի մը երբ Պ. Չերազի գոյութիւնն անգամ չէին գիտեր Բարիզի մէջ : Յետոյ, ի՞նչպէս Պ. Չերազ չ'ամչնար ենթադրել թէ Հայու մը հետ ունեցած վիճարանութեանս մէջ Ֆրանսացի հրատարակողի մը օգնութեանը կրնամ դիմել : Կոնիէն չէի ճանչնար իր յօդուածին հրատարակումէն առաջ, եւ Քիշեառը չէր կրնար իմ զազափարներս Կոնիէին հաղորդել, քանի որ արդէն Քիշեառը այդ խնդրոյն մէջ համակարծիք չէ ինծի եւ Կոնիէին (ինչ որ Պ. Չերազ նշմարած պիտի ըլլար եթէ «Օտոն»ին մէջ կարգացած ըլլար Քիշեառի հակառու յօդուածը՝ որ Կոնիէին յօդուածէն քիչ

յետոյ երևցաւ) : Ու վերջապէս, տարօրինակ չէ՞ որ հայկական խնդիրը փրանսոսացի մէջ արժարձելու նպատակ ունեցող լրացիւր մը մերներքին վէճերը փռէ օտարներուն առջեւ (փոխանակ ո եւ է հայերէն թերթի մը մէջ իր վիճարանական յօդուածները հրատարակելու) ու մանաւանդ զիմէ այսպիսի ճղճիմ ու ազեղ միջոցներու, որոնք զշուանք պիտի ներշնչեն այդ թերթը կարգացող ֆրանսացի հրապարակագիրներուն :

Ա. 2.

ՊԱՏՏՎԱՄԱՒՈՐԻ ԱՐ ՅՈՒՇԱՏԵՏՐԷՆ

— 25 Մայիս 1878. — Երէկ մինչդեռ խորհուրդ կ'ըլլար Օտեսան էֆէնտի տանը մէջ ազգին ներկայ խնդրոյն վրայ եւ աշխարհական ձեռնհաս անձի մ'ալ, որ հմուտ ըլլար նաեւ քաղաքականութեան, Եւրոպա խրկուելուն հարկը կը ներկայանար, յանկարծ Ն. զիս առաջարկեց, որուն ձայնակցեցան Օտեսան, Եւրասէս պատրիարք եւ ապա Ս., ու անմիջապէս պատուիրեցին ինձ 24 ժամուան մէջ պատրաստել ու այսօրուան շոգենաւով մեկնել յՕտեսա եւ անկից ի Պերլին մասնաւոր հրահանգով :

Արդ այսօր որ է տօն Համբարձման կը ձգեմ Պոլիսը ժամը 3ին եւ «Ալեքսանդր» շոգենաւով կը մեկնիմ ի Սեւ Շով :

Պէշիքթաշի առաջէն անցած ժամանակս պահ մը կը զիտեմ Արքունի պալատը ուր այս միջոցին անհանգստութիւնը կը թագաւորէ. աչքիս առաջ կը լերեմ ազգիս վիճակը եւ կը յուզուիմ մօտալուտ եւ հաւանական փոփոխութեանց վրայ :

Բայց ինչ որ զիս աւելի կը վրդովէ, այն ալ Պոլսոյ անկայուն եւ խառնակ վիճակն է, սակայն կը յուսամ յԱստուած որ պիտի պահէ ամենքը :

— 27 Մայիս. — Այսօր ժամը 5ին Օտեսա կը հասնինք, ուր տաղակալի քննութիւնէ մը եւ երկարատեւ արձանագրութիւնէ մը յետոյ դուրս կ'ելնենք :

Օտեսա սիրուն եւ պայծառ քաղաք մ'է, բարեզարդ եւ վայելուչ. ընդարձակ եւ ծառազարդ փողոցներով. հրեայ եւ յոյն մեծատուններ բազմութիւն են. Հայերը 100 տունի չափ կան, որոց 80ը սափրիչ եւ 20ը այլեւայլ անեւտուրով կը զբաղին. սասոնց մէջն է քնիպպ Մանուկ որ իր ամարանոյք վացեր է :

Ժամը 9ին Օտեսան կը ձգեմ եւ 28 մայիս Եմէնքայի կայարանին մէջ երկու գաւաթ զարեջրով Ազգ. Մահմանադրութեան տարեդարձը սրբատառալից աչքով առանձինն տօնելէ յետոյ կը շարունակենք ճամբանիս եւ Աւստրիայէն

Գերմանիա անցնելով կ'ուզուինք զէպ ի Պերլին :

Գերմանիա մշակեալ եւ ֆայրիքներով լի երկիր մ'է. քաղաքակրթութիւնը հոն իւր բոյնը դրած է. ամէն կողմ սենսուած գործունեութիւնը, զեղեցկութիւնը, գիւղացւոց ծանրաբարոյութիւնը եւ կրթութիւնը կը ցուցնեն թէ մեծ ազգ մ'է Գերմանացին եւ արժանի է որ այսպիսի ազգ մը Միջերկրականի ալ իշխէ, ուրիշները հաւասարակշիւլու համար :

— 29 Մայիս. — Առաւօտեան ժամը 10ին հասայ ի Պերլին եւ Հօթէլ Տը Բօմ իջնելով, ձգեցի հոն գոյքերս եւ գացի փնտուել զՆարպէյ եւ միւսները :

Ճամբան հանդիպեցայ հսկայ կոթողի մը սը հրապարակի մը մէջտեղ կառուցուած էր. քառակուսի պատուանդանի մը վրայ, սօժաքիէ շինուած. վրան պղնձէ պատկերներ կային կայսեր, մարաջախաներու, զօրապետներու եւլն : Երանի տուի այս ազգին որ այսքան պարծանի արժանի անձեր ունի եւ երանի նաեւ այն անձերուն որոնք իրենց յարգը ճանչցող ազգի մը զաւակներն են :

Հօթէլ Ս. Բեթերսպուրկ եւ Հօթէլ տէ Բրէնա աչքէ անցուցի զանկու. համար Նարպէյ սրբապանը :

— 1/13 Յուն. 78. — Երեկոյեան կրիմեան կէա Չերազի եւ Տ. Պ. ի հետ. կրիմեան երկրորդ յարկը իջաւ, իսկ մեացեալներս երրորդ յարկը :

Կրիմեան երկար բալթօ մը հագած է եւ երկար զլխարկ դրած. սեզանին վրայ կրիմեան ըսաւ «Կրիմեան, Փափաղեան եւ Պերլին, շատ բան կը նշանակէ այս» — «Այո՛, ըսի, այս է որ պիտի զարմացնէ շատերը» :

— 2/14 Յուն. — Չերազի հետ երկար տեսութիւն մ'ըրի առաւօտեան. տապնապալի կենակցութիւն մ'ունեցեր է կրիմեանի հետ որ միշտ Պոլսոյ հրահանգներուն չհետեւելու եւ իր խելքին ու քիչ մ'ալ ուրիշներու անապու եւ նոյն իսկ երրեմն ալ հեղալու տրամադրութիւն ցոյց կուտայ եղեր, որոնց գէմ Չերազ գառնապէս ինձ յոյժ գանգատեցաւ. «Այժմ ըսաւ, ազգային գործը փրկուեցաւ (ըսել ուզեց գործին աշխատութիւնը) վասնզի ձեզի նման կենեմիս մէկը անոր ընկերացաւ եւ ես ի՞ սրտի տապնապներէս կ'ազատիմ» : Կրիմեացի զինքը եւ քաջալերեցի, վասնզի չափազանց բեկեալ գաայ կրիմեանէն, զգուշացուցի որ չըլլայ թէ դանի զայրացնելու բան մ'ընէ : Այժմ նա պիտի պայ թէ Չերազ ինձ հետ սեւ սութիւններ ըրած եւ շատ բան պատմած է. բայց ես ուրիշ կերպ պիտի վարուիմ, վասնզի ազգային այս մեծ խնդիրը երբեք անձնական նկատում չվերցնեմ :

Յետոյ կրիմեանի հետ տեսուեցայ երկարօրէն եւ նա բացատրեց ինձ՝ ըրած ձեռնարկները, Պիքոնսփիլիտի եւ Անդրիոյ թաղուհոյն չնեղկայանալուն պատճառները. ստաջինին փորձեր է, բայց երկրորդին՝ ոչ (Չերազ պատմած էր ինձ՝ լուեկայն պահելու պայմանաւ թէ

Պիքոնսֆիլտէն ընդունելու թիւն ինդրելու հա-
մար ինք խնդրագիր մատուցեր է . Կ . Փ . ալ իբ
կողմանէ նոյնը ըրեր եւ Կ . Յակոբեան ալ մի-
եւնոյնը , իբարու ետեւէ երեք հատ առանց
մէկմէկու գիտութեան . այդ ամբարտաւան
անձն ալ պատասխաներ է թէ Սուրբաբերի հեռ
տեսնուեր է , բաւական է :

Սրբմեան Պուսոյ դէմ գանդատեցաւ որ շատ
անգամ զինքը կաշկանդեր են եւ ազատ չեն
թողուցեր . գանդատեցաւ Չերազի դէմ ալ որ
յամառութիւն կ'ընէ եզեր միշտ եւ Անգղիոյ
մէջ աշխատող անձերուն սիրտը կը կոտրէ :

Ես ջանացի համոզել զինքը թէ Չերազի դէմ
այնքան վշտանալու տեղի չկայ , զի առաւօ-
տուն մեծ գովեստով խօսեցաւ իւր վրայ եւ իւր
բնած ընթացքին վրայ ու միայն գանդատե-
ցաւ թարգմաններուն դէմ :

Սրբմեան կասկած յայտնեց հարեւանցի կիր-
պով թէ Պուսոյ մէջ ալ իւր վրայ տարբեր կը
խորհին եւ այն . անմիջապէս յայտարարեցի
թէ , ամենեւին երբեք , մեծապէս գոհ եւ շնոր-
հակալ են իրմէ , միայն թէ ունեցած թարգ-
մաններուն համար վշտացան որոնց պատճա-
ռաւ այն քանի մը անպատեհութիւնները տեղի
ունեցած են . (Չերազ կ'ընէ թէ ամբողջ ա'իս
մը կորուսինք յԱնգղիա եւ թէ Չասկի պատ-
ճառաւ ալ Սրբմեան 'ի Մանչէսթր կորոյս պա-
տարագի համար) : Սրբմեան բացատրեց այդ
մտքը եւ ես խոհեմութեան համար իբառունք
տուի իրեն եւ գոցեցի ինդիրը աւելցնելով
թէ աստ պէտք է աշխատինք բոլոր յոյսերուն
իրականացման եւ աշխատութիւններուն պսակ
դնելու համար :

Կազմուելուցաւ Սրբմեան եւ մանաւանդ
Չերազի դէմ առջի երեկոյան խոսող վար-
մունքը քիչ մը փոխեց :

Սիկարի վրայ առած տեղեկութեանց
նկատմամբ , Պուսոյ վերջնական որոշումը
եւ հրահանգը փաստ բռնելով , Սրբմեանի
հաւանութեամբ գրեցի առ *** ի Բարիզ որ
անհնար է պատգամաւորներուն հետեւել ա-
նոր եւ թէ ինք հոգայ զանի ուրիշ տեղ պա-
րապեցնել :

— Չերազ գնաց Պուշին տեսութիւն խնդ-
րելու համար որ վաղը ժամը 4ին որոշուեր է :

— Երեկոյնի Նարպէյ հասաւ ի Պերլին :

Գիշերը ժողովուեցանք եւ Նարպէյ լսեց Սը-
րբմեանի եւ Մ * * * ի ձեռնարկութիւն-
ները եւ պատմութիւնները . առաջարկեց մի
նոր յիշատակագիր պատրաստել . ես ալ ոչպէս-
զի ի սկզբան ընդդիմութիւն ցոյց չտամ ,
իրեն յանձնել առաջարկեցի որ աշխատի այդ
մասին :

— Ե . Էֆէնտին եկաւ , որն որ նոր
նօթ մը բերաւ եւ քանի մը պատուէրներ
առաւ Սրբմեանի ու մեկնեցաւ :

— 3/15 Յուն . — Այս առաւօտ խել մ'որո-
շումներ հաղորդեր եւ կարգ մը պատուէրներ
ըրեր է Նարպէյ Չերազի որ վրաս եկաւ : Սը-
րատեցի զինքը չվրդովիլ եւ երկայնամիտ ըլ-

լալ վստահեցնելով թէ ամէն բան կը շտկուի :
Նարպէյի վրայ ինչ որ կը կարծուէր , ա-
ռաջնութեան գաղափար մը , արդարեւ տես-
նուել սկսաւ . բայց ես ի սկզբան չուզելով
թոյլ վարուել , եւ այդ ախար իւր նորաբողբոջ
վիճակին մէջ դարմանել ուղեւոր նախ ընդու-
նելութիւն խնդրելու համար պատրաստել
տուած գրերը մերժեցի եւ ձեռք փոխելով ստո-
րագրութիւնը Սրբմեանին վերադարձել տուի :

Ասոր վրայ Նարպէյ ըսաւ . «Եթէ այսպէս
երթանք մէկը շինէ եւ միւսը աւրէ , այն ասին
բան մ'ալ չենք կրնար ընել» . «Կը սխալիս ,
բախ , չեմ աւեր այլ կը շինեմ ու ետքի տեր-
ներուն առաջքը կ'առնեմ» :

Երկրորդ առիթով մը ծանուցի միանգամայն
թէ Չերազ ամէն տեսակցութեան ներկայ պէտք
է գտնուի , անոր համար որ Սրբմեանի թարգ-
մանն է եւ նախ Սրբմեան պիտի խօսի Չե-
րազի միջոցաւ եւ յետոյ ինքը (Նարպէյ) :

Ասկից զատ աւելցուցի թէ իւրաքանչիւր
ոք ինք պիտի գրէ իւր նամակները ի Պուլիս
եւ ոչ թէ ես կամ Չերազ գրենք ու իրենք
ստորագրեն : Ամէն օր հարկ է նօթ առնել եւ
ղածները եւ տեղեկագրել ի Պուլիս : Չերազ պէտք
է գրէ այցելութիւնները եւ անոնց մանրա-
մասնութիւնները . Սրբմեան եւ Նարպէյ գրե-
լու են իրենց պատասխանատուութեան մասերը ,
խկ եւ , իմ պաշտօնիս բերմամբ , գործոյն վի-
ճակը :

Յետոյ խօսք բացուելով ընդհանուր խըն-
դիրներու վրայ , ըսի թէ բողոքական եւ հը-
նովմէական Հայերն ալ Հայ են եւ կրնան
Հայկական վարչութեան մէջ պաշտօն ունե-
նալ . Նարպէյ մերժեց եւ «Եթէ այդպէս պիտի
ըլլայ , ես այժմէն զործ չունիմ» , կը հրաժա-
րիմ , ըսաւ , մանաւանդ որ Պուլիս այդպիսի
ունեցաւ մը ինձ տուած չէ :

«Տուած է» ըսի եւ ցոյց տուի կանոնագիրը
որուն մէջ կ'ընէ պաշտօնի կոնսուրեալ ազա-
տութիւն պիտի ըլլայ Հայաստանի մեջ : Ասոր
վրայ լռեց :

Յետոյ դուրս ելնելու միջոցին Նարպէյ Չե-
րազի սպանացեր է ձգել երթալ . Չերազ ինձ
լուր տուաւ զոր հանդարտեցուցի ըսելով թէ
«նա տեղ չերթար» :

— ատ ծանր եւ փափուկ դիրքի մը մէջ կը
գտնուինք , մէկը մէկ կողմ եւ միւսը միւս
կողմ կը քաշկոտէ եւ եթէ Պուլիսը այս բաները
չնախատեսելով երրորդ մ'ալ խրկելու գաղա-
փարը չունենար որ կապ մը պիտի ըլլար Սրբ-
մեանի եւ Նարպէյի մէջ , չգիտեմ թէ պատգա-
մաւորութեան ընթացքն ինչ պիտի ըլլար
եւ ազգը մինչեւ ո՛ր աստիճան օգուտ պիտի
կրնար քաղել անոնցմէ :

— Պուշի երթալու ժամը հասած ըլլալով
Նարպէյ մէջտեղ չկայ . Սրբմեան ուղեց սպա-
սել , իսկ ես պնդեցի որ ժամագրութիւնը
պահուի եւ Չերազի հետ ելան զացին : Յետոյ
Նարպէյ եկաւ եւ Սրբմեանի երթալը խմանալով
ինքն ալ երթալ ուղեց եւ գնաց :

Պուշի խրատը եղած է թէ՛ այժմ պաշտօնական
մարդ ընդունիրը շատ դժուար է եւ պիտի որ
պայտեն :

1/14 Յուն. — Այսօր աշխատեցանք պատրաս-
տելու համառօտ վիճակադիրն :

5/17 Յուն. — Յուզանօֆ եկաւ, Նարպէյ զուրս
է ելած . Սրբիմեան տեսնուեցաւ հետը եւ յետոյ
Նարպէյ եկաւ եւ անմիջապէս գնաց փոխադարձ
այցելութեան :

— Տեսարակներու մէկ մասը ցրուեցինք
Տ***ի ձեռօք եւ իմ առաջնորդութեամբ :

— Չերազ Պուշի գնաց եւ թղթերը յանձնեց :

— Պոլսէն հեռագիր եկաւ յանձնարարող թէ
Պր. քոնսֆիլիտի հետ տեսնուելու միջոցը գտնենք
եւ այս մասին զիմենք Մ. Ս. ին . այցել-
ւենք նաեւ մերիններուն (թուրք լիազօր պա-
տուիրակներուն) :

— 6/18 Յուն. — Մ. Ս. եկաւ , բաւական
տեսնուեցանք, խոստացաւ օգնել բայց գազանա-
բար :

— Սրբիմեան եւ Նարպէյ այցելեցին Պիւլովի
եւ Սատուլլահի . այս մասին ինձ խող մը խա-
ղացին որ պարզապէս անհամ էր եւ ամօթալի
արարք մը : Ա. Օ. ի եղբայրը ժամը 10ին եկաւ
ծանուցանելու համար թէ Սատուլլահ փաշա
այսօր զիբենք պիտի ընդունի , յետոյ ինձ ալ
ըսաւ որ եղբայրը ինձ կարեւոր բան մը պիտի
ըսէ , շուտ մը երթանք գանք . ես ալ ճամբայ
ելայ հետը եւ շատ մը թափառելէ յետոյ
արձարան մը մտանք ուր ձգեց զիս ըսելով թէ
«Հիմա կը վերադառնամ եղբօրս հետ» . ես քա-
տորդ ժամ մը սպասելէ յետոյ երբ տեսայ որ
մերիններուն մեկնելուն ժամը մօտեցած է ,
ելայ արձարանէն եւ զէպ ի տուն ուղղուեցայ .
ճամբան մոլորելով քիչ մ'ուշ մնացի եւ երբ
պանդոկ հասայ՝ տեսայ որ մեկնած էին :

Յետոյ միայն իմացայ թէ Ա. . . . զիս ձգելէ
յետոյ ուղղակի պանդոկ գացի եւ եղբօրը
կողմանէ ըսեր է թէ՛ թուրք զեսպանին ըսեն
որ հայ վալի մը կ'ուզեն վիլայեթի մը մէջ եւ
անով գոն կ'ըլլան որով Ռուսի Հայերն այ հոն
կուզան , եւ աւելցուցեր է թէ Նուպարի կար-
ծիքն ալ աս է :

Մերինները առանց խորը մտածելու թու թակի
պէս կրկներ են այս խօսքերը որուն Սատուլ-
լահ պատասխաներ է. «Եթէ ուղածնից վալի
մ'է , հիմայ կուտանք եւ հա գարձէք» սակայն
բարեբաղդաբար մերինները չեն մտցեր հին
նշանաբաննիս եւ աւելցուցեր են թէ եւրո-
պական երաշխաւորութիւն ալ կ'ուզեն , որուն
վրայ Սատուլլահ երեւը թիւեցուցեր է :

ՍՏԵՓԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ

(Շարունակելի)



ՄԱՀՄՈՒՏ ՓՈՇՍՅՈՒ ՓՍԽՈՒՍԱՐ

Սուլթանին քեռայրներէն միոյն , Մահմուտ
փաշային յանկարծական փախուստը ազնկա-
յոյզ դէպք մը եղաւ : Մեր բոլոր լրագիրները
այդ թատերական փախուստին մանրամաս-
նութիւնները հրատարակեցին , ու տեղեկու-
թիւն տուին Մահմուտ փաշայի քաղաքական
ձգտումներուն եւ դիտաւորութեանցը մասին :
Մահմուտ փաշային փախուստը Սուլթանին
ազդեցութիւնը կտորոզ, ապահովութիւնը խախ-
տող իրողութիւն մըն է , եւ եթէ իր որոշ-
մանցը մէջ ամուր ու տեսական մնայ Մահ-
մուտ , այս դէպքը կրնայ կարեւոր հետեւանք-
ներ ունենալ , եւ անշուշտ օգտակար հետե-
ւանքներ , — որովհետեւ ամէն ինչ որ
Սուլթան Համիտին ազդեցութիւնը կը տկա-
րացնէ եւ անոր դէմ ատելութիւնը եւ դժգո-
հութիւնը կը բազմապատկէ , օգտակար է : Մենք
կը թարգմանենք Մահմուտ փաշային հետ Բիէս
Ֆիլիստի ունեցած սեռակցութեանը մասին
«Յոտ» ինմէջ հրատարակած իր յօդուածին այն
կտորը , — ամենէն շահեկանը , — ուր Մահմուտ
կը պարզէ իր գանդատները թրքական արդի
նէժիմին նկատմամբ .

1. «Թուրքիոյ արդի նէժիմը անիմաստ եւ
անկապակից է . ոչ մահմուտական օրէնքին վրայ
է հիմնուած , ոչ ալ Արեւմուտքի օրէնքներուն
վրայ . առաջինէն ու վերջինէն փոխ կ'առնէ
ամէն ինչ որ անոնք կրնան ունենալ նեղիչ՝
վեհապետէն եւ զինք չըջապատողներէն զատ
ուրիշ ամէն անձերու համար :

2. «Պարզապէս թախար ու մոնկոլ վաչկա-
տուն ու աւարառու ջոկերուն գրութիւնն է , որ
հրէշային ժամանակավրէպով մը կը կիրարկուի
այնպիսի ժողովուրդներու որ աւելի բարձր
քաղաքակրթութիւն մը ունենալու կարող են
եւ այսպիսի կացութեան մը բարձունի չեն :

3. Վարչութիւնը յանձնուած է երեք կարգի
անձերու . մարմնով ու մտքով անկար ծերունինե-
րու որոնք իրից անբող ձեռքը հլու գործիքներ
են . սողաններու որոնք ու է կերպով ատակ
չեն կողմնակցութեան զխառնածին շնորհիւ ի-
րենց յանձնուած պաշտօնները կատարելու .
պարզ աւաղակներու , որոնք զիրք մը շինել
յաջողած են զողութեամբ , մասնութեամբ ,
սպանութեամբ , զրպարտութեամբ , — յաջողե-
լու այժմեան միակ միջոցները :

4. «Սուլթանին ետականութեանը համար շատ
կը պատշաճի այս ուժիմը . Ապտիւլ Համիտ ,
ձիշդ Լուի ժե. ին պէս , միմիայն իր անձը կը
հոգայ . իրմէ հետքը՝ ջրհեղձ՝ զը » :

Մահմուտ փաշա մտադիր է , կ'ըսէ ֆիլիստ .
իր այս դիտողութիւնները բաց նաճակի ձեւով
եւ բողական մտմունքին զրկել : Յետոյ պիտի հը-
րատարակէ իր ութ տարիէ ի վեր Սուլթանին
ներկայացուցած բողոքաւոր տեղեկագիրները :

ԻՄ ԲՈՒՆԱԿԱՆՈՒԹ

«Շարժում» լրագրին բարեգեան թղթակից «Վահագն» էն բացատրութիւն պահանջած էի այն երկու որոշ զրպարու թեանց մասին որով ինծի կը վերագրէր «Վ. Սուլթանին կենացը բաժակ պարպած ըլլալ», 2. Բարեգի օսման հան դեպանատան շուրջը սլքթալ»:

Դեպանատան շուրջը կատարած պտոյտներու համար «Շարժում»ին «Վահագն»ը իբրև ապացոյց կը յիշատակէ «Տաճիկին հետ գործ ունեցող»(!) անձեր որոնք զիս կը լրտեսեն եւ զիս, բայց անոնց անունը զազանի կը պահէ՝ քաղաքական պատճառներով (!) « Դիմակառուրուած զրպարտիչ մը, որ երեւակայուած լրտեսներ իրեն վկայութեան կը կոչէ, — ատի իր միամիտ վատութեանը մէջ աւելի զաւել տական է քան զզուելի, եւ ամէն բանէ առաջ իսկականապէս ապուշ: Տակաւին չկրցայ հասկնալ թէ ինչո՞ւ համար միշտ կը պտակիմ գեապանատան շուրջը եւ երբեք ներս չեմ մտնիր: Այս հեքիաթը եւ ոչ իսկ ճարտար ու կապակից հիւսուածքի մը արժանիքը ունի:

Դալով բաժակաճառիս խնդրոյն, «Շարժում»ի սքողեալ հերոսը սա աղերքը կը նուիրէ անոր՝ իբրև ապացոյց եւ բացատրութիւն. «Միթէ միեւնոյն Չօպանեանը չէ՞ որ որ ապից գրեթէ երեք տարի առաջ այսօր Սուլթանի հարէմին մէջ տափացող թիւրքերու հետ իր հիանալի սուլթանաւոր բաժակաճառն այնքան լըրջութեամբ արտասանեց. : Չօպանեանի այդ արարքը, որ իր թրքամոլութիւնը ցոյց կուտայ, հրատարակուած է ժամանակին «Մէշլէրէթ»ին մէջ: »

Այս տարտամ տողերուն տեղ ուր զրպարտութիւնը կը կրկնուի առանց ապացուցուելու, շատ աւելի բնական եւ համոզիչ, նոյն իսկ ջախջախիչ պիտի չըլլա՞ր պարզապէս այդ համբաւաւոր բաժակաճառս՝ «Մէշլէրէթ»էն թարգմանել եւ հրատարակել «Շարժում»ին մէջ: Իմ այդ «Թրքամոլ ու սուլթանապէր» ճառիս հրատարակուելովը, ամբողջ հայ հասարակութիւնը պիտի ըմբռնէր ի՞նչ մոլեռանդ Տաճիկ մը ըլլալս, եւ խնդիրը վերջնապէս պիտի փակուէր:

Բանի որ «Վահագն» գիմակին ետեւ պահուրուած ֆեդային այս պարզ զաղափարը չէ կըրցած ունենալ, ես պիտի փութամ իրեն օգնութեան հասնել: Ահաւասիկ, բոտ առ բոտ բաժակաճառիս թարգմանութիւնը:

«Պարուններ»

«Այս իրիկուն մենք հաւաքուած ենք յարգանք ընծայելու համար Տաճիկաստանը արգարութեան սեփմով մը օժտելու ճգտող ջանքի մը. եւ ես, Հայ, հաճոյքով կուգամ ծափահարել

թուական մը որ քայլ մըն է զէպ ի ազատութիւն:

«Միգհատի Եանմանագրութիւնը կրնայ քննադատելի կողմեր ունենալ, եւ արդէն քննադատուած է եւրոպացի գիտուններէ: Այն այլազան ազգութիւնները որոնք օսմանեան պետութեան ընդարձակ եւ երկնեարանգ ամբողջութիւնը կը ձեւացնեն, պիտի թերեւս փափաքէին զայն տեսնել աւելի ճկունցած, աւելի բնդլայնուած, որպէսզի կարենար ներգաչուակութեան մը փոխարկել ինչ որ այսօր ուրիշ բան չէ բայց եթէ անկերպարան եւ գծնեանսիլ խառնակութիւն մը: Բայց այդ Սահմանագրութիւնը բարոյական յաղթանակ մը եղած է հին բանապետական սեփմին գէմ տարուած, եւ ամէն ոք պարտաւոր է յարգանքով խոնարհիլ զէպ ի Ազատութիւն կրկնցող ժեսթի մը առջեւ: Հայերը որ առաջիններէն եղան բողոքելու, եւ սուղի նստող յանդգնութեամբ մը, Սուլթանին բարբարոս բռնաւորութեանը զէմ, շատ բնական է որ մասնակցին այդ յարգանքին:

«Ու յետոյ, այս երեկոյթը հանդիսաւոր ցոյց մըն է, ոչ միայն սօնելու համար Սահմանագրութիւնը, այլ միանգամայն անիծելու համար մեր ամենուս թշնամին, Սուլթանը: Ան երգմնազանց մըն է եւ մարդասպան մըն է՝ իր պետութեանը կործանիչն է, եւ Հայոց գահիճն է: Ուրեմն այստեղ մենք համանոյն աւելութեան եղբայրութիւնը ունինք: Եւ ունինք նաեւ աքսորին եղբայրութիւնը: Սօի կը բաւէ որպէսզի ամենքս ալ, զաւկըներ տարբեր ցեղերու որոնք սակայն ամենքն ալ միեւնոյն թշնամիէն հալածուած են, այս իրիկուն իրարու ձեռք տանք՝ ներկային արհաւիրքները վայրկեան մը մոռնալու եւ լաւադոյն աւպագայի մը յուսալու համար:

«Կը խմեմ Արգարութեան եւ Եղբայրութեան:» (*)

Ահաւասիկ իմ «սուլթանապէր ու Թրքամոլ» ճառս:

Եւ անա ինչպէս կը գրուի պատմութիւնը մեր մէջ:

Ու այս հրէշային խեղաթիւրումը, այս պարզ անամօթ ստուութիւնը կը հրատարակուի թերթի մը մէջ, որ ինքնին աննշան եւ ողբալի, նշանակութիւն ունի սակայն իբրև յեղափոխական կուսակցութեան մը անպաշտօն օսկանը: Գտնինելի բան մը չէ՞ որ լրագրական գործունէութեան մէջ պաշտօնակցի մը զէմ այսպիսի սնրբարոյական զէնքեր գործածող մարդիկ ու եւ

(*) Մէշլէրէթ, 1 յունուար 1897:


է դեր կարենան ունենալ ազգի մը ճակատաբեր վճռելու կոչուած կուսակցութեան մը մէջ. եւ բնականաբար միմիայն այս տեսակէտն է որ զիս կը մղէ այս խնդրովն զբաղելու ճանճրոյթը յանձն առնել, որովհետեւ ինքնին, զրպարտութիւնը այնքան անհեթեթիկ է անյարբիր է որ իր ծիծաղելիութիւնը կը բաւէ զայն սպաննելու:

Իսկ թէ ի՞նչ էր այդ երեկոյթը, եւ կամ թէ ինչո՞ւ վազի հոն, կը կարծեմ թէ, — վերջացնելու համար այս խնդիրը — անօգուտ չէ երկու բառով բացատրել:

Այդ հացկերոյթէն շատ առաջ ճանչցած էի Ահմէտ Րիզան. զինքը ճանչնալէ առաջ, Պ. Բլէմանսօ անոր մասին ամենամեծ յարգանքով խօսած էր ինծի. եւ իրօք Րիզային մէջ զտայ պարկեշտ մարդ մը, ու հզօր նկարագրով զազափարական մը. իմ գազափարներս ու ձրգտումներս իրեններէն շատ տարբերութիւն ունէին, եւ իրեն բացէ ի բաց ըսած էի առջի օրէն այն անկարելիութիւնը զոր ես կը տեսնէի Հայու մը իբր Երիտասարդ-Թուրք գործելուն մէջ. երբեք չընդունեցայ աշխատակցիլ իր «Մէշվերէթ»ին, հակառակ իր բազմապատկուած առաջարկութիւններուն (եւ զարմացայ երբ վերջերք Պ. Մինաս Չերազ իր թերթին մշտական աշխատակից դարձուց Պ. Անմեղեանը որ ինքզինքը Երիտասարդ-Թուրք կը հռչակէր եւ «Մէշվերէթ»ին կ'աշխատակցէր հայկական ինքնուրոյն քաղաքականութեան մը հետեւիլը խենթութիւն հռչակելու չափ առաջ երթալով. զարմացայ նմանապէս տեսնելով որ շատ մը հայ թերթեր, եւ «Շարժում»ն ալ անոնց հետ, զովեստով յիշատակեցին Անմեղեանի Լա Հէի գործունէութիւնը, մինչդեռ Անմեղեան Հայը Լա Հէ երթալով իբրեւ Երիտասարդ-Թուրք, ըստ իս գրեթէ տեսակ մը մատնութիւն կը գործէր հայկական դատին դէմ. եւ բոլորական հանրային կարծիքին այնպէս մը ցուցնել ձգտելով թէ Հայուն եւ Թուրքին դատը միեւնոյնն է): Սակայն, հակառակ իմ որոշապէս յայտնած ըլլալուս որ Երիտասարդ-Թուրք մը չեմ, երբ Պ. Ահմէտ Րիզա եւ Մուրատ-պէյ (որ այն միջոցին շատ յարգուած է անըստգիւտ պատուով մէկն էր եւ բոլորական կարծիքին առջեւ) ու իրենց երիտասարդ-թուրք միւս ընկերները հրաւիրեցին զիս իբրեւ հայ հրապարակագիր մը, մասնակցիլ ստրեղարձի տօնին Օսմանեան Ահմէտազրութեան (որուն հեղինակը եղած է Միգատին հետ, Գրիգոր Օսեան անունով Հայ մը զոր «Շարժում»ին ընթերցողները կը յուսամ թէ կը ճանչնան), այդ հրաւերը չընդունիլս ոչ միայն անքաղաքագիտական տիմարութիւն մը, այլ պարզապէս անիմաստ անքաղաքավարութիւն մը պիտի ըլլար. մանաւանդ որ լոկ Թուրքերու համախմբում մը չէր որ տեղի պիտի ունենար այդ իրիկունը. այնտեղ ինծի հետ ներկայ գտնուեցան վիթթու Պեռաս եւ Բիէն Բիյաւա, Բիէն Լաֆիթ ճանօթ ֆրանսացի

յրապաշտ խորհուրդ, Լէօտէ հրապարակագիրը, Տելպէ երեսփոխանը, Առօխիտէս Զոյնը, Հալիլ Կանէմ Սիրիացին, Էմին Ասլան Տրիւզը, Պորոսթիանի Հուճարացին: Այս պայմաններուն մէջ, նոյնիսկ անհրաժեշտ էր որ հայ ցեղը այնտեղ ու եւ ներկայացուցիչ մը ունենար, որ հոն ֆրանսական յարծիքին ներկայացուցիչներուն եւ օսմանեան պետութեան այդ բոլոր տարրերուն հաւաքմանը մէջ, իր բառը ըսէր իբրեւ Հայ: Ես ըսի իմ բառս, իբրեւ Հայ, առանց երբեք պաշտօնական ձեւ տալու խօսքերուս (քանի որ ու եւ կուսակցութեան չէի պատկանիր եւ այնտեղ կ'երթայի, անհատական նախաձեռնութեամբ մը, իբրեւ հայ հրապարակագիր), եւ առանց երբեք օսմանեան Սահմանազրութեան հաւանուող ու անոր վերահաստատմանը գործակից ինքզինքս հռչակելու: Ընդհակառակն, ես համարձակեցայ, զրեթէ թաքթի սահմանէն անդին անցնելով, զգացնել թէ այդ Սահմանազրութիւնը հետու էր կատարեալ ըլլալէ, եւ «այլազան ազգայնաբանաց ներդաշնակումը» բաղձալով, կը հասկցնէի որ այդ բոլոր ազգայնութեանց ինքնուրոյն կեանք մը ունենալով իրարու զաշնակցելուն մէջ կը տեսնէի ապագայ հաւասարակշռութիւնը: Ինձմէ յետոյ, Պ. Բիէն Բիյաւա, իմ ակնարկութիւնս քիչ մը աւելի ընդլայնելով եւ յստակելով, արտասանեց սա տողերը՝ «Կը խմեմ Ազատ Թուրքիային, այլազան հասարակութեանց զաշնակցական ինքնավարութեանը, որ պիտի երաշխաւորէ ամէն ցեղէ եւ ամէն կրօնքէ օսմանցի քաղքենիներուն անձնական ապահովութիւնը»: Բնականաբար, Թուրքերէ հրաւիրուած ըլլալով, Հայաստանին կենացը չէինք կրնար բաժակ պարպել, բայց Բիյաւաը ինչպէս ես, զգացուցինք, որչափ որ պատշաճ էր այդ շրջանակին մէջ, թէ Թուրքիան այն ստան միայն կրնար փրկուել իբր բոլոր ցեղերը մէկ բունաւոր տարրի մը ձեւքին տակ ձգտուելով ձուլուելու տեղ, բոլորն ալ իրենց ուրոյն կեանքն ունենալով իրարու հետ զաշնակցիլն առողջ ամբողջութիւն մը կազմելու համար: Իսկ, հիմա, աչքէ անցնելով «Մէշվերէթ»ի այդ թիւը, կը նշմարեմ որ տաս-տասերկու բանաստեղծներէն ոչ ոք այնքան մոլեգին բառեր գործածած է Սուլթանին անձին համար՝ որքան ես:

Ահա ասիլ իմ բաժակաճառիս պատմութիւնը :
 Ա. Զ.



LA LIGUE DES DROITS DE L'HOMME
ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

La Ligue des droits des l'Homme et du Citoyen (որուն զերբ այնքան կարևոր եղաւ Տրէյֆլուսեան խնդրոյն մէջ) Օտենքուոի ճիւղը որոշած է Ligueին կեդրոնական քոմիթէին ուշադրութիւնը հրաւիրել հայկական ջարդերուն խնդրոյն վրայ եւ գրգել զայն որ իր կարողութեան չափովը գործէ՝ այդ վայրագութեանց կրկնումը արգելելու համար :

Կեդրոնական քոմիթէին իր վերջին նիստերէն մէկուն մէջ նկատողութեան առաւ Օտենքուոի ճիւղին առաջարկութիւնը եւ ֆրանսական կառավարութեան ուղղեց իր ձ մը որով անկից կը խնդրէ իր բոլոր միջոցները ի գործ դնել Հայաստանի մէջ կոտորածներու կրկնումը արգելելու համար :

Բարիզի Հայոց Հայրենասիրական Ընկերակցութիւնը Ligueին նախագահ Պ. Լ. Թրարիէօին իր շնորհակալութիւնները յայտնեց նամակով մը, որուն թարգմանութիւնը կը հրատարակենք ստորև .

«Պարոն ,

«Շատ ուրախ եղանք իմանալով որ «Մարդուն ու քաղքենիին իրաւանց Նիզակակցութիւնը» հայկական խնդրով զբաղելու վեհոգի նախաձեռնութիւնն առած է , եւ կը փութանք մեր ջերմ երախտագրութեան զգացումները ձեզի յայտնել :

«Այն ահաւոր կացութիւնը որուն մէջ ինկած է հայ ժողովուրդը՝ թրքական բարբարոս անժիմին արգիւնքով , այն անհաւատալի վայրագութիւնները որոնք Հայաստանի մէջ գործուեցան , եւ հալածանքն ու ջարդերը որ զեռ կը շարունակեն այդ երկիրը աւերել , չէին կրնար անտարբեր թողուլ ասպետական զգացումներովը ծանօթ այս ֆրանսացի ժողովուրդը , եւ «Մարդուն ու քաղքենիին իրաւանց Նիզակակցութիւնը» , որ կեղեքեալներու պաշտպան Ֆրանսային գործօն խիղճը կը ներկայացնէ , իր ազնիւ ծրագրին աւելնէն հաւատարիմ որոշումը առած է հաւատակով թէ իրեն համար հարկ անհրաժեշտ է իր կրցածն ընել զարջելի կերպով հարստահարուած հայ ժողովրդին օգնութեան հաւանելու համար :

«Մեզի անձնարտանման պիտի թուէր որ Եւրոպայն , եւ մասնաւորապէս Ֆրանսան , մինչեւ ծայրը կատարուելը թողուր այդ ամբողջ ժողովուրդ մը ջնջելու վիթխարի ոճիրին , զոր Սուլթան Ապաիւլ-Համիտը , եւրոպական զիւլանագիտութեան անտարբերութիւնէն քաջա-

լիբուած , կրցաւ գործադրել մինչեւ հիմա բացարձակ պաշտութեամբ , հակառակ Հայերը պաշտպանելու համար Եւրոպայի սասանած հանդիսաւոր յանձնառութեանցը :

«Մարդուն եւ քաղքենիին իրաւանց Նիզակակցութիւնը» կրնայ թանկագին նպաստ մը բերել կեղեքեալ Հայութեան դատին : Կրնայ ճանչցնել Ֆրանսային , մանրամասնօրէն եւ իր ճշմարիտ գոյնովը , այն դարհուրելի կացութիւնը որ տակաւին կը տեւէ Հայաստանի մէջ եւ որ պիտի տեւէ մինչեւ որ Եւրոպան չորոշէ կորովի միջամտութեամբ մը վերջ դնել այս հրէշային իրաց վիճակին :

Բարիզի Հայոց Հայրենասիրական Ընկերակցութիւնը ինքզինքը «Մարդուն եւ քաղքենիին իրաւանց Նիզակակցութեան» արամազրութեանը կը դնէ՝ այս գործին մէջ անոր օգնելու համար , եւ կը խնդրէ , Պարոն , որ հաճիք ընդունել մեր յարգալից շնորհապարտութեան զգացումները :»

Ա. Տեկուպիտ Նախագահ
Ա . ՉՅՊԱՆԵԱՆ Յ . ԽՄԲԵՆՏԵՐ



ՍՈՒԼԹԱՆԻՆ ԴԱՏԸ

Մենք շատ կանուխէն յայտարարեցինք թէ Տրէյֆլուսի խնդրոյն առիթով արդարութեան եւ իրաւանց պաշտպանութեան համար կազմուած մտաւոր գումարտակը հարկաւորաբար հայկական խնդրոյն համար ալ օժանդակ ուժ մը պիտի դառնար : Այդպէս եղաւ : Ligue des droits de l'homme et du citoyenը , ինքնաբերաբար , նկատողութեան առաւ Հայաստանի ջարդերուն հարցը , եւ վստահ ենք թէ իր այդ պըղատոնական միջամտութիւնէն աւելին պիտի ընէ՝ եթէ մենք Հայերս գիտնանք մզել զինքը եւ աջակցել իրեն : Եւ միակ ֆրանսական լրբարգիբը որ Սուլթան Համիտին դէմ անընդհատական ու մուլեղին պայքար մը կը մղէ , — բան մը գոր ոչ մէկ ֆրանսական լրբարգիբ երբեք չէր ըրած , — «Օոսո»ն է , Տրէյֆլուսեան լրբարգիբը :

«Օոսո»ը միայն զազափարն ունեցաւ , Կա Հէի գեազանաժողովին ատեն , հայկական խնդրոյն վրայ մասնաւորապէս ֆրանսական կառավարութեան եւ ընդհանրապէս Դեպպանաժողովին ուշադրութիւնը հրաւիրելու : Եւ մեր ընթերցողները անշուշտ կարգացած եւ այդ լրբարգիբն մէջ այն զեղեցիկ յօդուածները , զոր հրատարակեց Իոսպէն Կոնիէ՝ Հայաստանի

վրայ, զայրոյթով լեցուն տողերը որով Մալաթիոն և Մանիէն Սուլթանին եղեռնական կառավարութեանը դէմ ձայն բարձրացուցին և մանաւանդ այն կորովի էջերու շարքը որով մեր ֆիյեաու բարեկամը, «Մեծ Մարգասպանը» ընդհանուր տիտղոսին տակ, Սուլթանն Համիտին հին ու նոր ոճի բնուրուն հաշուեցուցալը հրապարակեց՝ ամէն անգամ, իբրև յանկերգ, այդ Մեծ Դահիճին գլխուն վերև շողացնելով մեծ պատուհասին գաղափարը:

Արդ, Սուլթանն Համիտը չէ ախորժած «Օսոն»ին իր նկատմամբ գործածած ոճէն. և և որովհետև Ֆրանսայի մէջ օրէնք մը կայ որուն համեմատ օտար վեհապետները նախատող հըրապարակագիրներուն դէմ ֆրանսական կառավարութիւնը ստիպուած է դատ բանալ՝ եթէ այդ վեհապետները պահանջեն, այդ օրէնքէն օգտուելով՝ Սուլթանը պահանջած է որ Պ. Պ. Կոհիէ, ֆիյեաու և Մալաթիոն դատի կանչուին: Եւ այսպէս իւրպէն Կոհիէ, ֆիյեաու և Մալաթիոն կողմնադատ ատենին անջեւ պիտի ելլեն:

Միայն թէ այս դատը Սուլթանն Համիտին յուսացածէն սարբեր արդիւնք մը պիտի ունենայ: Համիտին հանդիսաւոր դատապարտութիւնը պիտի ըլլայ այս դատը, և հայկական խնդրոյն համար մեծազորք փոփականտի անդուդական առիթ մը:

«Այս դատը որ կը բազուի, կը գրէր Կոհիէ («Օսոն», 13 դեկտեմբեր) «Օսոն»ին դատը պիտի չըլլայ, այլ Ապտիւլ Համիտին դատը: Այն վայրագութիւնները, որոնց կատարութիւնը թոյլատրեց և բողոքական կառավարութեանց վատութիւնը, բայց որոնց մասին՝ բոլոր բեմերուն կատարէն բողոքեց պարկեշտ մարդոց զայրոյթը, այսպէսով երևան պիտի ելլին և ամէն տեղ հրապարակուին:»

Այս դատը պատմական զէպք մը պիտի մնայ. ֆրանսական ազատ մտածումը ներկայացնող մարդիկը պիտի դան աշտեղ մի առ մի թուել Համիտին բոլոր ոճի բնուրուն, և պիտի ազդակեն, ի լուր բովանդակ քաղաքակիրթ աշխարհին, իրենց զգուանքն ու սրտմտութիւնը Երլազը-Քէօզիի հրէշին նկատմամբ և այսպիսի դատի մը համար, որ քաղաքական կամ կուսակցական ամէն նկատումներէ վեր, «մարդկային» գոյն մը պիտի ստանայ, ամբողջ Ֆրանսան, — պահպանողական կամ ազատական — իր բոլոր կուսակցութիւններովն ու զայրոցներովը, վայրկեան մը իր պառակտումները պիտի մոռնայ և պիտի միաձայնի՝ յանուն քաղաքակիրթութեան Համիտին դէմ իր զայրոյթը գոտալու համար: Պահպանողական Ֆրանսային ամենէն կարեւոր ներկայացուցիչներէն մին, Բոլ տը Գասանեաք, այս դատին լուրը տարածուելէն անմիջապէս յետոյ

իր «Օթօնիթէ»ին մէջ կը գրէր հետեւեալը:

«Կառավարութիւնը «Օսոն»ին դէմ դատ կը բանայ Ապտիւլ-Համիտը «մարդասպան» կոչած ըլլալուն համար. և սոկայն գծուար է ուրիշ բառ մը գտնել եթէ մարդ ուղէ ճըլատօրէն որակել այն վագրը որ իր սարային խորէն՝ ուր վախէն կը քրաքնի, երկու հարիւր հազար քրիստոնեայ Հայեր պաղարիւնօրէն մեռցնել տուաւ: Մենք վերջիններէն չեղանք այս անսահման ոճի բը նշաւակելու... և բոլոր պարկեշտ մարդոց հետ, ինչ կուսակցութեան ալ որ պատկանին, զայրոյթով բողոքեցինք զիրենք քաղաքակիրթ կոչելու յաւակնող և բողոքական պետութեանց դէմ... Հիմա, ինչքան ալ մեծ ըլլայ անդունդը որ մեզ «Օսոն»էն բաժնէ, մեզի հաճելի է յայտարարել այն բարոյական համերաշխութիւնը որ մեզ կը միացընէ մեր պաշտօնակցին՝ արիւնթաթաւ ձեռքերով Սուլթանը անգամ մը և և նշաւակելու այս առիթին մէջ.» («Օթօնիթէ», 16 դեկտ.):

Դասին օրը դեռ որոշուած չէ: Գլխաւոր դերակատարը պիտի ըլլայ Բիւսֆիյետաը, որ Թուրքիոյ արշիկացութիւնը ամենէն մանրամասն և ամենէն ներքին կերպով գիտցող Ֆրանսայիներէն է. ամբաստանեալները իրենց իբր փաստաբան որոշած են Պ. Պ. Այպէն Բլեմանսօ և Վոնովին:

Սուլթանին պահանջումովը «Օսոն»ին դատի կանչուիլը քնական էր որ Հայոց վրայ պարտք գնէր հալածողներու համար հալածանքի ենթարկուող այս թերթին երախտագրութիւն յայտնելու: Մէկ քանի հայկական ուղերձներ հասան «Օսոն»ի խմբագրութեան, և փոփաքելի էր որ ալ աւելի բազմաթիւ ըլլային այդ արտայայտութիւնները:

«Անահիտ»ի տնօրէնը զրկեց «Օսոն»ի տնօրէն Պ. Վոկանին նամակ մը որմէ սա հատուածը հըրատարակուեցաւ:

«Կը շնորհաւորեմ ձեզ, պաշտն, որ ձեր լրագիրը, բոլոր կեղեքեալներուն օնկան, Երլազը-Քի վամփիոնին դէմ մզած իր կորովի պայքարովը՝ առիթ տուաւ այս թերագրիչ ու բարեբար դատին. ուր պիտի դատուի, Պատմութեան համար, Պոլսոյ մեծ Վաչէն:»

Բարեգի հայ ուսանողաց խումբ մը ուղերձ մը գրկած էր յոյս յայտնելով որ կեղեքեալներու պաշտպանները պիտի արհամարհեն ամէն հալածանք և պիտի շարունակեն իրենց զեղեցիկ գերը: Ուղերձ մը զրկուած էր Պըրուսիի Հայերու խումբէ մը: Հայ Յեղափոխական Միութեան Պոլսոյ մասնախումբը (մայմին մը որուն անունը սոսըին անգամ կ'իմանանք) Պ. Վոկանին զրկած էր հետեւեալ նամակը, զոր կը թարգմանենք «Օսոն»էն:

«Հայ Յեղափոխական Միութեան Կ. Պոլսոյ մասնախումբը պարտք կը համարի, յանուն հայ ժողովրդին, ձեզի իր երախտագրութեան

հաւատարմքը յայտնել՝ այն կորովի ու վեհանձն պայքարին համար զոր ձեր քաջարի լրագիրը կը մղէ Երևան-Քեօզկի հրէշին եւ զայն արտադրող բարբարոս սէփիմին դէմ:

«Այդ ազնիւ ձրանտային մէջ, որ մեզի համար միշտ երկիրն է ազատութեան եւ արգարութեան, մեզի կազդուրիչ է տեանել լրագիր մը անկախ եւ անվեհեր, որ պատմութեան քիչ-նոյն վրայ կը դասէ հակամարդկային բոլոր անիրաւութիւնները, բոլոր ոճիրները եւ ո՞ր ոճիր եղաւ երբեք աւելի հսկայականօրէն հրէշային քան երեք հարիւր հազար Հայու սպանումը եւ քան ամբողջ ցեղ մը ջնջելու այդ ծրագիրը զոր Սուլթան Ալպաիւլ Համիտ զեռ կը շարունակէ գործադրել:

«Խորխոռ ու ազնիւ պայքարը զոր ձեր լրագիրը կը մղէ թրքական ըստիմին՝ բնաւորութեանը դէմ, մեզ կ'ամբապնդէ մեր այնքան սխտրիմ որքան անհաւասար ու ցաւազին կուրին մէջ, եւ զորովալից յուզմունքով մըն է որ կը յայտնենք ձեզի, ինչպէս եւ ձեր հիանալի աշխատակիցներուն, Պ. Պ. Կոհիէին, Քիչեատին, Մալաթոյին, Մանիէ-էին, Բուտանէին եւ Քլեմանտոյին, մեր անսահման շնորհապարտութիւնը:»

Նմանապէս ժընեվի հայ ուսանողներն եւ ուսանողուհիները նամակ մը գրեցին էին Պ. Վուկանին, ինչպէս եւ «Գրօշակ»ի խմբագրութիւնը՝ որուն ուղերձէն մէկ քանի տող հրատարակած էր «Սոսո»ին մէջ:

«Անի» ընկերութիւնը անդործութեան մատնուած է: Տեղւոյս արդէն իսկ փոքրաթիւ Հայերը իրենց մէջէն մէկ քանի կարեւոր դէմքեր կորսնցնելու զժրագրութիւնն ունենալով մնացածները անհովիւ ոչխարներու հօտի մը պէս շուարած՝ իրենց ազգային առանձնայատուկութիւնները կամաց կամաց կորսնցնելու վիճակի մը մէջ կը գտնուին: Ի նկատի ունենալով այս ամենը, ստիպողական պահանջք կը ներկայանայ, միտեղ հաւաքել Պուքովինայի եւ շրջականերու մէջ գտնուած այն ամէն Հայերը որոնք ազգը իր այս աննախանձելի վիճակէն ազատելու կարողութիւնն եւ պարտականութիւնն ունին:»

Կը յուսանք որ Պուքովինայի Հայութիւնը անտարբեր պիտի չմնայ այս կոչին եւ «Անի» ընկերութիւնը պիտի վերակսի նորէն գործել: Ընկերութեան անդամ գրուելու համար պէտք է սկզբէն 2 ֆիորին վճարել եւ ամսական ամհնաքիչը՝ 50 քրայցըր: Հասցէ:

Armenischer Verein «Ani», Suczava



ԳՐՕՇԱԿԵԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ

«ԱՆԻ» ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Ընդունեցանք հրաւեր մը զոր ի դիմաց Սուլթանի Հայոց «Անի» ընկերութեան Պ. Պ. Վարդերես Բրուսզուլ, Գէորգ Թ. Հաճի, Կարապետ Կայնա, Աստուածատուր Բրուսզուլ, Աւետիս Բագրատունի, Օգոստինոս Թէոփորովիչ, կ'ուղղեն այդ ընկերութեան նախկին անդամներուն, որպէսզի ներկայ գտնուին 1899 զեկտեմբեր 19ին կատարուող ընդհանուր ժողովին եւ աջակցին այդ կազմալուծուած ընկերութիւնը վերակենդանացնելու:

«Յրը ամէն կողմ ազգութեան, լեզուի եւ ազգային սովորութեանց պահպանման համար սուր պայքար մը կը մղուի, կ'ըսեն այդ պարտնները իրենց սրտաշարժ հրաւերին մէջ, մեր միակ ընկերական հաստատութիւնն եղող

Նոյեմբեր 16ին, Տր. Պելք, գերման երկրախոյզը, էրզրումէն կը զրկէր «Ճրանքֆուրթըր Ձայթունկ»ին հեռագիր մը որով կ'իմացնէր թէ նոյ. 7ին հարիւրի չափ հայ յեղափոխականներ, առօական հրացաններով զինուած, առօթուրք սահմանադուրսը կ'անցնին, նպատակ ունենալով «հայկական թագաւորութիւն մը հիմնել Տալուրիկի բարձունքներուն վրայ»: բայց Ալաշկերտի մօտ Քիւրտերուն վրայ կը յարձակին, կը սպաննեն Տերովիչ ազա անուն քիւրտ պետը եւ ուրիշ Գիւրտեր, մինչեւ որ Ալաշկերտի քայմաքամը կը հասնի հեռեւակ զինուորներով եւ ստիկաններով, ութ ժամ կռիւ տեղի կ'ունենայ, երկու կողմէն բաւական մարդ կը մնանի, իրիկուան դէմ հեծելազօրքը կուգայ, եւ ատպատակները հարաւային լեռները կը փախչին. խումբին միւս մասը, սահմանադիտէն անդին՝ առօական գիւղի մը մէջ կը սպասէր յաջորդ օրուան. Քիւրտերը կ'ուղեն իրենց պետին մահուանը վը-

րէժը լուծել եւ Մենեթեփէ հայ գիւղին վրայ կը յարձակին բայց թուրք հեծելազօրքը զանոնք կը զսպէ» Պ. Պելք կ'աւելցնէ թէ այս դէպքին հետեւանքով, Էրզրումի մէջ շարդի սոսկալի լուրեր կը պարտին ճանկարի, Սեփեքանի, եւ ուրիշ հայ գիւղերու մասին. «բայց, կ'ըսէ, այս լուրերը շինծու են, կարգը ամէն տեղ կը պահպանուի. կառավարութիւնը եւ պինուորականութիւնը կատարեալ գովեստի արժանի են իրենց պարտականութիւնը հանգարտ եւ տղու կերպով կատարելուն համար.»

Պ. Պելք կը ծանուցանէ թէ Սեքօ (Սերօը խմբապետը որ դիթլիսի կուսակալութիւնը կը վարողէր Եօթ տարիէ ի վեր, ձերբակալուած է այդ յարձակման օրը՝ հայ գիւղացիներէն մատուցուելով:

Այս հետապիւրը կը ձգտէր թուրք կառավարութիւնը արգար, ազդեցիկ ու կանոնաւոր ցոյց տալու. եւ Հայերը՝ խոսովութեանց միակ պատճառ: Հեռագիրը այնքան միամիտնպատակաւորութիւն մը ունէր (հարիւր հոգևով հայկական թագաւորութիւն մը հիմնել, եւն), որ վայրկեան մը կարծեցինք թէ ապստամբներու արշաւանքը թուրք կառավարութեան կողմէ հնարուած բացարձակ սուտ մըն է՝ արդարացնելու համար կոտորած մը որ տեղի ունեցած ըլլալու էր այդ կողմերը եւ որուն լուրը զեռ գազտնի կը պահուէր:

Բայց հետեւեալ տողերը որ «Թան»ի Պոլսոյ թղթակիցը կը զրկէր գեկտեմբեր 6ի թուականով: ամէն տարւիցս փարատեցին. «Թան»ի Պոլսոյ թղթակիցը, վստահօրէն գիտենք, հետու է թրքամոլ մը ըլլալէ, եւ իր գրածին վերջին մասը կը յայտնէ իր անկեղծ ու սրբտաղին հայասիրութիւնը. կը թարգմանենք ամբողջութեամբ այդ նամակը.

«Փոքր Ասիոյ ներսերէն եկող սուրհանդակին բերած լուրերը որոշ մանրամասնութիւններ կուտան հայ-քրդական միջադէպներուն մասին որոնք նոյեմբեր 9ին տեղի ունեցած են: Այդ թուականին, Ռուսաստանէն եկող 120 գիւնուած Հայերու խումբ մը Ալաշկերտի գաւառակը մտած է եւ գէպ ի Ասաուր (Խայտուր) գիւղը ուղղուած է, թոփրաք-Քալէ ըսուած տեղւոյն մէջ: Այդ գիւղին եկեղեցւոյն մէջ բաւական ատեն պահուած մնացին: Իրիկուան դէմ, թուրք զինուորներ, ժանտառմներ եւ Բիւրտեր, իրենց գլուխն ունենալով տեղւոյն միւտիբը, եկեղեցին պաշարեցին եւ ստիպեցին Հայերը որ զէնքերնին յանձնեն եւ անձնատուր ըլլան: Հայերէն մին այս ստիպման պատասխանեց հրացանի հարուած մը քաշելով որ միւտիբը վայրկեանին սպաննեց: Այն

ատեն ընդհանուր յարձակման մը նշանը տարուեցաւ. բայց մութը կոխած ըլլալով, Հայերը յաջողեցան, պահ մը մոլեղնաբար կուտելէ յետոյ, սահմանագլուխը անցնելու կոտին արգիւնքը եղաւ 15 Հայ ու նոյնքան թուրք սպանուուած, եւ երկու Հայ կալանաւորուած:

«Այս միջադէպէն անմիջապէս յետոյ, վրէժնին լուծելու համար, Բիւրտերը պատրաստուեցան Հայերու ընդհանուր կոտորած մը սկսել: Շրջակայ հինգ գիւղերուն մէջ ցրուելով, թալանի տուին տուները, եւ 300 Հայէն աւելի, այր կին ու տղայ, ջարդեցին: Ա՛լ Հգիտենք թէ ո՛ւր կանգ պիտի առնէին, եթէ Պայազլտի մութեսարիֆը կանոնաւոր զօրքի գունդեր ղրկած չըլլար՝ այս կացութեան վերջ դնելու համար:

«Միւսնոյն ատեն, Պիթլիսի, Վանի եւ Մուշի վալիները հակցուցին Բիւրտերուն (Համիտիէ հեծելագունդերուն ինչպէս եւ ուրիշ ցեղերուն) որ եթէ հայ ժողովուրդը չարչրկին, Պոլսէն որոշ հրաման ընդունած կ'ն կանոնաւոր զօրքը իրենց դէմ քարեցնելու:

«Այս կորովի վարմունքը ազատեց այդ խղճ ժողովուրդը: Բայց արդէն անոր թշուառութիւնը այնքան մեծ է որ թերեւս մահը պիտի նախընտրէր ամէն բանէ եւ ջարդ մը անոնցմէ շատերուն համար ազատում մը եւ իրենց կրած արտասովոր տառապանքներուն վերջ մը պիտի ըլլար: Բառին բուն նշանակութեամբը՝ այդ խղճերը հաց չունին ուտելու, եւ որովհետեւ կառավարութիւնը հանդանակութիւն բանալու արտօնութիւն չի տար վախնալով որ այդ հանդանակութեանց արգիւնքը ուրիշ նպատակի կը ծառայէ, այսինքն յեղափոխական խումբեր կողմակերպելու, ատկից սա հետեւանքը յառաջ կուգայ որ այդ թշուառներուն ղդնութեան հասնիլ ուղղունը՝ միսիոնար կամ ուրիշ ո եւ է մարդ, ոչինչ կարող են ընել: Անցեալ չարաթ, Հայոց պատրիարքարանը 150 թրքական ոսկի զրկած էր չորս վիլայեթի մէջ բաժնուելու համար. բայց ատի ովկիանոսի մէջ կաթիլ մը ջուր ըսել է»

Ուրեմն, եղելութիւնը պարզ է հիմա մեզի համար: Ռուսական սահմանադիտին խումբ մը հայ յեղափոխականներ անցած են Տաճկահաստատան, ընդհարում ունեցած են թուրք զինուորներու եւ Բիւրտերու հետ, երկու կողմէն բաւական մարդ մեռած է, յետոյ Հայերը Ռուսաստան ապաստանած են, իսկ իրենց յարձակումին հետեւանքով 300 թրքահայ գիւղացիներ ջարդուած են, եւ շատ աւելի պիտի ջար-

գուէին եթէ թուրք կառավարութիւնը Գիւր-տերը զսպած չըլլար :

Այս դէպքը մեզ կը մղէ կարգ մը հարցումներ մէջտեղ գնելու :

Ո՞վ էին այդ հայ ազատամբները , ինչո՞ւ կատարեցին այդ արշաւանքը , եւ ինչպէս պէտք է մեկնել այն կէտը որ ուստական հողէն հայ ազատամբներ անարգել կը մտնեն Տաճկահայաստան , յարձակում կը գործեն , յետոյ կը դառնան ուստական հողը , ուստ ոստիկանութեան բարեացակամ անտարբերութեամբը հսկանաւորուած :

Ի՞նչ նպատակով : Ալաշկերտի մօտ Գիւրտերը հայ գիւղերուն վրա՞յ յարձակած էին , եւ Ռուսաստանէն եկող Հայերը Գիւրտերուն դէմ իրենց թրքահայ անդէն հայրենակիցները պաշտպանելու կը փութային : Ոչ : Ռուսաստանէն եկող Հայերուն յարձակումէն առաջ Գիւրտերը ո եւ է շարժու չէն գործած : Այդ սպառնալիները ուրեմն զոնէ կը մտածէին թէ Գիւրտերուն վրայ յարձակելով զանոնք ծանրապէս պիտի տկարացնէին եւ այլևս այդ կողմերու թրքահայ բնակչութիւնը կեղեքելու անկարող պիտի դարձնէին : Կարելի չէ այս նպատակը վերագրել իրենց , որովհետեւ հարիւր հոգիով չէ որ այդպիսի արգիւնքի մը կը համուէի , եւ իրականութեան մէջ տար ճիշդ հակառակը պատահած է (ինչպէս միշտ) , Գիւրտերը իրենցմէ քանի մը հոգի կորսնցուցած են , բայց այդ փոքրիկ կորուստէն ոչ միայն չեն տկարացած կամ ասրափած , այլ վրէժնին լուծելու համար այդ դէպքէն անմիջապէս յետոյ հայ գիւղերու վրայ յարձակած են եւ 300 հոգի ջարդած են :

Ո՞վ էին այդ արշաւողները : «Շարժում»ը փութաց յայտարարել թէ Դրօշակեան գործիչներ ըլլալու են անոնք : Եւ իրօք շատ հուշանական է որ Դրօշակեաններ ըլլան . այս արշաւանքներու գրութիւնը , որուն կը պարտինք ամբողջ վասպուրականի նահանգին աւերումը , «Դրօշակեան գրութիւն»ն է : Շատ կարելի է որ «Շարժում»էն յետոյ որ այս «Չարք յոտաջ բերող» արշաւանքը կը պանծացնէր իբրեւ զիւրացնական պայքար մը , «Դրօշակ»ն ալ վաղը փոխարէ , իր հինաւուրց սովորութեանը համեմատ , թէ Դաշնակցական բռնակը նոր յաղթանակ մը տարած է եւ թէ Սուլթանը իր գահին վրայ սասանեցաւ դարձեալ :

Այդ հայ անհատներուն համար որոնք սահմանազուխը անցեր են ու կեանքերնին վըտանդելով Գիւրտերուն վրայ նետուեր են , ուրիշ զգացում կարելի չէ ունենալ բաց ի յարգանքէ : Բայց խնդիրը բոլորովին կը փոխուի երբ ուզենք որակել Կովկաս կամ Ժընէվ գանուող

այն ուստանայ վարիչները որոնք այդ սպառնալիները Ալաշկերտ զրկելու որոշումը տուած են : Այդ սպառնալիներուն մէջ մէկը մանաւանդ Սերպը , արժանի է՝ անշուշտ՝ ոչ միայն յարգանքի , այլ հիացման : Այդ բաղէշցի Հայը նկարագիր մըն էր , ապստամբ ու անվախ հոգի մը , Բաֆֆիի Սարհատը իրականացնող տիպար մը : Թուրք կառավարութեան իսկ խտառովանութեամբ , եօթ տարիէ ի վեր այդ Հայը սպառնալի կեանք կը վարէր , սակնու վրայ կ'ընէր ամբողջ Պիթլիսի վիլայէթը , ու անձերբակալելի մնացած էր : Իր մահովը՝ ուժ մը կը պակսի մենէ , անհերքելի է : Բայց այն «գործելու զըբուլիւնը» , — Դրօշակեան գրութիւնը , — որուն նուիրուեցաւ այդ ուժը , զայն անտակ դարձուց ազգային դատին տալու այն նպատար զոր կարող էր բերել եթէ գործածուած ըլլար աւելի ուշիմ ծրագրի մը համեմատ , աւելի պատեհ շրջանակի մը մէջ : Հայ գիւղացիները մատներ են գինքը . եւ ասիկա ինքնին տխուր , տեղ գէպք մըն է . տխուր , բայց բնական . այդ խնդ ժարդիկը , իրենց պարզամիտ տըրամբանութեամբը , իրենց ապահովութեանը համար օլտախար նկատած են ձերբակալումը մարդու մը որուն անհատական քաջութիւնը ուրիշ արդիւնք չէր ունեցած բայց եթէ իրենց կեղեքիչներուն կատաղութիւնը տասնապատկել : (Իրեւմ որ այս մասին իմ մտածումս այս անվերապահ անկեղծութեամբ յայտնելուս համար , «Շարժում»ը պիտի յայտարարէ թէ Համիտը իմ հորաքրոջս սղան է եւ թէ արդէն ասեմով ես իմ մեծմայրս խողխողած եմ անոր միլիոնները շուտով ժառանգելու համար , բայց ատմք զիս չեն կրնար արդիւնել իմ ազգիս համար կենսական կարեւորութիւն ունեցող ինչորոյ մը վրայ իմ կարծիքս բացէ ի բաց յայտնելու պարտականութիւնս կատարելէ) :

Կըմնայ վերջապէս գիտնալ թէ ինչպէ՞ս պէտք է բացատրել ուստ ոստիկանութեան ներդրումն ընթացքը՝ այս արշաւանքին մէջ : Գիտենք որ սուսօթուրք սահմանազլիին վրայ շիւղ մը չի շարժիր առանց ուստ կառավարութեան գիւտութեանը . ուրեմն Ալաշկերտ գացող սպառնալիները ուստ կառավարութեան գիտակցութեամբը , — եւ հետեւաբար անպաշտօն հաւանութեամբը — կատարած են իրենց այդ արշաւանքը : Արդ , ուստ կառավարութիւնը , շատ դառնօրէն դիտենք , չունի հիմա այն գործելու մեթոտը զոր Պուլկարիոյ եւ Հայաստանին համար ունէր 77 ին . Հայերուն հանդէպ իր բռնած բարբարոս ընթացքը բաւական է , — բայց ի ուրիշ շատ մը փաստերէ , — ցոյց տալու թէ ուստ կառավարութիւնը ո՛ր է ձգտում ունենալէ հետեւ է հայ տարբին ինքնուրոյն գոյութիւնը երաշխաւորելու . ուրեմն Կովկասի յե-

զափոխական վարիչները որոնք այս արշաւանքը որոշած են, բնաւ վստահ չէին թէ իրենց այդ արշաւանքին հետեւանքով առական բանակը իսկոյն պիտի մտնէր Տաճկահայաստան եւ բարեկարգութիւնը պիտի հաստատէր այնտեղ ի նպատակ այս տարրին: Արշաւանքը տեղի ունեցաւ, 300 Հայ ջարդուեցաւ, եւ Ռուսը անշարժ մնաց, — ինչպէս որ ասկից առաջ տեղի ունեցած արշաւանքներուն ատենն ալ միեւնոյն անշարժութիւնը պահած էր: Վարկեան մը ենթադրենք թէ կովկասի յեղափոխական վարիչները այդ կարգի արշաւանքները կը կազմակերպեն մտածելով թէ Տաճկաստանի մէջ խոտովութիւններ ու արեւնհնդութիւն յառաջ գալով Անգլիան, Պրանսան կամ Գերմանիան կը մեջամտեն եւ Հայաստանը կը բարեկարգեն. սակայն այս երթագրութիւնը չի կրնար եւ ոչ իսկ բոպէ մը հոգի վրայ մնալ. այսօր ամենքս գիտենք, անցեալին ահաւոր փորձառութեամբը, թէ ո՛րքան ալ վիթխարի հրէշութիւններ պատահին Մեծ Հայաստանի մէջ, Անգլիան, Պրանսան կամ Գերմանիան եւ ոչ իսկ մասերնին պիտի չարժեն միջամտելու համար, որովհետեւ անկարող են այնտեղ զօրք զրկելու, եւ արդէն այդ ահագին զոհողութիւնը յանձն տանելու համար պէտք եղածին չափ շահ ալ չունին. քննակառակն Անգլիան նոյն իսկ որոշապէս ցոյց տուած է, նախկին արշաւանքներուն ատենը, իր հակառակութիւնը՝ աչքպիսի շարժումներու. եւ կովկասի յեղափոխական վարիչները այդ բանը շատ լաւ գիտին: Ուրեմն ի՞նչի վրայ հիմնուելով կամ ի՞նչ նպատակի դիմելով, ի՞նչ յուսալով այս կարգի արշաւանքներու որոշումը կը շարունակեն տալ: Չեմ գիտեր: Ի՞ժուար է ինչի համար բացառութիւն մը, մեկնութիւն մը գտնել:

Ինչ որ գիտեմ, ինչ որ դժուար չէ մեկնել, ռուս կառավարութեան ընթացքն է: Ռուս կառավարութիւնը կ'ուզէ ակարացնել հայ տարրը կովկասի եւ ամբողջ Փոքր Ասիոյ մէջ. կովկասի մէջ իր կալիցիներն ձեռքովը, ամենէն բոնաւորական միջոցները ձեռք առաւ. Հայուն ազգայնութիւնը փշրելու համար, իսկ Թրքահայաստանի մէջ, Ռուսը կ'ուզէ Հայը ջախջախել զայն մշտական բազմաման մէջ գնելով Գիւրտի ու Թուրքի հետ. եւ շատ հասկանալի է որ ռուս ոստիկանութիւնը թոյլատրէ Իրոչակեաններու անցքը ռուսութեան սահմանադրէն. Ռուսը կը բազմայ Մեծ Հայաստանը գրաւել եւ, նուիրապորժուած բանաձեւի մը համեմատ, կ'ուզէ ունենալ «Հայաստանը առանց Հայու». ուստի իրեն համար հաճելի է որ միշտ ընդհարումներ ըլլան Հայերու եւ Քիւրտերու միջեւ, ու (բնականաբար) Հայերը մեծաքանակ

ջարդուին, եւ հայ տարրը ակարանայ, մինչեւ այն օրը — որ չենք գիտեր, կրնայ դեռ անորոշ շարժէ յապաղել, — ուր իր բանակը մտցնէ գրաւելու համար Հայաստանը, եւ բոնի ռուսացնելու այնտեղ ողջ մնացած ոգևպառ հայութիւնը: Այս է ռուս կառավարութեան ակնհերեւ ծրագիրը: Ալաշկերտի այս արշաւանքը այդ «ռուսական» ծրագրին գործադրումներէն մէկն է: Մեզի համար ամենալի է մտածել որ կովկասի մէջ գտնուին Հայեր որոնք այս հայաջինջ ու զուտ ռուսական ծրագրին անդիտակից գործադրողներն ըլլան:

Ա. Զ.

Յ. Գ. Վերջին պահուն, Պոլսէն հետեւեալը կը տեղեկագրեն. «Այս օրերս Բ. Դուսը պաշտօնապէս հազարոց Պատրիարքարանին թէ Վանայ շրջակաները նոր ջարդեր տեղի ունեցեր են՝ պարսկական սահմանադրէն 50 զինուած հայ յեղափոխականներու Տաճկահայաստան անցնելուն հետեւանքով:



ԹՐԱՆՍՎԱՆ ԵՒ ԱՆԳՂԻՍ

Իրենց հոյակապ քաջութեամբը Պօէրները աշխարհի հիացումը կը գրաւեն այս վայրկեանիս. վիթխարի Անգլիան չարաչար պարտուեցաւ եւ դեռ հաւանական է որ պարտուի՝ այդ ափ մը որսորդ-աչարակապաններէն: Պօէրներուն յաջողութիւնը կը հիմնուի ոչ միայն իրենց քաջութեան վրայ, այլ եւ այն սքանչելի ճարպիկութեան որով կրցած են Անգլիան խաբել, գաղտնի գիտուել եւ պատրաստուել Անգլիոյ հետ բաղխումին որ ճակատագրական էր: Եանկեան կը կարծենք հրատարակել հատուած մը այն նամակէն զոր Պօէրներու սպարապետը, զօրավար Ժուպէն, զրկած էր վերջերս Եւրոպա գտնուող բարեկամի մը եւ որ երեւցաւ «էքօ տը Բառի» լրագրին մէջ:

Լեւոսթիթի տոջեւ, 27 հոկտեմբեր

... ձեռնարկ արշաւանքէն ի վեր, զոր յաջողապէս վանեցինք (յուլիւար 1896), մեր

կառավարութիւնը հաճողուած էր թէ Անգլիան, քիչ յարգելի տարրերէ մղուելով, ուշ կամ կանուխ պիտի պատերազմ հրատարակէր Պօէրներուն գէմ՝ զանոնք ջնջելու համար: Նմանապէս համոզուած էինք թէ այս վտանգին ուրիշ կերպով չէինք կրնար դիմադրել բայց եթէ մեծաքանակ սպառազինութիւնով, եւ գիտնալով հանդերձ թէ այդ պատերազմը խտտարար պիտի դատապարտուէր եւրոպական բոլոր ժողովուրդներէն, կը նախասեսէինք թէ անոնցմէ եւ ոչ մէկը պիտի լրջօրէն չմիջամտէր, որովհետեւ այնքան պիտի ազդուէին Անգլիոյ ազմկալից սպանալիքներէն եւ իր զարհուրելի նաւատորմին սպառազինումէն՝ որ եւրոպական ամենէն մեծ պետութիւնները պիտի չհամարձակէին ձայներնին բարձրացնել Անգլիացեաց ամէն բան գրաւելու սնյազ ծարաւին գէմ, նոյն իսկ եթէ իրենց սեփական շահերն ասկից վնասուելու ըլլային:

«Այս պայմաններուն մէջ, պէտք էր որ ամէն բանէ առաջ մեր ուժերուն վրայ յոյս դնէինք: Ընդպար դիտուելու եւ մեր սպառազինումը Անգլիացիներէն ծածուկ պահել, այս էր մեր նպատակը: Կրօլին յաջողեցանք:

«Յաճախ կը թողնէինք որ անգլիացի զազաւնի լրտեսները մեր գիտարանները մանեն, ուր հին թնդանօթներէ ուրիշ բան չկար, բայց խնամքով ծածուկ կը պահէինք մեր նոր ձեռով շինուած բոլոր գէնքերը, որոնց պոյութիւնը չզիտցան Անգլիացիները՝ մինչեւ պատերազմի պայթումին նախորդ իրիկունը:

«Անգլիացեաց թուոյ առաւելութեանը վրայ ձեր գնահատումները ինծի ծայրայեղ կ'երեւան: Մինչեւ զեկտեմբեր ամսոյն առաջին կէսը, Անգլիացիք 85000 հոգի միայն կրնան գումարել, որոնցմէ՝ այդ թուականին՝ անշուշտ պէտք պիտի ըլլայ զեղջել 10, 000 մարդ, մեռած, վիրաւորուած, գերի բնկած, կամ հիւանդ: Մնացած 75, 000էն պէտք է զեղջել ստուար մաս մը՝ հրաքներու ծառայութեան համար, այնպէս որ վճական գործողութեանց համար պիտի մնայ միայն 35, 000 մարդ:

«Աստուած վկայ, կ'ապահովցնեմ ձեզ որ մենք, Պօէրնէրս, Հարաւային Ափրիկէի մէջ անգլիական գերակշռութիւնը ջախջախել չէինք մտածեր: Ինչ որ կը բաղձանք, բուն իսկ մեր հայրենիքին անկախութիւնը պահպանելն է: Բայց եթէ պատերազմը շարունակէ, բոլոր Աֆրիքանաւորներուն անկախութեան

ողին պիտի արթննայ եւ պիտի փշրէ անգլիական գերիշխանութիւնը...»

Անգլիոյ լրտեսներուն քթին տակ, այսպէս՝ Պօէրները անագին պատրաստութիւններ գիւղած էին, պատերազմին պայթելէն առաջ: Տիրամիթին մաքսը զարհուրելի կերպով բարձրացնելով (Անգլիացիները կը կարծէին թէ Քրիւկէր նախագահը կը գրպանէ այդ գրամը) ատկից առաջ եկած բաւական խոշոր գումարներով Քոէօզօէն նոր մեթոտով բազմաթիւ թնդանօթներ բերել տուած էին, եւ երկրաւործական գործիքի սեղ մինչեւ թրանսվալ հասուցած, իւրաքանչիւր Պօէր ունի այսօր երկու հրացան եւ անհամար փամփուշտներ, գինուորական գազանի վարժութիւններ կը կատարէին Չանգիպարի կողմերը: Եւ Անգլիացիք չէին գիտեր այս ամենը, եւ մէկ Պօէր մասնիչ մը չէ գտնուեր, եւ Անգլիացիք որ իրերու կացութիւնը չգիտնալով, կը կարծէին երկու շաբաթէն ջախջախել այդ փոքրիկ ժողովուրդը, կորակօր կը պարտուին հիմա՝ իրենց տղիտութեանը, սխալ հաշիւներուն համար, ինչպէս եւ իրենց զօրապետներուն ասկիւարութեանը եւ իրենց վարձուած գինուորներուն խախուտ գիւցազնութեանը պատճառով: Այս բոլորին վրայ կը բաղձայինք որ հայ ժողովուրդը խրապէս խոկար, Պօէրները, մենէ շատ աւելի հզօր ու նպաստաւորուած, պէտք զգացին այդքան ճարտարութեամբ պատրաստիչ Անգլիոյ հետ պատերազմին, եւ մինչեւ այսօր իրենց ունեցած ընթացքին մէջ ցոյց տալին կարգապահութեան ոգի՝, գիւտնապիտական ճարտիկութիւն մը եւ լրջութիւն մը որոնք մեզի համար ամենէն զեղեցիկ դասը կրնան ըլլալ: Մենք կը բաղձանք որ այս օրինակը կարենայ ազդել մեր բոլորանգամ ժողովրդին վրայ, թէ՛ մեր յեղափոխականներուն՝ որպէսզի սորվին թէ ինչ կը նշանակէ պատրաստութիւն բառը, եւ թէ՛ մեր պահպանողականներուն՝ որպէսզի ըմբռնեն թէ ո՞՞ր է թեւերը ծալլած նստիլը երբ սնհրածեշտ է պատրաստիչ:



Հ Ա Ն Յ Ա Ն Ա Կ Ո Ր Ք Ի Թ Ն
Հ Ա Յ Բ Ա Ն Տ Ա Բ Կ Ե Ս Ա Ն Ե Բ Ո Ւ Ն Հ Ա Մ Ա Բ

Թերթը մամոյ տակ գնելու պահուն, ընդունեցանք կոչ մը, «Հայկական Միութեան Կ. Պոլսոյ քոմիթէ»էն, որ հայ ժողովրդին ուշադրութիւնը կը հրաւիրէ Պոլսոյ եւ գաւառներու բանտերուն մէջ հեծող հայ բանտարկեալներուն կայութեանը վրայ: Երկրորդ անգամն է այս առիթով, որ ինքզինքը «Հայկական Միութիւն» անուանող այս մարմինը իր գոյութիւնը կը յայտնէ, եւ զայ մանաւի է որ դորձելու սկիզբէ առաջ, այդ մարմինը իր ծնելուն պատճառը, իր ծրագիրը եւ ձգտումները հրատարակաւ բացատրած չըլլայ: Սպասելով աւտոր, մենք այդ անձանօթ մարմնոյն այս առաջին քայլը շատ աղնիւ ու շատ զեղեցիկ կը գտնենք. բոլոր տառապող Հայերուն մէջէն այս վայրկեանիս ամենէն դժբաղդները եւ ամենէն լքուածները, եւ ամենք որ ամենէն աւելի արժանի են օգնութեան ու փոփանքի, բանտարկուած Հայերն են՝ անտարակոյս, եւ ազդեցուցիչ, դայթակեցուցիչ բան մըն է որ մեր յեղափոխական մարմինները մինչեւ հիմա մտածած չըլլան — ինչ որ իրենց ամենէն բնական ու անհրաժեշտ պարտքն էր, — իրենց աջակցութիւնը հասցնել բանտարկուած Հայերուն: Կը հրատարակենք ահողջութեամբ այդ նամակը:

«Պարոն Խմբագրապետ»

«Պոլսոյ եւ գաւառներու բանտերէն ծայրայեղ թշուառութեան սրտածմլիկ լուրեր կը հասնին: Ազգին լաւագոյն բայց է՛ն դժբաղդ զաւակներն են որ կը հեծնն հոն զարհուրելի չարչարանքներով: Իրենց բարոյական ու ֆիզիքական տառապանքներուն կը միանայ նիւթական ողբալի վիճակ մը: Հիւանդ եւ անօթի, անոնք զանդաղ եւ ահաւոր մահուան մը ճամբան բռնած են, եւ մենք զիտենք որ անոնցմէ ոմանք մեռած են, լուս ու մուսնչ, բացարձակ մոռացութեան ու լքման մէջ:

«Ամօթ մըն է որ մինչեւ հիմա Հայ ժողովուրդը, անհասական կամ հաւաքական նախաձեռնութեամբ, գաղափարը ունեցած չըլլայ օգնութեան հասնելու մեր այդ դժբաղդ եղբայրներուն սրտնք ամէն բան զոհած են յազութանակին համար նպատակին որ ամենուս իտէալն է:

«Հայ ժողովուրդը իր բանտարկեալներուն տառապանքը կը բազմապատկէ՝ իր անտարբերութեամբը զանոնք անօթի ու մերկ թողլով, իր աննպութեամբը անոնց տալով ազգէն լքուած ու մոռցուած բլլալու ցտը: որ ան-

շուշտ աւելի զանն է իրենց սրտին քան նիւթական տանջանքները զոր կը կրեն:

«Աններկի է որ այս անտարբերութիւնը տեսէ ալիւս:

«Հայկական Միութիւն»ը իրեն նուիրական պարտք կը համարի կոչում ընել բովանդակ Հայութեան՝ օգնութեան հասնելու մեր քանտարկեալ ընկերներուն որոնցմէ մէկէ աւելին անբաւական սնունդի հետեւանօք թոքախտի կնիթակայ ըլլալով, մահուան նախընթաց օրուան մէջ կը գտնուին, եւ զբմում կ'ընէ Ձեր ազգասիրական զգացումներուն, Պարոն Խմբագրապետ, որ հրատարակէք այս կոչը եւ Ձեր թերթին մէջ հանգանակութիւն մը բանաք ի նպատակ հայ բանտարկեալներուն:

«Հայկական Միութեան ինդրանքին վրայ՝ Բարիզաբնակ վաճառական Մեծ Յ. Իսքէնտէր, որ իր հայրենասիրական անկեղծ զգացումներովը հանրածանօթ է, հանեցաւ՝ իբր գունձապահ, ընդունել բոլոր նուիրատուութիւնները որոնք Եւրոպայի եւ Ամերիկայի հայ գաղթականութեանց կողմէն, ինչպէս նաեւ ուրիշ տեղերէ, պիտի զրկուին այդ նպատակով:

Հասցէ՝

M. J. ISKENDER
36, Rue de la Tour d'Auvergne.
(France) PARIS

«Հայկական Միութիւն»ը պիտի հրատարակաւ ծանուցանէ, մանրամասն հաշիւներով, հանգանակութեան ձեւացուցած գումարը եւ անոր ինչ կերպով իր նպատակին յատկացուելը: »

Բարիզի կամ ուրիշ քաղաքներու մ'ը բաւրեւամտերէն անոնք որ կը փախաքին մասնակցիլ այս հանգանակութեան, կրնան զրկել իրենց նուէրները «Անահիտ»ի հասցէին կամ ուղղակի Պ. Իսքէնտէրին:

«Անահիտ»ը կ'արձանագրուի 10 ֆրանք: Կը յուսանք որ Բարիզի հայ գաղթականութիւնը անտարբեր պիտի չմնայ այս սրտաշարժ հրաւերին: Մենք կ'առաջարկենք որ քաղաքիս հայ երիտասարդութիւնը այս նպատակով երկրորդ թատերական ներկայացում մը կազմակերպէ՝ առաջնորդութեամբ Պ. Պենլեանի, որ անշուշտ սիրայօժար պիտի նուիրէ իր աջակցութիւնը այս գաղափարին յաջողմանը:

Le Gérant: GEORGES WALINE
Paris. — Imp. V^o ALBOUY, 75, avenue d'Italie.

ԲԱՅՈՒԱԾ Է

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՆԱՀԻՑԻ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԵՇՐԱՆԻՆ ՀԱՄԱՐ

Կը յիշեցնենք եւ կը շեշտենք թե

ԱՆԱՀԻՑԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Կ Ա Ն Ի Ի Կ Է

ՕԳՆՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՈՐԲԻԿՆԵՐՈՒՆ

Ի նպատակ հայ որբիկներուն «Բազմավէպ»ը բացատրել պրակ մը կը հրատարակէ: Թերթին երկայնութիւնն է 42 հարեւորգամեր, լայնքը 20 հրդմ. Թերթը կը բաշխանայ 40 էջերէ, եւ ամէն մի էջ երեք լայն սիւնակներու բաժնուած է: Թուղթը հաստ, ողորկ, փայլուն ու շատ բնորոշ: Կը պարունակէ ժողովրդեան ուշագրաւ, հետաքրքրական եւ օգտակար յօդուածներ:

«Բազմավէպ»ի այս բացատրել լայնածաւալ մեծ թերթը կը հրատարակուի իբրեւ անդրանիկ «հայ պատկերազարդ թերթ» մը Illustration Arménienne, նման եւրոպական մեծ ազգաց շաբաթական պատկերազարդ թերթերու:

Կը տպուի մէկ քանի հազար եւ ատակը պիտի յատկացուի հայ որբանոցներուն:

Գինն է 250 ֆր. 1 րր. 50 սէնթ:

Այս ծանուցագրով կը հրաւիրենք մերազնեայ այն ամէն ազնիւ ու գթած անձնաւորութիւնները որ բաժանորդագրուելով այս բացատրել պրակին, համետ լուծայ մը բարեհաճին ձգելու հայ որբիկներու գանձանակին մէջ:

Բաժանորդագրաց անունն, եւ ով որ այս նպատակաւ որբիկներուն օգնութեան պիտի հասնի, հաւաքուած գումարը եւ որչափ պիտի յատկացուի իւրաքանչիւր որբանոցներու, պիտի տպուին «Բազմավէպ»ի պրակներուն մէջ:

Այս բացատրել թերթին մէջ կը տպուին նաեւ ծանուցումներ, մէկ տողի պիտի է 25 սանդիւմ փափաքողք փութան յղել իրենց ծանուցումները:

Մեր հասցէն է՝

RÉDACTION DE LA REVUE «PAZMAVEB»

S. Lazare, VENISE (ITALIE)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԵՆԻԹԻ

Յուսօք սրտի կը ծանուցանենք թէ այն շէնքը ուր «Հայրենիք»ը կը հրատարակուէր, անցեալ զիշեր հրոյ ճարակ եղաւ:

Վարչութիւնն կարելի եղածին չափ շուտով պիտի հրատարակէ թերթը:

Մեր բաժանորդները կրնան ազանով ըլլալ, զի «Հայրենիք»ը ապահովագրուած էր:

Մեր առժամեայ հասցէն է՝

The «Hayrenik» 458 3rd Ave., New-York
ՎԱՐՁ. «Հայրենիք»ի

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇՆԱՐԱՆ

Արեւելեան եւ ֆրանսական կերակուրներ
Աժան գիներով

RESTAURANT DE LA NOUVELLE SORBONNE

13 Rue de Cluny

Maison Torossian

Cuisine française et orientale

Հոյս տեսաւ

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԳԻՄԻ

ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐՈՒՈՅ ԱՌԱՋԻՆ ԳԻՐԲԸ

56 երես 16 պատկերով եւ երկու ֆուրտգով .

Երկու դրքի բաժանորդագինն է՝ 10 ֆրանք, մի գրքինը 5 ֆրանք:

Հասցէն՝

E. Lalayantz

Séminaire Nersissian

(Caucase)

RUSSIE

TIFLIS

«ԱՆԱՀԻՏ»Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Անահիտը պիտի հրատարակուի ամիսը մէկ անգամ . իւրաքանչիւր թիւ պիտի բաղկանայ 32 էջէ , եւ պիտի արժէ՝ ձեռքէ գնողներու համար 1 ֆրանք (Ֆրանսա) , 20 սէնդ (Ամերիկա) , 1 ֆր . 20 (օտար երկիրներ) :

Բաժանորդագիրն է տարեկան՝ 10 ֆրանք (Ֆրանսա) , 12 ֆրանք (օտար երկիրներ) , 5 րուպլի (Ռուսիա) , 2 սոլար (Ամերիկա) . Վեցամսեայ՝ 5 ֆրանք (Ֆրանսա) , 6 ֆրանք (օտար երկիրներ) , 2,50 րուպլի (Ռուսիա) , 1 սոլար (Ամերիկա) :

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԻՆԸ ԿԱՆԽԻԿ Է :

Ձեռագիրները ետ չեն դարձուիր .

Կ'ընդունուին ազգեր :

Նամակ , յօգուած եւ բաժանորդագիրն զրկել :

A. TCHOBANIAN

6 Place de l'Odéon

PARIS

«ԱՆԱՀԻՏ»Ի ԳՈՐԾԱԿԱԼ ՆԵՐԸ

ԹԻՖԼԻՍ

ՆՈՐ ՆԱԽԻՉԵՒԱՆ

ՊՈՒՔՐԷՇ

ԴԱՒՐԷԺ

ԳԱՀԻՐԷ

ՆԻՒՆՈՐՔ .

ԲՐՈՎԻՏԷՆՍ (Ամերիկա)

ԻՍԹ-ՈՒՅՈՒՆԸ (Մաս . , Ամերիկա)

ՈՒՍԹԸՐ . (Մաս . , Ամերիկա)

Պարոն Աղեքսանդր Թարխանեանց

» Միհրան Թիթէլեան (Վարանէժ)

» Արիս Լազար

» Տր . Կ . Փաշաեան

» Աշոտ Սեդրաք

» Կատարեան

» Նազարէթ Թաթէոսեան

» Մանուկ Գալստեան

» Երուանդ Յակոբեան